ISSN 1829-264X



ՀԱՄԿԵՐ

մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք

Հովհ. Թումանյանի թանգարան

ՀԱՍԿԵՐ

մանկական գրականության և բանահյուսության
տարեգիրք

3





ԵՐԵՎԱՆ 2012–2013 YEREVAN

Տարեգիրքը հրատարակում է Հովհ. Թումանյանի թանգարանը՝
համագործակցությամբ Երևանի պետական համալսարանի

Նյութերը տպագրվում են Հովհ. Թումանյանի թանգարանի և
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
խորհուրդների երաշխավորությամբ

Շապիկին՝ Գաու Վոլդեմար «Աղջկա դիմանկար» (1847 թ.), ՀԱՊ:

Տարեգրքի անվանումը փոխառված է
«Հասկեր» (1905-1917, 1922) մանկական ամսագրից

Նվիրվում է մեծ երախտավորներ՝
Ստեփան և Կատարինե Լիսիցյանների հիշատակին

«ՀԱՍԿԵՐ» մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք
HASKER: A Yearbook of Children's Literature and Folklore
Հովհ. Թումանյանի թանգարան: Եր.: — 232 էջ:

«Հասկեր» տարեգիրքը նվիրված է մանկական գրականության և բանահյուսության ուսումնասիրությանը: Պարբերականն ունի գիտական, գեղարվեստական ու մատենագիտական բաժիններ: Գիտական բաժնում ընդգրկված են հոդվածներ ու սեղմ հաղորդումներ մանկական գրականության ու բանահյուսության տարբեր խնդիրների վերաբերյալ: Պարբերաբար վերահրատարակվում են հետազոտական առանձին կարևորություն ունեցող նյութեր: Գեղարվեստական բաժնում ներկայացված են մանկական գրականության բնագիր և թարգմանական փոքրածավալ ստեղծագործություններ, քիչ հայտնի թարգմանական նմուշներ՝ վերցված հնատիպ կամ հազվագյուտ հրատարակություններից:

ISSN 1829–264X

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԴԱՍԱԿԱՆ ԽՈՀԵՐ

ՀՈՒՇԻԿՔ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆՆԵՐ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ[1]
(տեսակային և կառուցվածքային առանձնահատկությունների համառոտ անդրադարձ)

Հայ մանկական բանահյուսությունը մեր բանարվեստի ամենահնչնատիպ տեսակներից մեկն է, որն առնչվում է որոշակի տարիքային խմբի՝ երեխաների հետ: Թերևս դժվար թե գտնվի մի անձնավորություն, որը կամա թե ակամա առնչված չլինի բանահյուսության այս տեսակի հետ: Մանկության ուղին անցած ամեն ոք ինքնաբերաբար դարձել է այդ ժառանգության կրողն ու նաև ուսուցանող–փոխանցողը:

Մանկական բանահյուսությունը բանարվեստի մյուս տեսակներից սահմանազատելիս անհրաժեշտ է ելակետ ընդունել նրա կենցաղավարման հանգամանքը: Ըստ այդմ էլ մանկական բանահյուսության մեջ պետք է ներառել միայն այն ստեղծագործությունները, որոնք կենցաղավարում են մանկաշխարհում: Դրանք են՝ հաշվերգերը, տաղատեսակ բառախաղերը, նմանողական խաղերգերն ու ծաղրերգերը, շուտասելուկները, բնության երևույթներին, լուսատուներին ու կենդանական աշխարհին նվիրված երգերը և այլն:

Մանկական բանահյուսության գոյատևման և կենցաղավարման հիմնական նախապայմանը նրա կիրառական արժեքի մեջ է, ինչն էլ դրսևորվում է

1 Մանկական բանահյուսությանը նվիրված սույն անդրադարձը մի մասն է եղել 1979–83 թթ. իբրև թեկնածուական ատենախոսություն պատրաստվող թեմայի, որը ինչ–ինչ պատճառներով ավարտի չի հասցվել: Երեք տասնամյակի ընթացքում՝ 1979–2009 թթ., անձամբ, ինչպես նաև իմ նախաձեռնությամբ հանրապետության տարբեր շրջանների մշակույթի աշխատողների, նաև ուսանողների, երբեմն էլ ուսուցիչների ու անհատ բանահավաքների միջոցով գրառվել են Հայաստանի և նրանից դուրս գտնվող հայաշատ վայրերի հազար միավորից ավել մանկական բանահյուսական ստեղծագործություններ: Սույն շարադրանքում օգտագործվել են մեր անձնական հավաքածուում պահպանվող նյութերը:

մեծամասամբ խաղի միջոցով: Խաղերը գալիս են վաղնջական ժամանակներից, որոնք դարեր շարունակ երեխայի կյանքի անբաժան ուղեկիցն են եղել՝ փոքր հասակից նրան մասնակից դարձնելով կոլեկտիվ կյանքին, մարդկային տարատեսակ փոխհարաբերություններին, հաղորդակից դարձնելով նաև դարերի ընթացքում ձեռք բերած կենսափորձին: Եվ քանի որ մանկական բանահյուսության, մանկական խաղերի ու խաղերգերի գերակշռող մասը երեխաները ժառանգել, ընդօրինակել են մեծերից, հետևաբար հայ մանկական բանահյուսության ուսումնասիրությունը նոր լույս կարող է սփռել մեր ժողովրդի պատմության, ազգագրության ու բանարվեստի մի շարք կողմերի վրա:

Մանկական խաղերը հաճախ ուղեկցվում են չափածո և արձակ բանահյուսական տարատեսակ տեքստերով:

Չափածո մանկական բանահյուսական ստեղծագործություններն են՝ հաշվերգերը, խաղերգերը, ծաղրերգերը, բնության, բնության զանազան երևույթներին, լուսատուներին, կենդանիներին նվիրված երգերը, վիճակի երգերը, ծիսական նմանողական երգերը և այլն:

Արձակ մանկական բանարվեստի հորինվածքներն են բոլոր տեսակի խոսքախաղերը, ծածկախաղերը, շուտասելուկների մի մասը, զայրախաղերը *(дразнилки — тпи.)* և այլն:

Ելնելով խաղի հետ մանկական բանահյուսական ստեղծագործությունների մեծ մասի սերտ առնչությունից դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի՝

1. Ֆիզիկական շարժում–խաղի հետ կապված մանկական բանարվեստի նմուշներ (խաղերգեր, հաշվերգեր և այլն).

2. Մտավոր խաղ–վարժություններին առնչվող հորինվածքներ (բառախաղեր, ծածկախաղեր, շուտասելուկներ և այլն).

3. Դրամատիկական խաղերի հետ կապված մանկական բանահյուսական ստեղծագործություններ (նմանողական ծիսական խաղերգեր, բնության երևույթներին, կենդանիներին ու լուսատուներին նվիրված երգեր և այլն):

4. Տարատեսակ փոխհարաբերություններին (անհատական, համայնքային, ազգային) առնչվող մանկական երգերը (ծաղրերգեր, կատակերգեր և այլն).

5. Մանկական նմանաձայնական երգերը (զանազան կենդանիների ու թռչունների ձայների նմանությամբ).

6. Մանուկների ուսուցմանն ու գրագիտությանը նպաստող տարատեսակ երգերը (այբբենախաղերը, թվախաղերը և այլն).

7. Խառնալեզու մանկական երգերը:

Առաջին երկու խմբերի խաղերին հատուկ է մրցակցության երևույթը. երեխաների համար խաղը վեր է ածվում ֆիզիկական և մտավոր ունակությունների ցուցադրման յուրատեսակ ստուգատես–մրցույթի:

Խաղի հետ սերտորեն կապված ամենակենսունակ և տարածված մանկական բանահյուսության տեսակը *հաշվերգն* է: Հաշվերգը մանկական խաղերի մեծ մասի կանոնակարգն ու կանոնագիրքն է, և երեխաները անտրտունջ ենթարկվում են իրենց իսկ ստեղծած խաղային օրենքներին:

Իր օգտագործման ձևով հաշվերգը ինչ–որ տեղ նման է վիճակի երգին: Երկուսի մեջ էլ բախտը բերել–չբերելու, վիճակն ընկնել–չընկնելու երևույթն է առկա: Իր կիրառական բնույթով ու վիճակ–արդարության նպատակով հաշվերգը նման է նաև *չոփ պահելու* և *գիր ու դուշ գցելու* գործողությանը: Սակայն պետք է նկատել, որ խաղի ընթացքում թե՛ հաշվերգի, թե՛ վիճակ հանելու տարատեսակ դրսևորումների կիրառումը դեռևս արդարացի, հավասարակշռող վճիռ–բաժանում չէ: Հաշվելու գործընթացի այդ հերթագայությանը հաջորդող ավարտը ինչ–որ տեղ նաև կապված է բախտ բերել–չբերելու, վիճակն ընկնել–չընկնելու հետ:

Մանկական բանահյուսության այս տեսակը նպատակ ունի արագացնել խաղի անցկացումը, այն դարձնել առավել կազմակերպված և հնարավորինս արդարացի: Հավասար և ազնվությունը երեխայի խաղի գլխավոր դատավորն է: Հաշվերգերի նպատակը ոչ թե բովանդակությամբ ինչ–որ բան արտահայտելն է (ինչը հատուկ է բանարվեստի մյուս ժանրերի ստեղծագործություններին), այլ առավ մեխանիկական գործողության՝ խաղը սկսելուց առաջ կամ նրա ընթացքում հաշվելու միջոցով վիճակահանություն կատա-

րելը, իսկ հաշվերգի խոսքերը արտաբերելիս ռիթմը և հանգը ծառայում են հենց այդ նպատակի իրագործմանը:

Նման դեպքերում հաշվերգի բովանդակությունը ետին պլան է մղվում, շատ դեպքերում էլ՝ ընդհանրապես անտեսվում, որն էլ հնարավորություն է ընձեռում մի շարք բառերի ու բառակապակցությունների այլափոխման՝ ընդհուպ մինչև իմաստազրկում.

1. Առ կուր, կեր կուր,
Էլա սարը զնգոկուր,
Անի, մանի, ջանի մանի,
Դապրագյուլի դե համ պուր: (Լոռի, Շամուտ, 1980 թ.)

2. Էկին, պեկին նակպյրո,
Տրոյի, սեմի նապայրո,
Իչկի, չակի դոռակի,
Նաս դա կոստ
Կալբաս, նամակ: (Շամշադին, 1982 թ.)

Իրենց սկզբնական վիճակում հաշվերգերը, երբեմն էլ որոշ խաղերգեր, պարունակելով որոշակի իմաստ արտահայտող բովանդակություն և փոխանցվելիս ուշադրության կենտրոն ունենալով նպատակը, իմաստազրկվում են: Պատճառներից մեկն էլ, թերևս, ասացող–փոխանցող տարրի՝ մտավոր և ֆիզիկական ունակությունների սահմանափակ լինելն է, ինչն էլ խանգարում է դրանց անաղարտ՝ սկզբնաղբյուրին հարազատ փոխանցմանը կամ էլ դրա իմաստալից այլ տարբերակների առաջացմանը:

Ինչ խոսք, ավանդական հաշվերգերը զուտ մանկական հորինվածքներ չեն եղել: Դրանք գալիս են խոր հնությունից և կապվում են մարդկության վաղ շրջանի մտածողության հետ, ըստ որի՝ որոշ առարկաների հաշվելն արգելված է եղել մի շարք ժողովուրդների, այդ թվում նաև հայերի մոտ: Վաղնջական ժամանակների հավատքի նմանատիպ դրսևորումների արձագանքները պահպանվել են թե՛ հայ, թե՛ այլ ժողովուրդների՝ ազգագրական և բանահյուսական տարատեսակ դրսևորումներն արտացոլող գրառումներում:

Թերևս հենց այդ երևույթն է եղել պատճառը, որ խաղը սկսելուց առաջ կամ էլ դրա ընթացքում հաշվելիս խաղը կանոնակարգողը թվերի փոխարեն բառային կառույցների մասնատված հատվածներն է ընդգծված արտաբերում: Ընդ որում, նման ձևով «հաշվելիս» թվերն արտաբերելու պես կարևորվում է նաև վանկատված հատվածների շեշտված և ռիթմիկ ասմունքը.

Ալա, բալա-նի՛-ցա՛,
Դո՛ւզ-կարա-նի՛-ցա՛,
Հեյ-գի՛դի-վա՛ն-չո,
Փա՛-լա՛ն-չո՛:

Հենց այս մասնատում–վանկատումներն էլ պատճառ են դառնում առանձին վանկեր երեխայի կողմից ընկալելու իբրև ինքնուրույն բառային միավորներ: Վերջիններս էլ, կատարման–փոխանցման գործընթացում չընկալվելով կամ չկարողանալով հնչյունները հստակ վերարտադրել, ունկնդիր երեխայի կողմից հարմարեցվում, փոխարինվում են իրենց կարծիքով առավել պարզ ու հասկանալի բառ–բառակապակցություններով, ինչն էլ հանգեցնում է հաշվերգային ամբողջ կառույցի իմաստազրկության: Դրանում համոզվելու համար վերցնենք ռուսական մանկական մի տարածում գտած հաշվերգ՝ գրառված Սուխումի հայկական դպրոցի հայ երեխաներից, 1981 թ., և տեսնենք, թե Հայաստանում տարածված այս հաշվերգի առաջին երկու–երեք տողերը տարբեր տարածաշրջանների մանուկների միջավայրում ի՞նչ տարբերակային փոփոխություններով են հանդես եկել.

1. Ցան, ցան, ցան,
Վիշել մալենկի պացան,
Զա պացանըմ կայիրան,
Սկոյլկը ստոիտ 200 գրամ … (Սուխում, 1981 թ.)

Ահա այդ հաշվերգի՝ մեր կողմից գրառած տարբերակները՝ 1. *վիշի մալը* իմա–ցան — Գորիս, գ. Հարճիս 2. Վիշի մանի կուպա–ցան — Հրազդան, գ. Քաղսի 3. *Վիշի–մալեն* կիպա–ցան — Անի, գ. Ջրափի 4. Վիշի մալի կուպա–ցան ա) Հրազդան, գ. Քաղսի բ) Արարատ, գ. Նոր Կյանք 5. *Վիշի* մալեն–կիպա–ցան–Թալին, գ. Բազմաբերդ, և Սևան, գ. Ջովաբեր 6. Վիշի մալի կիպա–ցան ա) Կրասնոսելսկ, գ. Մարտունի, բ) Ախուրյան, գ. Մարմաշեն գ) Սիսիան, գ. Բորիսովկա դ) Արագած, գ. Վարդաբլուր 7. Վիշի մալիկ ու պացան — Արարատ, գ. Նոր Կյանք 8. Ցան, ցան, ցան, //Մեր հավերը զարգացան// Կուտ ուտելը մոռացան ... ա) Կիրովական բ) Երևան 9. Թու, թու, թու, //Ցան, ցան, ցան, // Մեր հավերը զարգացան — Թալին, գ. Մաստարա և այլն:

Ինչպես տեսնում ենք, բերված օրինակներում միայն *Ցան* բառն է բոլոր տարբերակներում անաղարտ մնացել (թիվ 9–ում նույնիսկ այն անցել է երկրորդ տող), մնացածում լեզուն չիմանալու և վանկատման հետևանքով ակնառու փոփոխություններ են կատարվել՝ ետին պլան մղելով այլալեզու հաշվերգի իմաստային ընդգծված հաջորդականությունը: 3–4–րդ տողերի ստվերն անգամ չկա. դրանց փոխարինել են համահունչ և համառիթմ *Մեր հավերը զարգացան //Կուր ուրելը մոռացան* տողերը՝ տարատեսակ, երբեմն էլ՝ անկապ կցորդումներով.

Ցան, ցան, ցան,
Վիշի մալի կուպացան
Մեր հավերը զարգացան,
Կուր ուրելը մոռացան,
Գրել կարդալ իմացան,
Ոսկի մեդալ ստացան: (Արարատ, Նոր Կյանք)

Կամ՝

Ցան, ցան ...
Գնացին բաղնիք լողացան,

Էկան տունը չորացան,
Կտավկա, պուդրի, փազելի,
Օրիորդներին նազելի (ստր.՝ սազելի): (Ախուրյան, գ. Գոգհովիտ)

Նույն կերպ 1981 թ. Սուխումում հայ դպրոցականներից գրանցած (նաև ռուս և աբխազ երեխաների միջավայրում տարածված) ստորև բերվող հաշվերգը բազմաթիվ տարբերակներով տարածված է Հայաստանի ոչ միայն քաղաքաբնակ, այլև գյուղաբնակ (երբեմն էլ ամենահեռավոր՝ լեռնային գյուղերի) երեխաների միջավայրում.

Էկրա, բէկրա, չուկդա լի,
Աբըլ, ֆաբըլ դումանի,
Էկս, բէկս, բոււյա բուկս,
Մաաուլ ...

Թե ինչպես, ինչ ճանապարհով են այդ տարբերակները հայտնվել Հայաստանի, Արցախի կամ Ջավախքի հեռավոր բնակավայրերում, դժվար է պատասխանել: Բայց որ ամեն մի տարբերակ իր կենցաղավարող տեղավայրի կնիքն է կրում, դա ևս փաստ է.

1. Ուկրամ, բուկրամ, բուկրամ բեր,
Աբր, ֆաբր, կումաներ,
Իկի, միկի, գրամա չիկի,
Ի կլեր ներս: (Լոռի, Շամուտ, 80 թ.)

2. Էկրա, բէկրա, ճիկրա ա,
Աբուր, ֆաբուր, դումնա ա,
Իքի, բիքի, եռուն, դիքի,
Յունր, ֆանր, կոք: (Շիրակ, Ջաջուռ, 82 թ.)

3. Ակրը, մակրը, չուկրը մա,
Աթիլ, ֆաթիլ դուրմանա,
Իքիթ, բիքիթ, զամար բիքիթ,
Օն, ֆլեն, կլեն: (Աշտարակ, 80 թ.)

4. Բուղկա, բուղկա, բե, բե, բե,
Արեա, չաբեա, դումանե,
Իքի, բիքի, դրամա չօքի,
Էն, ֆլեն, կլեն: (Հրազդան, 80 թ.) և այլն:

5. Էկրը, մեկրը, չուկրը մե,
Արել, ֆաբել, դումընե,
Էքս, պեքս, պուրաֆու,
Նառլեպ: (Սևան, գ. Ջովաբեր, 83 թ.) և այլն:

6. Էկիրի, պեկիրի, չուկըրը մա,
Աբըլ, ֆաբըլ, դումանա,
Էքս, պեքս, պույյա պու
Նա … և այլն:

Հաշվերգերում բառերի մասնատում–վանկատումը խաղի ընթացքում իրականացնում է խաղը վարողը՝ հաշվերգն իրականացնողը, և երբեմն էլ նրանից է կախված լինում այս կամ այն անհատի կամ խմբի «ճակատագիրը»: Հատկապես հաշվերգի վերջնամասում որոշիչ դեր կարող է ունենալ խաղի մասնակիցների տրամադրությունը, վարողի սուբյեկտիվ, ինչ–որ տեղ նաև՝ «խորամանկ» մոտեցումը: Օրինակ, թիվ 5 հաշվերգի վերջին տողը կարող է արտաբերվել և՛ երկու վանկով (Իկլեր–ներս), և՛ երեք վանկով (Ի–կլեր–ներս):

Շատ դեպքում ավանդական տեքստի որևէ մասին փոխարինում են տարատեսակ երգերից, խաղիկներից ու այլալեզու բանահյուսական ստեղծագործություններից սինթեզված հատվածները: Երեխաները առանց նպատա-

կամղվածության տարբեր տեքստերի կամ նրանց առանձին մասերի մեխանիկական միացում են կատարում, ինչն էլ հանգեցնում է իմաստազրկության.

1. Անա, վանա, պապարիրա,
Միրա, վիրա, կոմպանիրա,
Չեամա զարա դոզի դարա,
Ում ուզում ես նրան էլ
Հերըսի դուրս պար քեզ ընկեր: (Լոռի, Շամուտ, 80 թ.)

2. Ակա բակա նիցա,
Դուրս կապա նիցա,
Էյ դիկի պանչո
Տաս կապիտանչո,
Փալանչո:
Կապիտան մի բան չի,
Գնա Մարոյին կանչի,
Մարոն գնաց բազար,
Ջեբը լիքը գազար,
Մի հատ ուզի չտվեց,
Քացով տվի, տնգվեց: (Սևան, գ. Ջովաբեր, 83 թ.)

Ընդ որում, այդ մեխանիկական կցումը կատարվում է.

ա) միալեզու մանկական բանարվեստի նմուշներից (հայերեն+հայերեն, ռուսերեն+ռուսերեն և այլն).

բ) Տարալեզու մանկական ստեղծագործություններից (ռուսերեն+հայերեն, թուրքերեն+ հայերեն և այլն):

Այդ մեխանիկական միացումը կատարվում է՝

ա) միևնույն տեսակի մանկական բանահյուսական ստեղծագործություններից (հաշվերգ+հաշվերգ, խաղերգ+խաղերգ).

…

բ) տարբեր ժանրի մանկական բանահյուսական նմուշներից (հաշվերգ+խաղերգ, հաշվերգ+բառախաղ, խաղերգ+բառախաղ և այլն):

Եվ կցման, և՛ իմաստազրկության երևույթը մանկական բանահյուսության ոչ բոլոր ժանրերին է հատուկ: Համեմատաբար կայուն կառուցվածք ունեն շուտասելուկները, բառախաղ–զայրախաղերը, հեքիաթի նախերգերը, վիճակի երգերը, բնության զանազան երևույթներին, լուսատուներին ու կենդանիներին նվիրված երգերը:

Թվում է, թե մանկական բանահյուսության ամենաանկայուն տեսակը հաշվերգերն ու խաղերգերն են, մասամբ նաև՝ ծաղրերգերը: Սակայն սրանց մեջ էլ կան այնպիսիները, որոնք մասնատում–վանկատմամբ հաշվերգի առաջադրած նպատակը պահպանելով հանդերձ, իրենց կառուցվածքով և խորքայնությամբ տարբերվում են մյուսներից.

— Ակրոն կերթա, կերթա, կերթա, ո՞ւր պիտի կայնի:
— Երևան:
— Երևանի լույսերը (տարբերակ՝ 1. աղջիկների շորերը 2. ամպերը 3. երկինքը և այլն) ի՞նչ գույն ունի:
— Կապույտ:
— Կապույտ գույն ունեցողը թող դուրս գա … և այլն (Կիրովական, 82 թ.):

Խաղում առկա նմանատիպ երկխոսությունները ստիպում են խաղի բոլոր մասնակիցներին ուշադրությամբ հետևելու խոսքային արտահայտությունների հերթականությանը: Նման ստեղծագործությունների նպատակը ոչ թե ռիթմիկ ու վանկատված հաշվարկումն է (իբրև հաշվերգ) կամ արտաբերելը (իբրև խաղերգ), այլ որոշակի խնդիր–հարցադրման և վիճակ–հաշվերգի օգնությամբ բաժանում կատարելը:

Երկխոսությամբ կառուցված այս մանկախաղը, հաշվերգի վերածված, դառնում է այլ մանկական խաղի բաղկացուցիչ մաս: Ինչ խոսք, այս կարգի հորինվածքները ևս զերծ չեն ոճա–արտահայտչական ու քերականական անհարթություններից:

Հաշվերգերից ու խաղերգերից շատերը երբեմն այն աստիճան են հեռացած լինում իրենց նախնական վիճակից, որ անհնար է լինում որոշել նույնիսկ նրանց լեզվական պատկանելությունը.

Էնիկը, բենիկը, լեմպա պոյ,
Շարբա, բարբա, էսմա սոյ,
Էոա, բեոա, կամպա զեոա, զեքս: (Լոռի, Շամուտ, 1980 թ.)

Եղեռնից հետո Հյուսիսային Կովկասում հանգրվանած հայ երեխաների խաղացանկ են թափանցել նաև ռուսական բանահյուսական նմուշներ՝ հենց ռուսերենով: Դրանցից մեկը շատ է տարածված եղել Մայկոպում.

У попа была собака,
Он ее любил,
Она крала кусок мясо,
Он ее убил,
Убил и закопал,
И песню напевал,
Что у попа была собака,
Он ее … (и т. д.)

Ըստ բանասացի՝ 1920–ականների վերջին Կրասնոդարում և Մայկոպում ռուս երեխաների հետ արտասանել և երգել են նաև հայ երեխաները, այն կիրառելով և՛ որպես խաղերգ, և՛ որպես հաշվերգ: Ապրելով օտար միջավայրում՝ հայ երեխաները առանց դժվարության յուրացնում են տեղաբնակ երեխաների և՛ լեզուն, և՛ բանարվեստը: Լեզվի հստակ իմացությունը նրանց հնարավորություն է տալիս մեծ մասամբ առանց այլափոխության ու խեղաթյուրման, վերարտադրել այլալեզու հորինվածքները: Վերոհիշյալ մանկական խաղերգ–հաշվերգի տարբերակները Աբխազիայում, Երևանում և Հոկտեմբերյանում (Արմավիր) հայ երեխաների միջավայրում շրջանառվում են արդեն հայերեն թարգմանությամբ.

Հացին ուներ մի շնիկ,
(Նա) Շնիկին շատ էր սիրում,
Երբ շնիկը մեծացավ,
Մի կտոր միս գողացավ,
Հացին շատ փիս զայրացավ,
Տվեց շանը սպանեց,
Իրենց բակում մի փոս փորեց,
Փոսի վրա քար դրեց,
Քարի վրա թուղթ դրեց,
Թղթի վրա այսպես գրեց.
«Հացին ուներ մի շնիկ,
Նա շնիկին շատ էր սիրում ...»: (և այսպես շարունակ)

Ինչ խոսք, չնայած նույն սյուժեն է, նույն կառուցվածքն ու նպատակը, սակայն, ինչպես տեսնում ենք, հայերեն տարբերակն ավելի ընդարձակ է, իսկ վերջաբանը՝ փոքր ինչ փոփոխված: Այնուամենայնիվ տեքստի անհարթությունից զգացվում է, որ առկա է ոչ վարպետ թարգմանության կնիքը:

Ի դեպ, երեխաները ոչ մի անգամ հաշվերգ տերմինը չեն գործածում (այն զուտ մասնագիտական բնորոշում է): Երբ խաղն սկսելուց առաջ անհրաժեշտություն է առաջանում խմբերի բաժանվել ու հաշվել, խաղի մասնակիցներից ավագը հանձն է առնում հաշվերգի կատարումը: Ընդ որում, մանկաշխարհում ժանրերն էլ որոշակիորեն սահմանազատված չեն. երեխաները ծաղրերգը կամ որևէ խաղերգ վանկատելով կարող են օգտագործել որպես հաշվերգ, մեկ այլ պարագայում սոսկ արտասանելով՝ հաշվերգը՝ խաղերգ: Հաշվերգի տեքստերի իմացությունն էլ է որոշակի վարպետություն պահանջում, ուստի այն իրագործում է խաղի մասնակիցներից տարիքավորը, որը պետք է և՛ շնորհալի լիներ, և՛ հեղինակություն ու հարգանք վայելեր մասնակիցների կողմից: Հենց նրանք էլ խաղերի ժամանակ դառնում են փոքր երեխաների «ուսուցիչները»՝ խաղն ու բանահյուսական տեքստը ուսուցանողները:

Որքան էլ այսօրվա մանկական բանահյուսությունը ավանդականի հաջորդական օղակներից մեկն է, այնուամենայնիվ այն իր մի շարք կողմերով արտացոլում է նոր ժամանակների պատկերը: Ամեն մի սերնդափոխություն բանահյուսական ստեղծագործություններին, առավել ևս մանկականին, նոր որակ է հաղորդում՝ նպաստելով այս կամ այն ժանրի հորինվածքների ինքնատիպ, ժամանակի պահանջներից բխող զարգացմանը: Մեր օրերում նկատելի է մանկական բանահյուսական ստեղծագործությունների գրականացման գործընթաց: Այդ բանը առավել ընդգծված է երևում հատկապես քաղաքային բնակավայրերի երեխաներից կատարած գրառումներում: Պատճառը համատարած գրագիտությունն է, մանկապարտեզների, դպրոցների, ռադիո–հեռուստատեսության և կապի զանազան միջոցների առկայությունը: Վերջին շրջանում երեխաները, մոռացության տալով կամ հրաժարվելով ավանդական կառույցներից, իրենք են «հորինում» խաղերի ժամանակ կիրառվող տեքստեր, երբեմն էլ յուրովի վերափոխում, կցելով–սինթեզում են հինը՝ «ստեղծում», այսպես ասած, ամբողջական գործեր:

Հաշվերգերի մերօրյա գրառումները (մանավանդ քաղաքաբնակ երեխաներից) ցույց են տալիս, որ ավանդականի կողքին ստեղծվում և կենցաղավարում են նաև մանուկների կողմից հորինված այնպիսի ստեղծագործություններ, որոնք ծավալով շատ փոքր են, պարզունակ, հաճախ էլ՝ իմաստազուրկ.

1. Ավտոբուսը շարժվեց,
Միչի կուկուն լալեց,
Մի լա, մի լա կուկու ջան,
Հրես մերդ կըգա,
Իրեք սիլլա կըտա ... և այլն (Երևան, 82 թ.)

2. Ես գնացի Դիլիջան,
Որ ինձ չասեն բաղրջան,
Էլ չեմ գնա Դիլիջան,
Որ ինձ չասեն բաղրջան: (Վանաձոր, Երևան, Թալին, 81 թ.)

Մեջբերված երկրորդ օրինակի կառուցվածքով ստեղծված տասնյակ հաշվերգեր կան մեր գրառումներում՝ նույնահանգ զուգահեռների գործածությամբ.

Ես գնացի ...

1. *Բաթում*, որին հետևում է՝ *Որ ինձ չասեն* նույնահանգ *դդում*-ը. 2. *Ֆուրբոլ — մրի* (տարբ.՝ *փշի*) *գոլ*. 3. *Մոսկվա — սոսկա*, 4. *Անպատ — քյաֆթառ*, 5. *Թիֆլիս — թիթիզ*, 6. *Լենինգրադ — կարմիր վարդ*, 7. *Շաքի — ճաքի*, 8. *Բազար — գազար*, 9. *Բուրկա — բութուլկա*, 10. *Մողես — Կյող ես* և այլն:

Նոր հորինվածքների նպատակը ոչ այնքան ավելիք խոսքի իմաստ արտահայտող հատկանիշն է, որքան ռիթմը, հանգն ու վանկը պահպանելը, դրանք խաղի նպատակին ծառայեցնելը:

Մեր օրերում նկատվում է մանկական բանարվեստի որոշ տեսակների կիրառությունից դուրս գալու գործընթաց: Մանկական ավանդական խաղերի ասպարեզից դուրս գալու պատճառով մոռացության են տրվում նաև դրանց հետ կապված բանահյուսական ստեղծագործությունները: Լավագույն դեպքում դրանք եթե գոյատևում էլ են, ապա այլ պայմաններում և այլ նպատակի ծառայելով. եթե խաղերգ է և ռիթմն ու հանգն էլ համապատասխանում են, ինչպես վերը նշվեց, շարունակում են գործածվել որպես հաշվերգ: Մանկաշխարհում այսօր գրեթե դադարել են գործածվել հեքիաթի նախերգերը (Հեքիաթ, հեքիաթ պապըս է, //Ղաշխա քուռակ տակըս է... և այլն), բնությանը, կենդանիներին նվիրված որոշ երգեր ու խաղերգեր: Ի դեպ, այսօր էլ հեռավոր գյուղական բնակավայրերում, ուր դեռ չեն հասցրել «ոտք դնել» համակարգիչն ու համացանցը, դեռևս կարելի է հանդիպել մանկական ավանդական բանարվեստի նմուշների:

Մանկական բանահյուսական ստեղծագործությունների համատեքստում իրենց առանձնահատկություններով առանձնանում են տարատեսակ երկխոսական խոսքախաղ — *զայրախաղերը (ռուս.՝ дразнилка եզրը ռուս բանագետների բնորոշումն է):*

Եթե հաշվերգերը մեծ մասամբ ծառայում են մանկան ֆիզիկական խաղերի կազմակերպմանը, աջակցում դրանց լիարժեք կայացմանը, ապա այլ է *բառախաղ–խոսքախաղերի դերը*: Մանկաշխարհին հոգեհարազատ բանարվեստի այս տեսակը առնչվում է երեխայի մտավոր ունակությունների հետ և ստուգում, բացահայտում արդեն ոչ թե կոլեկտիվի, այլ կյանքի հորձանուտում առաջին քայլերն անող մանուկ–անհատի մտավոր կարողությունները: Մանկական բանարվեստի այս տեսակի կիրառությունը խաղը վեր է ածում մի տեսակ ստուգատես–մրցույթի: Այդ մրցակցությունն ուղեկցվում է ոչ թե չափածո, այլ հասարակ երկխոսության միջոցով, որը երկու մասից է բաղկացած. *առաջին մասը* առաջադրվող բառն է (այն կարող է լինել տարբեր խոսքի մասեր՝ ա) գոյական — մարազ, շապիկ, կանաչի, շիշ և այլն, բ) թվական — մեկ, երկու, երեք ... տաս, քսան, երեսուն և այլն, գ) դերանուն — ես, նա), և այդ ամենը՝ հաստատուն կառուցվածքով՝

— Ասա ... մեկ, երկու, վերջ, ոչ, ես և այլն, որին հետևում է խաղընկերոջ կողմից առաջադրվող բառի կրկնությունը: — Մեկ, երկու, վերջ, ոչ, ես և այլն:

Երկխոսական բառախաղի *երկրորդ մասը*, այսինքն՝ առաջադրված բառից բխող պատասխանները տարբեր կառուցվածքներով են հանդես գալիս.

1. Պարզ, որն էլ լինում է համառոտ և ընդարձակ նախադասությամբ.

ա) համառոտ՝ — *Ասա պաս: — Տաս: — Ուրես սպաս:*

բ) ընդարձակ՝ — *Ասա ոչ: — Ոչ: — Ուրես թույի պոչ:*

— *Ասա քսան: — Քսան: — Հերն ու մերըդ պարերի պակ փախսան:*

2. Բարդ, որն էլ լինում է երկաստիճան, եռաստիճան, քառաստիճան կառուցվածքով.

ա) երկաստիճան՝

— *Ասա ութ: — Ութ:*

— *Էթաս Գառնի, ուրես թութ:*

— *Ասա վերջ: — Վերջ:*

— *Ընկնես փեչ, փառվես մինչև վերջ:*

բ) եռաստիճան՝

— *Ասա շապիկ: — Շապիկ:*

— *Քեզի խափինք, աչքդ կապինք, փայլդ լափինք:*

գ) քառաստիճան՝

— *Ասա հոշ: — Հոշ:*

— *Ալյանաբորոշ, //Առ քեզ դոդոշ, // Առնեմ հոքիր, //Նայեմ չոքիր:*

Ինչպես երևում է պարզ և բարդ կառուցվածքով օրինակներից, բառախաղերն իրենց որոշակի կանոններն էին առաջադրում մասնակիցներին, այն է՝ նախ՝ առաջադրած բառից բխած պատասխանով պետք է դիմացինին կա՛մ հաճելին «մատուցվեր», կա՛մ «խոսքակոխ անելով»՝ անհարմար ու ծիծաղելի վիճակի մեջ գցեր՝ ապա՝ իմաստային աստիճանական զարգացում պարունակող · պատասխանը արտահայտվեր հանգախաղով (ութ–թութ, վատցուն–վրացուն, հիտցուն–միլիցուն, ձոր–տանձ ու խնձոր, չայնիկ–նաչալնիկ, բալ–համբալ և այլն):

Թե՛ պարզ, թե՛ բարդ կառույցներում երբեմն հանդիպում են նաև գռեհիկ պատասխաններ (ինչը հատուկ է հատկապես բարձր տարիքի երեխաներին), երբեմն էլ խաղի վերոհիշյալ կանոնները չպահպանած իմաստազուրկ խոսքախաղեր՝ կապված կա՛մ պատասխանողի մտածողության, կա՛մ տարիքային սահմանափակությունից:

Խոսքախաղերում հաղթում է այն երեխան, որը ցուցաբերում է մտքի ճկունություն և պահանջվող բառագանձը որոշակի կառույցներով ժամանակին ի ցույց դնելու կարողություն:

Երկխոսական խոսքախաղերի մեջ առանձին խումբ են կազմում, այսպես ասած, զայրախաղերի մեկ այլ տեսակ, երբ խաղը վարողը սկսելուց առաջ որևէ պայման է առաջադրում խաղի մասնակցին, ասենք՝ — *Ինչ ասեմ, ասա՝ ես լա* կամ էլ *ես համ, ես էլ:*

— *Ես գնացի քաղաք: — Ես լա քաղաք: // — Ես համ քաղաք:*

— *Միրա շուկա: — Ես լա շուկա: // — Ես համ շուկա:*

— *Առա խաղող: — Ես լա խաղող: // — Ես համ խաղող:*

— *Առա կուրեմ: — Ես լակուրեմ ... // — Առա բալ:*

— *Ես համբալ* (Մասիս, գ. Նորաբաց, 83 թ.):

Կամ էլ՝

— *Ինչ ասեմ, ասա՝ ես էլ:*

— *Գնացի Երևան: — Ես էլ:*

— *Հեր էկա գյուղ: — Ես էլ:*

— *Գնացի հանդը: — Ես էլ:*

— *Տեսա՝ խոզերը ղնչով կեղտ են մաքրում (կամ ուտում):*

— *Ես էլ* ... (Էջմիածին, գ. Լեռնամերձ, 84 թ.)

Նման երկխոսական խոսքախաղերը խաղի մասնակցից (որին ծանոթ է խաղի գաղտնիքը) պահանջում է առաջադրվող բառը հավելադրումներով վերարտադրելով՝ գործողություններին հետևելու զգուշավորություն և դիմացինի պատրաստած ծուղակը չընկնելու, ամեն կերպ դրանից խուսանավելու հմտություն: Պայման առաջադրողն աշխատում է ինչքան հնարավոր է՝ ձգձգելով շփոթեցնել, մոլորեցնել խոսակցին այնքան ժամանակ, մինչև վերջինս հանկարծակիի գալով միամտաբար կընկներ ծուղակը՝ ծիծաղ առաջացնելով մասնակիցների շրջանում:

Իրենց ինքնատիպ կիրառական գործառույթով այսօր էլ շարունակում են կենցաղավարել նաև *շուտասելուկները*: Սրանք որոշակի նպատակի ծառայելու համար ստեղծված արձակ կամ չափածո տեքստային կառույցներ են, որոնք արժեքավորվում են միայն մի քանի անգամ արագ–արագ կրկնելով:

Շուտասելուկներն էլ հաշվերգերի նման խոր հնությունից են գալիս և սկզբնական շրջանում մեծերի խաղացանկի անբաժանելի մասն են կազմել, սակայն հետագայում աստիճանաբար անցել են մանուկներին:

Գիտակցելով մարդու կյանքում շուտասելուկների կատարած դրական դերը՝ մեծերը դրանք ուսուցանում, փոխանցում են երեխաներին: Հաշվերգերից և բառախաղերից հետո մանկական բանահյուսության այս տեսակը

ամենասիրվածն ու մասսայականություն վայելողն է: Այն օգնում է երեխայի լեզվական անհարթությունները հաղթահարելուն՝ նպաստում կակազելը, թլվատությունը վերացնելուն, բառերն ու բառային տարատեսակ կառույցները հստակ արտաբերելուն, վարժեցնում ինքնատիրապետման արվեստին:

Ի դեպ, շուտասելուկներն իրենց կիրառական վիթխարի դերով այսօր էլ շարունակում են օգտակար լինել մեծերին, ավելի կոնկրետ՝ մասնագիտական որոշ խմբերի՝ բժիշկ–լոգոպետներին (որպես երեխաների լեզվական անհարթությունները վերացնելուն նպաստող միջոցներ) և դերասաններին:

Շուտասելուկների՝ վերը թվարկած գործառույթներին էականորեն նպաստող հանգամանքն էլ հաշվի առնելով է, որ դերասանական արվեստին լիարժեք տիրապետելու, բեմից հնչող կենդանի խոսքն առանց աղավաղումների, ձայնավորներն ու բաղաձայնները հստակ ու գեղեցիկ վերարտադրելու համար թատրոնի և կինոյի ինստիտուտում դասավանդվող «Գեղարվեստական խոսքի մատուցման արվեստը» առարկայի դասընթացի վարժություններում ժողովրդական բանահյուսության այլ տեսակների հետ ընդգրկվել են նաև այդ ինքնատիպ հորինվածքները[1]:

Դանդաղ արտաբերելիս շուտասելուկները շատ սովորական, առաջին հայացքից «անմեղ» թվացող խոսքային կառույցներ են, սակայն մի քանի անգամ դրանք արագ–արագ կրկնելիս բառերն ու բառակապակցությունները այնպես են խառնվում, անսպասելի այնպիսի իմաստ են արտահայտում (երբեմն էլ՝ գռեհիկ), որ առաջադրանքը կատարողը ինքնաբերաբար հայտնվում է ծուղակում: Նրա կա՛մ «լեզուն է կապ ընկնում»՝ չկարողանալով հանձնարարությունը մինչև վերջ առանց աղավաղելու հստակ կատարել.

Բդալանց Շամիրը շվշվացնելով շահին ծորումը, Չորի շալակը շլակին, // Աղջի, Շուշանիկ, Շուշանիկ, շան տղա շները Շամիրի շվարը շաղ տվին: (Վայոց ձոր, գ. Բարձրունի, 80 թ.)

կա՛մ էլ ընկնում է կոմիկական այնպիսի վիճակի մեջ, որ հարուցում է և՛ պայման առաջադրողի, և՛ ներկա գտնվողների ծիծաղը.

1 Է. Հ. Գյուլեսերյան, Գեղարվեստական խոսքի մատուցման արվեստը, Երևան, 1987 թ.:

Ձուկը ուտեմ, մուկը գցեմ, // Մուկը գցեմ, ձուկը ուտեմ: (Երևան, Աշտարակ, 80 թ.)

Ձուգն ու մուգը մե թաբախ (ափսե),
Ձըգին հասնիմ, ձուգըն ուդեմ,
Մըգին հասնիմ, ձուգըն ուդեմ: (Ախալքալաք, գ. Դադեշ, 80 թ.)

Շուտասելուկները կազմված են լինում՝

1. Նույն տառով սկսվող բառերից՝ և՛ գրական հայերենով, և՛ բարբառային հնչողությամբ (վերջինս առկա է համապատասխան տարածաշրջաններում), որոնք էլ իրենց հերթին լինում են՝

ա) միատառ՝ ոչ ծավալուն կառույցով.

Խնամի Խորեն խինգ խուրց խուր խորեց խորը,
Խանեց խոզերի խամար: (Մարտունի, գ. Թազագյուղ, 82 թ.)

բ) միատառ՝ *ծավալուն* սյուժետային կառուցվածքով.

Կակոյ Կարապետի Կարմիր կով,
Կերավ կոլխոզի կարմիր կառտոլ,
Կակոյ Կարապետին կանչին կանախլար,
Կակոյ Կարապետը կլներ.
«Կարմիր կոնյակ կառնեմ,
Կխմցնեմ, կպրծնեմ»: (Մարտունի, գ. Թազագյուղ, 82 թ.)

գ) Երկտառ (ծ–ճ) կառուցվածքով.

Ծտի ճուտը ճմբան ծերին,
Ծտի ճտի ճիտը ծուռ: (Երևան, 80 թ.)

2. *Նույնահանգ* բառերի կիրառությամբ.

Մկրատ տուր, մտրակ տամ,
Մտրակ տուր, մկրատ տամ:

3. Սովորական բառերով ու բառակապակցություններով կառույցներ, որոնք արագ արտասանելիս առնմանության հետևանքով ստացվում են գռեհիկ, վուլգար արտահայտություններ.

Տերվերը, մերլս, քուրլս, պերպերը, մերլս, քուրլս …

Ինչ խոսք, մենք նպատակ չենք դրել այստեղ անդրադառնալ մանկական բանարվեստի բոլոր տեսակներին, բայց հաշվերգերի, որոշ խաղերգերի, բառախաղերի և շուտասելուկների նման հպանցիկ վերլուծությունն անգամ վերահաստատում է այն վիթխարի արժեքն ու ներգործուն դերը, որ դարերի ընթացքում ունեցել է մանկական բանահյուսությունը երեխայի կյանքում:

Մանկաշխարհում դեռևս կենցաղավարող, ինչպես նաև ինչ–ինչ պատճառներով կիրառությունից դուրս եկած մանկական բանահյուսության տեսակների մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրությունը, ինչպես նաև անցյալում ու մեր օրերում գրառած և տարատեսակ արխիվներում պահպանվող անտիպ նյութերի հրատարակությունը կարող է ամբողջացնել մեր պատկերացումը տարբեր տարիքային խմբերի երեխաների մտածողության, հոգեբանության ու նրանց միջավայրում կիրառվող բանարվեստի վերաբերյալ:

Armen Sargsyan

ON ARMENIAN CHILDREN'S FOLKLORE

Summary

This paper examines a body of nursery texts: children's rhymes, counting rhymes and tongue twisters coming from different parts of Armenia. An attempt is made to group them according to their unique structural, semantic and functional characteristics. The publication of yet unrecorded and lesser–known variants will doubtless encourage further study by scholars interested in this delightful and unique heritage.

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Մինչ կրոնափոխ համշենահայերի մանկական բանահյուսության նմուշները ներկայացնելը, կարծում ենք, կարիք կա գոնե շատ համառոտ անդրադառնալ համշենահայերի պատմությանը: Ըստ հայ նշանավոր պատմիչ Ղևոնդի, արաբական հարստահարությունների պատճառով, մի շարք նախարարների և իշխանների գլխավորությամբ, 8–րդ դարում շուրջ 12 հազար հայեր հեռանում են հայրենիքից: Նույն դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանի վկայությամբ, գաղթը ղեկավարող Համամ Ամատունին Տրապիզոն և Ռիզե նավահանգստային քաղաքների միջև, լեռնային, դժվարահաս վայրում, Պարխարյան լեռնաշղթայի ծովահայաց կողմում, կառուցում է Համամաշեն քաղաքը, որն անվանադիր է դառնում նաև ողջ գավառի համար: Ժամանակի ընթացքում աղվելով, հաճախ կիրառվել է անվան կարճ տարբերակը՝ Համշեն:

18–րդ դարի սկզբից Համշենում ծայր է առնում բռնի իսլամացումը: Դիմադրողները զոհվում են, շատերն էլ ստիպված են լինում հեռանալ Տրապիզոնի նահանգի այլ գավառներ: Անշուշտ, իսլամացումը մեկանգամյա գործողություն չէր, և համշենահայերի բռնի իսլամացումը տևում է տասնամյակներ, և նույնիսկ 20–րդ դարի սկզբին, բուն Համշենում դեռևս կային մի շարք քրիստոնյա ընտանիքներ:

Այլևայլ պատճառներով, Համշենից և հարակից վայրերից արտագաղթում են նաև բազմաթիվ իսլամացված համշենահայեր: Հավանաբար 19–րդ դարում է տեղի ունեցել ներկայիս Արդվինի նահանգի Խոփայի գավառ

նրանց գաղթը: Այդ գավառում այսօր կա 20-ից ավելի համշենահայերի գյուղ: Այստեղից էլ նրանց մի մասը տեղափոխվել է հարևան Բորչկայի գավառ, որտեղ ևս 2–3 համշենաբնակ գյուղ կա:







1. Արդահանի լեռներում, Բիլբիլան յայլայում Խոփայի գավառի համշենցիներ, 2010 թ.
2. Խոփայի գավառի, Քեմալփաշա գյուղի համշենցի երեխաներ, 2010 թ.
3. Խոփայի գավառի Յոլդերե գյուղի համշենցի երեխաներ, 2011 թ.
(լուսանկարները՝ Սերգեյ Վարդանյանի)

Խոփայի գավառի համշենցիների մի մասը 19-րդ դարի վերջին գաղթել է Թուրքիայի Սաքարյա և Դյուզջե նահանգներ:

Ցավոք, բռնի իսլամացված համշենահայերի բանահյուսությունը այլայլ պատճառներով շատ քիչ է ուսումնասիրված: Հայտնի է, որ ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև տասնամյակներ շարունակ սահմանը փակ էր և հայաստանցի հետազոտողների համար անհնար էր այդ գավառներում ուսումնասիրություններ կատարել: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո իրավիճակը փոխվեց, և այսօր, թեև դժվարություններ հաղթահարելով, բայց հնարավոր է գնալ կրոնափոխ համշենահայերի բնակավայրեր: 2010–12 թթ. ընթացքում 4 անգամ այցելելով նրանց, ինձ հաջողվեց գրառել նաև մանկական բանահյուսության որոշ նմուշներ: Պիտի նշեմ, որ Արդվինի նահանգի համշենցիները դեռևս հայախոս են, բայց թուրքախոսությունը գնալով ավելի մեծ տեղ է գրավում: Հայախոսության պահպանմանը նպաստել է այն, որ այս երկու գավառն էլ, դրացի լինելով ԽՍՀՄ-ին, արտաքին աշխարհից կտրված էին: Շատ կարևոր էր այն, որ այս գավառներում էլեկտրականությունը և հեռուստատեսությունը մուտք են գործել ուշ՝ 1980-ական թվականներին: Այդ թվականներից էլ սկսել է թուրքերենը ավելի շատ կիրառվել: Երեխաները, մուլտֆիլմեր նայելով, վաղ տարիքից սովորում են թուրքերեն, այնինչ, մինչ այդ, կրոնափոխ համշենահայերի երեխաները թուրքերենի հետ առնչվում էին միայն դպրոցում: Հայախոսության նահանջի հետ մոռացվում են նաև հայերեն մանկական բանահյուսության նմուշները, որոնցից երկու խաղերգի, վեց հանելուկի հետ տպագրում ենք նաև մեկ մառնախաղ, որը, մեծերից սովորելով, երեխաները խաղում են իրենցից ավելի փոքրերի հետ:

Ներկայացված նյութերի հեռու ու մոտ տարբերակները 19–20-րդ դարերում գրառվել են Հայաստանի տարբեր ծայրերում, ինչը վկայում է, որ բռնի կրոնափոխված համշենահայերի բանավոր ստեղծագործությունները հայկական բանահյուսական ժառանգության անբաժանելի մասն են:

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳ

Հէ՛, հէ՛, հէբիկա,
Հէբիկա, հէ՛, բաբիկա[1],
Չէյին կըլիփն քուռ մէ բըռա,
Քուռէ դայի բաբուն դէվլի,
Բաբէ ինձի խօռ էյէդ,
Խօռէ դայի զօվուն դէվլի,
Զօվէ ինձի սիպի էյէդ,

1 Բաբիկա — պապ բառի փաղաքշական ձևն է:

Միսիէ դայի էրզէվան գրէցի,
Էրզէվան ինձի լազութ էյէդ,
Լազութէ դայի չաղացքէ գրէցի,
Չաղացքէ ինձի ալուր էյէդ,
Ալուրէ դայի հարսին գրէցի,
Հարսին ինձի խըմոր էյէդ,
Խըմորէ դայի քարէ գրէցի,
Քարէ ինձի հաց էյէդ,
Հացէ դայի չէյին կըլխին
Փայ փութ այի:

Ասացող՝ Հիքմեթ Աքչիչեք՝ ծնվ. 1963 թ. Մաքրիյալ (այժմ Քեմալփաշա) գյուղախմբի Ուչքարդեշ գյուղում, բնակվում է Ստամբուլում:

(թարգմանություն)
Հե՜, հե՜, հեքիաթ,
Հեքիաթ, հե՜, պապիկ,
Աղբյուրի գլխին (մոր) գդակ գտա,
Գդակը տարա պապին տվեցի,
Պապն ինձ խոր տվեց,
Խոտը տարա կովին տվեցի,
Կովն ինձ գոմաղբ տվեց,
Գոմաղբը տարա արտը գցեցի,
Արտն ինձ եգիպտացորեն տվեց,
Եգիպտացորենը տարա ջրաղացը գցեցի,
Ջրաղացն ինձ ալյուր տվեց,
Ալյուրը տարա տաշտը գցեցի,
Տաշտն ինձ խմոր տվեց,
Խմորը տարա քարին գցեցի,
Քարն ինձ հաց տվեց,

Հացը տարա աղբյուրի գլխին (մոր)
Բաժանեցի:

МԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳ

Չաղացքն ի վար քընացի, գուդ քըդա,
Գուդէ դայի հավուն դէվի,
Հավէ ինձի հագվիթ էյէթ,
Հագվիթէ դայի մամուն դէվի,
Մամէ ինձի սիսի էյէթ,
Սիսին դայի գօվուն դէվի,
Գօվէ ինձի աղփ էյէթ,
Աղփէ դայի էրզէվան գրէցի,
Էրզէվան ինձի լատար էյէթ,
Լատարէ դայի փագէնէ գրէցի,
Փագէնէ ինձի ջինջուխ էյէթ,
Ջինջուխէ մօրթէցի, միսէ յէս գիյա,
Զիռթէ թուն գիյար:

Այս խաղերգը կենցաղավարում է Սաքարյայի նահանգի Ախմաքաշը գյուղի համշենցիների շրջանում: Ասացողի խնդրանքով նրա տվյալները չենք հրապարակում:

(թարգմանություն)
Ջրաղացն ի վար գնացի, կուր գտա,
Կուրը տարա հավին տվեցի,
Հավն ինձ ձու տվեց,
Ձուն տարա տատին տվեցի,
Տատն ինձ սիսի[1] տվեց,
Սիսին տարա կովին տվեցի,
Կովն ինձ գոմաղբ տվեց,

1 Սիսի բառի իմաստն ինձ չհաջողվեց պարզել, ասացողն ինքն էլ չգիտեր:

Գոմաղբը տարա արտը գցեցի,
Արտն ինձ եգիպտացորեն տվեց,
Եգիպտացորենը տարա խոտանոցը[1] գցեցի,
Խոտանոցն ինձ թռչուն[2] տվեց,
Թռչունը մորթեցի, միսը ես կերա,
Ծերտը դու կերար:

МАТНАХАГ

ՄԱՏՆԱԽԱՂ

Ծնողներից կամ ավագներից մեկը բռնում է փոքր երեխայի (սովորաբար շուրջ 3–4 տարեկան) ձեռքը և հերթով ծալելով նրա մատները, ասում է.

Փունթ մադէ աստաձ ունի.
— Ուդիք, ուդիք:
Ցուցամադէ աստաձ ունի.
— Ուստի՞ ուդիք:
Մէչքէդադի մադէ աստաձ ունի.
— Թադիք, ուդիք:
Մադնիի մադէ աստաձ ունի.
— Յէս քօղնօղ ում:
Ջգույթէ աստաձ ունի.
— Յէս ալ ասօղ ում:

(թարգմանություն)
Բութ մատն ասել է.
— Ուտենք, ուտենք:
Ցուցամատն ասել է.
— Որտեղի՞ց ուտենք:
Միջնամատն ասել է.
— Աշխատենք, ուտենք:

1 Փագեն նշանակում է ծածկ ունեցող թեթև, փայտաշեն շինություն, խոտանոց: Երբեմն փագեն են ասում նաև սերբենին, որը սյուների վրա կառուցված փայտաշեն մթերանոց է:
2 Ջինջուխ նշանակում է և՛ ճնճղուկ, և՛, ընդհանրապես, թռչուն:

Մատնեմատն ասել է.
— Ես կգողանամ:
Ճկույթն ասել է.
— Ես էլ կասեմ:

Այնուհետև նա երեխայի մատներն այնպես է շարժում, իբր նրանք իրար հետ կռվում են, իրար ծեծում:

Գրառել եմ Խոփայի գավառում:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Հինք ախպար մեգ գույին փօյի գուն: (Աբուր)
Հինգ եղբայր մեկ փոս են փորում: (Ճաշ, որ պինդ է, և ուտում են մատներով)

2. Գէրթա, գէրթա, հէդ չունի,
Յէդ քուքա, աչվի չունի: (Շուք)
Գնում է, գնում, հետք չունի,
Հետ է գալիս, աչք չունի: (Ստվեր)

3. Հունա՝ զօզզօզ, հօզա՝ զօզզօզ,
Շիմին մօդէ՝ վար զօզզօզ: (Ակէղ)
Այնտեղ՝ կուզեկուզ, այստեղ՝ կուզեկուզ,
Շեմի մոտ՝ կուզեկուզ դրված: (Ակեղ)

4. Չաղիգը՝ դունը գախ: (Էլէքդրիգ լամփա)
Ծաղիկը՝ տանը կախված: (Էլեկտրական լամպ)

5. Ջօմիուն վառն՝ խաշնած սընդուք: (Մազարլուխի քար)
Ճանապարհի վրա՝ փակված սնդուկ: (Տապանաքար)

6. Քիյամիդին վառն՝ մաղ մէ հավգիթ: (Աստախնի)
Կղմինդրի (տանիքի) վրա՝ մի մաղ ձու: (Աստղեր)

Գրառել եմ Խոփայի և Բորչկայի գավառներում:

Sergey Vardanian

SAMPLES FROM CHILDREN'S FOLKLORE OF HAMSHEN ARMENIANS FORCIBLY CONVERTED TO ISLAM

Summary

This brief article presents newly recorded samples from children's folklore of Hamshen Armenians converted to Islam by force. The folklore instances include nursery rhymes, counting rhymes and riddles. As the Armenian idiom of Hamshen Armenians is quite distinct, parallel translations into modern literary Armenian are given.

ԱԼՎԱՐԴ ՋԻՎԱՆՅԱՆ

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Թարգմանական հեքիաթ եզրը կարող է կիրառվել բառիս ամենալայն իմաստով՝ ընդգրկելով ինչպես ուղղակի, այնպես էլ միջնորդավորված թարգմանություններ, փոխադրություններ և վերապատումներ, որոնք առանձնանում են բնագիր տեքստից հեռացվածության տարբեր աստիճաններով:

Հայ թարգմանական հեքիաթն ունի շատ հին պատմություն, սակայն վերջինիս ժամանակագրությանը դժվար է հետևել ժանրային հստակ տարանջատման բացակայության և եզրային անորոշության պատճառով: Բազմաթիվ թարգմանական տեքստեր, որ հայտնվում են տարբեր ազգերի հեքիաթների ժողովածուներում, հայկական աղբյուրներում հանդես են գալիս որպես զրույցներ, բնորոշում, որ շատ ընդհանուր է և զուրկ՝ ժանրային տարբերակվածությունից: Այս խնդրին անդրադարձել է Ար. Սրապյանն իր «Հայ միջնադարյան զրույցներ» աշխատության մեջ (Սրապյան 1969):

Թեև հայերենը, գերմաներենի *(märchen)* և ռուսերենի *(сказка)* հետ միասին, այն սակավ հնդեվրոպական լեզուներից է, որն ունի առանձին եզր՝ բացառապես «հեքիաթ» հասկացությունը նշելու համար, հայերենում «հեքիաթ» բառի գործածությունը միանշանակ չէր: Այն, ինչ այսօր հեքիաթ ենք համարում, պատմամշակութային տարբեր համատեքստերում հաճախ տարբեր կերպ է անվանվել:

Մյուս կողմից՝ հեքիաթը նախկինում չի ունեցել արդի նեղ նշանակությունը: Անգամ Գ. Սրվանձտյանցը, որի համար հեքիաթը հստակ տարորոշված էր այլ ժանրերից, երբեմն գործածում էր «հեքիաթ» բառն իբրև առասպելի

համարժեք: «Մանանա» ժողովածուի մեջ բանագետը հիշատակում է «ոսկե գեղման հեքիաթն» (Սրվանձտյանց 1978, 179):

Եզրային մակարդակում հեքիաթը հաճախ նույնացվել է զրույցի, առավել հաճախ՝ առակի հետ: Եզրային նման ընդհանրությունը տարածվում էր նաև թարգմանական հեքիաթի վրա: Այսպես, 1864 թ. Սանկտ Պետերբուրգում Եսայի-Տեր Գրիգորյանցի ֆրանսերենից հայերեն թարգմանությամբ լույս է տեսնում Գրիմ եղբայրների հայերեն վաղ թարգմանություններից մեկը՝ վերնագրված «Գերմանական ազգային առակներ եղբարց Գրիմայ աշխատությամբ» հավաքված (Գրիմ 1864):

Ենթադրաբար նույն ժամանակահատվածում Թիֆլիսում տպագրվում են «Երկու առակ Պերրոյից և Գրիմից» (Գրիմ ա. թ.):

Այս շրջանի ժողովածուներից քչերում կարելի է գտնել հեքիաթ բառը: Առակի գործածությունը հեքիաթի փոխարեն, հնարավոր է, պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Հնում «առակ» բառի իմաստային դաշտն անհամեմատ ավելի լայն էր, քան այժմ, երբ առակ ասելով հասկանում ենք գլխավորապես սեղմ այլաբանական պատմություններ, որտեղ գործող անձինք մարդկայնացված բույսեր, կենդանիներ կամ թռչուններ են:

«Հայկազյան բառարանում» «առակ» բառահոդվածը մասնակիորեն ընդգրկում է հեքիաթ իմաստը՝ հանձին մասալ բացատրության (Նոր բառգիրք հայկազյան լեզվի, h. I, 1836): Ըստ Հր. Աճառյանի «Թուրքերեն փոխառյալ բառեր» հայերենի մեջ աշխատության՝ հայերենում մասալը հանդես էր գալիս նաև հեքիաթ իմաստով (Աճառյան 1902, 229):

«Հայկազյան բառարանում» «հեքիաթ» բառը տեղ չի գտել թերևս իր ժողովրդական կարգավիճակի պատճառով:

Պերրոյի հեքիաթների թարգմանության պարագայում հայ թարգմանչի ընտրությունը՝ «Երկու առակ Պերրոյից և Գրիմից», կարող էր այլ՝ ավելի մասնավոր պատճառ ունենալ. Պերրոյի հեքիաթներն ունեն ընդգծված խրատական ավարտ:

Ժանրի պատմականորեն ձևավորված թույլ տարբերակվածության խնդիրն ամենևին էլ տեղական բնույթ չէր կրում: Շատ նման իրավիճակ էր տիրում ռուսերենում: «Ռուսական հեքիաթ» հիմնարար մենագրության մեջ Վլադի-

միր Պրոպը, հանգամանալից անդրադառնալով հեքիաթ եզրի իմաստին ու պատմությանը, նշում է, որ հին Ռուսիայում *сказка* բառն իր ժամանակակից իմաստով չի կիրառվել, այլ նշանակել է իրավական ուժ ունեցող որևէ գրավոր կամ բանավոր ցուցմունք՝ վկայություն: Փոխարենը գործածական է եղել *басня/баснь*՝ «առակ» բառը: Պրոպի ենթադրությամբ այս վկայություններն այնքան կեղծ են եղել և ճշմարտությանը չհամապատասխանող, որ բառը ժամանակի ընթացքում ձեռք է բերել գրեթե հակառակ նշանակություն՝ դարձել ստի, հնարանքի համարժեք (Պրոպ 1984, 34):

Եվ այնուհանդերձ, չնայած ժանրային և եզրային անորոշությանը, հայ թարգմանական հեքիաթի ժամանակագրության մեջ հնարավոր է առանձնացնել հետևյալ չորս փուլերը. ձևավորման շրջան, վերելքի շրջան (1860–1922), խորհրդային շրջան (1922–1990) և արդի շրջան:

Հայ թարգմանական հեքիաթի սկիզբը՝ ձևավորման փուլը կարելի է խիստ պայմանականորեն համարել X դ., երբ առաջին անգամ թարգմանվեց «Պղնձե քաղաքի պատմությունը»: Այս զրույցը միջազգային հեքիաթագիտության մեջ ունի հեքիաթի կարգավիճակ, թերևս այն պատճառով, որ ավելի հայտնի է որպես «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների ժողովածուի մաս, թեև ինքնուրույն շրջանառություն է ունեցել ժողովածուի մեջ ընդգրկվելուց դեռ շատ առաջ:

Ընդունված է համարել, որ «Պղնձե քաղաքի պատմությունն» առաջին անգամ թարգմանվել է հայերեն X դ., քանի որ ձեռագրի տիտղոսաթերթին կա Դավիթ Կյուրապաղատի անունը: Սակայն, ըստ մասնագետների, հայերեն թարգմանության լեզվի որոշ առանձնահատկություններ մատնանշում են ավելի ուշ շրջան: Հետևաբար, կամ այն իսկապես թարգմանվել է ավելի ուշ, և Դավիթ Կյուրապաղատի անունը պարզապես կցվել է ձեռագրին, կամ պահպանված է X դարի հայերեն թարգմանության ավելի ուշ շրջանի վերապատումը (Մկրտչյան 1986, 2011):

Հայ թարգմանական հեքիաթի ամենահստակ առանձնացող շրջանն ընդգրկում է 1860–1922 թթ., շրջան, որ ձևավորվում և զարգանում է բանագիտության աննախադեպ զարգացման նպաստավոր միջավայրում: Այս թվերին են հրատարակվում հայ ժողովրդական հեքիաթների կարևորագույն ժողովա-

ծուներ: Նշենք դրանցից մի քանիսը. 1876, 1884 թթ. լույս են տեսնում Գարեգին Սրվանձտյանցի գրառած հեքիաթները՝ ամփոփված «Մանանա» և «Համով-Հոտով» ժողովածուներում:

1882 թ. Տիգրան Նավասարդյանցը հրատարակում է «Հայ ժողովրդական հեքիաթների» առաջին պրակը, իսկ 1886 թ. լույս է տեսնում Գևորգ Տեր-Աղեքսանդրյանի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» ժողովածուն, ուր ընդգրկված էին 45 հեքիաթներ:

1885, 1899 թթ. տպագրվում են Գևորգ Շերենցի «Վանա սազ» ժողովածուի 1-ին և 2-րդ մասերը, ուր ներկայացված էին Վասպուրականի հեքիաթները: 1901 թ. Մոսկվայում «Էմինյան ազգագրական ժողովածու» շարքում լույս են տեսնում Սարգիս Հայկունու գրառած 42 հեքիաթները:

Բանահյուսական հեքիաթի հանդեպ նման աննախադեպ հետաքրքրությունը, բնականաբար, տարածվում է նաև այլ մշակույթների հրաշապատում ժանրերի վրա, և հայ թարգմանական հեքիաթը սկսում է աննախընթաց վերելք ապրել: Ժամանակագրական այս փուլը կարելի է համարել թարգմանական հեքիաթի Ոսկեդար:

1882 թ. Թիֆլիսում լույս է տեսնում Վիլհելմ Հաուֆի հեքիաթների ժողովածուն՝ «Ուխտավորք» վերնագրով՝ Ռափայել Պատկանյանի աշխատասիրությամբ, հրատարակություն, որ պետք է համարել հայ թարգմանական հեքիաթի և մանկական թարգմանական գրականության ամենանշանակալից և, ավաղ, քիչ կարևորված իրադարձություններից մեկը:

Թարգմանվում են Գրիմ եղբայրների բազմաթիվ հեքիաթներ. 1897 թ. Թիֆլիսում Տիրուհի Կոստանյանցի թարգմանությամբ լույս են տեսնում Գրիմների «Աստղե դրամը», «Հարուստը և Աղքատը», «Սպիտակ Օձը», «Օնիկը և Մարգարիտը», «Նապաստակը և ոզնին», «Գայլն ու մարդը», 1899 թ. Լևոն Մելիք-Ադամյանի փոխադրությամբ լույս են տեսնում «Պստիկ ու ճստիկ», «Անդարդ Հանես», «Յոթ ագռավ» հեքիաթները:

1907 թ. տպագրվում է «Բրեմենյան փողոցային երաժիշտները»՝ Արտավազդ Թումանյանի թարգմանությամբ:

Հովհ. Թումանյանի՝ Գրիմ եղբայրների հեքիաթների թարգմանությունները հրատարակում է Թիֆլիսի «Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը» երեք պրակով.

Պրակ. I

«Լուսերեսն ու Վարդերեսը», «Սագարած աղջիկը», «Զարմանալի աշուղը» (1914 թ.):

Պրակ. II

«Գորտը», «Անտառի տնակը», «Հենզելն ու Գրետելը» (1914 թ.):

Պրակ III

«Կարմրիկը», «Մոխրոտը», «Ճերմակ օձը» (1915 թ.):

Գրիմների «Անտառի տնակը հեքիաթը լույս էր տեսել ավելի վաղ՝ «Հասկերի» 1908, N 2-ում:

1914 թ. Թավրիզում լույս է տեսնում «Խելոք Եղիսաբեթը»՝ գերմաներենից Հ. Պանիրյանի թարգմանությամբ:

Գրիմ եղբայրների հայերեն թարգմանությունների մասին խոսելիս ծագում է օրինաչափ հարց. ծանոթ էին արդյոք նրանք հայկական նյութին: Գրիմների մտերիմ բարեկամների թվում էր Ավգուստ ֆոն Հաքսթհաուզենը՝ երևելի իրավաբան և ազգագրագետ: Մի շարք հեքիաթներ Գրիմները գրառել են հենց Հաքսթհաուզենի շնորհիվ՝ նրա բարեկամների միջավայրում: 1843 թ. Նիկոլայ Առաջինի հրավերով Հաքսթհաուզենը ուղևորվում է Ռուսաստան, հասնում՝ Անդրկովկաս և Հայաստան, որտեղ նրան ուղեկից ու թարգմանիչ է դառնում Խաչատուր Աբովյանը: Ի թիվս այլ նյութերի՝ Աբովյանը նրա համար թարգմանում է նաև հայկական հեքիաթներ: 1856 թ. Հաքսթհաուզենը Լայպցիգում հրատարակում է «Անդրկովկաս» (*Transkaukasia: Reiseerinnerungen)* ուղեգրությունը (հայերեն մասնակի թարգմանությունը լույս է տեսնում 1872 թ.), որտեղ հայտնվում են նաև հայկական հեքիաթները (Haxthausen 1856):

Քիչ է հավանական, որ Յակոբ և Վիլհելմ Գրիմները ծանոթ չլինեին Հաքսթհաուզենի աշխատությանը՝ հայկական հեքիաթանյութին մասնավորապես:

Մեկ այլ աղբյուր, որ հավաստում է Գրիմ եղբայրների՝ հայկական նյութին տեղյակ լինելը, մեզ է հասել միջնորդավորված կերպով: Թոմաս Քրոֆթոն Քրոուքերը «Իռլանդիայի հարավի հրաշապատում լեգենդներն ու ավանդույթները» *(Fairy Legends and Traditions of the South of Ireland),* ժողովածուի մեջ բերում է Վիլհելմ Գրիմի հետ իր նամակագրությունը. վերջինս հիշատակում է հայկական մի զրույց հայ եպիսկոպոսի և վանքի փոշեհան ոգու (*spirit*) մասին, որն ամեն երեկո ավլում էր վանքն ու վանականների խցերը (Croker 1825): Հնարավոր է՝ այս զրույցը Գ. Սրվանձտյանցի հիշատակած Մշո Սուրբ Կարապետ վանքի փոշեհան կաղ դևի մասին պատմության մի տարբերակն է, կամ մոտավոր վերապատումը (Սրվանձտյանց 1978, 75): Կարևորն այստեղ փաստն է, որ գերկարևոր է հայ հեքիաթագիտության համար. Գրիմ եղբայրները հաստատապես տեղյակ էին հայկական բանահյուսական նյութին, գուցե՝ նաև հեքիաթներին:

Զարմանալիորեն քիչ են Շարլ Պերրոյի հեքիաթների թարգմանությունները՝ անմիջական կամ միջնորդավորված: Մեզ հայտնի միակ նմուշը վերն արդեն նշված երկու հեքիաթների թարգմանությունն է ընդգրկված «Երկու առակ Պերրոյից և Գրիմից» գրքույկի մեջ (թ. ա.):

Թարգմանությունների քանակով և բարձրարվեստ մեկնություններով հայ թարգմանական հեքիաթագրության մեջ առանձնանում են Օսքար Ուայլդի հեքիաթները, հեղինակ, որ հայ թարգմանիչներին մշտապես գրավել է իր բացառիկ ոճով: Ուայլդի հայերեն թարգմանությունների և հրատարակությունների աշխարհագրությունն ընդգրկում է՝ Հալեպ, Ստամբուլ, Մոսկվա, Երևան …

Այսպես, 1909 թ. Թիֆլիսում լույս են տեսնում Օսքար Ուայլդի «Պրինցն ու Ծիծեռնակը»՝ Մ. Բեջանյանի թարգմանությամբ, 1911 թ.՝ «Արքայադուստրն ու թզուկը», «Աստղամանուկը», 1912 թ.՝ «Պատանի թագավորը»՝ Կ. Միրիանյանի թարգմանությամբ:

1920 թ. Մոսկվայում լույս են տեսնում Ուայլդի «Նշանավոր հրթիռը», «Անձնվեր բարեկամը»՝ Կ. Միքայելյանի թարգմանությամբ: Կուսակցական ականավոր գործիչ Արտաշես Կարինյանը գրում է այս հրատարակության առաջաբանը:

Մեծ էր հայ թարգմանիչների հետաքրքրությունը Հանս Քրիստիան Անդերսենի ստեղծագործական ժառանգության հանդեպ: «Աղբյուր» մանկական պարբերականը տպագրում է Անդերսենի մի շարք հեքիաթներ. «Աղջիկն ու լուցկիները»՝ Ալ. Ծատուրյանի (1890 թ.), «Մարգարիտ ծաղիկը»՝ Հ. Հակոբյանի (1896 թ.), «Եղևնին»՝ Ս. Տեր-Սարգսյանի (1899 թ.), «Թագավորի նոր հագուստը»՝ Ա. Ղլտճյանի (1894 թ.), «Մայրը», «Աշխարհիս ամենագեղեցիկ վարդը»՝ Մ. Տեր-Հակոբյանի (1896 թ.), «Արագիլները»՝ Ջ. Տեր-Գրիգորյանի (1899 թ.) թարգմանությամբ և այլն (Խաչատրյան 1987):

Հասկերում տպագրվում են «Աղջիկն ու վառիկը», «Խաղընկերներ», «Աղջկա «Հայր-մերը», «Աղջիկն ու տիկնիկը»՝ Լ. Տեր-Մանվելյանի մեկնությամբ (1906, 1907) (Ավանեսյան 1981): Որոշ հեքիաթներ թարգմանվում են մեկից ավելի թարգմանիչների կողմից:

Նույն պարբերականներում տպագրվում են Վ. Ժուկովսկու «Մատնաչափ մանուկ», Պուշկինի «Տերտերն ու իր Բալդի ծառան» (1908), «Քնած դշխուհին և յոթ քաջերը» (1911), Ի. Ռաբինովիչի «Արեգակի օգնականները» (1913) Դ. Մամին-Սիբիրյակի «Լուսատտիկներ» և այլ հեքիաթներ՝ Կ. Մելիք-Շահնազարյանցի (1907), «Մոծակն ու արջը»՝ Աթաբեկ Խնկոյանի (1910), «Քաջ նապաստակի պատմությունը»՝ Ար. Թումանյանի (1907), «Ծեր ճնճղուկը», «Ճիճուն», «Պառավ մռռանի խոստովանքը»՝ Նվարդ Աղանյանցի (1912), Տոլստոյի «Ոսկե կացինը»՝ Ղ. Աղայանի (1910), Բ. Գարշինի «Ճանապարհորդ գորտը»՝ Վ. Զաքարյանի (1891) թարգմանությամբ և այլն (Խաչատրյան 1987, Ավանեսյան 1981):

Թարգմանվում են նաև Սելմա Լագերլյոֆի մի շարք հեքիաթներ. «Կարմրավզիկը», թարգմ.՝ Ն. Բաբայանի (Թիֆլիս, 1911), «Հարսանեկան քայլերգը», (Փարիզ, «Օշական», 1920, թ. 2):

Ցավոք, ավելի քիչ է ուսումնասիրված թարգմանական հեքիաթն Արևմտյան Հայաստանում, և ամենևին ոչ այն պատճառով, որ թարգմանություն-

ներ չէին արվում, այլ որովհետև նյութն ավելի վատ է պահպանված կամ դժվարահաս է՝ հիմնականում՝ կենտրոնացած պարբերականներում: Չէին կարող չլինել թարգմանական հեքիաթներ այն պարագայում, երբ արևմտահայ մտավորականությունն առանձնանում էր եվրոպական մշակույթի և գրականության, հատկապես ֆրանսերենի գերազանց իմացությամբ:

Մեզ հասած բացառիկ նմուշներից է Շարլ Պերրոյի «Կարմիր վարդուկը» Հակոբ Պարոնյանի փայլուն փոխադրությամբ (1876 թ.):

XXդ. սկզբներին, անդառնալի կորուստներ կրելով, արևմտահայ մտավորական միտքը գրեթե պարալիզացվում է, հայերենի լեզվական տարածքը՝ ցավալիորեն կրճատվում:

* * *

Հայ թարգմանական հեքիաթի Ոսկեդարին հետևեց խորհրդային շրջանը (1922–1990 թթ.): Ստեղծված մշակութային քաղաքականության համատեքստում ուղղակի և միջնորդավորված թարգմանությունների հարաբերակցությունն աստիճանաբար փոխվում է հօգուտ միջնորդավորված թարգմանությունների: Խորհրդային երկրով անցնում է նոր լեզվաքաղաքական փոփոխությունների ալիքը: Հայաստանում արտաքին գործոնների պատճառած անդառնալի կորուստը լրացվում է տեղական անխոհեմ լեզվական քաղաքականությամբ: Ուղղագրության փոփոխության հետևանքով մանկական թարգմանական գրականության հարուստ ժառանգությունը ընթերցանության համար դառնում է անընդունելի: Սկսվում է թարգմանական եռանդուն գործունեություն. նոր պատմամշակութային համատեքստում ռուսերենը դառնում է հզևոր միջնորդ մանկական գրականության հարուստ ավանդույթների և մանուկ ընթերցողի միջև:

Հայաստանի լեզվական կարգավիճակն առանձնահատուկ էր: Գրեթե չկար ազգային լեզվի ինտեգրացիայի վտանգ: Գրական ամբողջ ժառանգությունը հուսալի ամրագրված էր հայալեզու տեքստերում, և ռուսերենի տարածքի ընդլայնումն ընկալվում էր ոչ թե որպես սպառնալիք ազգային լեզվի դիրքերին, այլ որպես պատմաքաղաքական հանգամանքների և լեզվական քաղաքականության հետևանքով մանկական գրականության, այդ թվում նաև թարգմանական հեքիաթի, կրած ծանր կորուստի փոխհատուցում: Խորհրդային շրջանի թարգմանական հեքիաթն իր ուրույն զարգացումն է ապրում:

Մեծ հետաքրքրություն է նկատվում ժողովրդական հեքիաթի նկատմամբ: Հայ ժողովրդական հեքիաթների հատորների հրատարակմանը զուգընթաց՝ մեկը մյուսի հետևից թարգմանվում և հրատարակվում են այլ մշակույթների բանահյուսական հեքիաթներ.

ֆրանսիական ժողովրդական հեքիաթների ամբողջական ժողովածուներ՝ նախ ռուսերենից՝ Ջ. Ղազարյանի (Հայաստան, 1974 թ.), ապա բնագրից՝ Ս. Գասպարյանի թարգմանությամբ (Արևիկ, 1988 թ.):

անգլիական ժողովրդական հեքիաթներ՝ բնագրից Լ. Անանյանի (Հայպետհրատ, 1962 թ.), Ա. Մկրտչյանի և Լ. Բոյամյանի թարգմանությամբ (Սովետական գրող, 1981 թ.):

իտալական ժողովրդական հեքիաթներ՝ ռուսերենից Ռ. Ռուբինյանի թարգմանությամբ (Հայաստան, 1971 թ.),

չեխական ժողովրդական հեքիաթներ՝ ռուսերենից Շ. Գրիգորյանի թարգմանությամբ (Սովետական գրող, 1982 թ.),

բուլղարական հեքիաթներ՝ ռուսերենից Ռ. Ջանոյանի թարգմանությամբ (Լույս, 1971 թ.):

լիտվական ժողովրդական հեքիաթներ՝ ռուսերենից Լ. Անանյանի թարգմանությամբ (Հայաստան, 1976 թ.),

ուկրաինական ժողովրդական հեքիաթներ՝ բնագրից Ռ. Ղարագյոզյանի թարգմանությամբ (Արևիկ, 1988 թ., վերահրատ.՝ 2010 թ.):

բելոռուսական ժողովրդական հեքիաթներ՝ ռուսերենից Հ. Ֆելեքյանի թարգմանությամբ (Սովետական գրող, 1986 թ.):

Բազմիցս հրատարակվում են ռուսական ժողովրդական հեքիաթներ, այդ թվում՝ Հ. Հարությունյանի (Հայպետհրատ, 1954 թ.), և Ա. Սահակյանի ու Ա. Սեդրակյանի թարգմանությամբ (Արևիկ, 1987 թ.):

Լույս են տեսնում նաև արևելյան հեքիաթների մի քանի ժողովածու.

չինական ժողովրդական հեքիաթներ՝ ռուսերենից Մ. Խերանյանի (Հայպետհրատ, 1955 թ.; վերահրատ.՝ 1959 թ.), Վ. Արամյանի թարգմանությամբ (Հայպետհրատ, 1963 թ.):

կորեական ժողովրդական հեքիաթներ՝ ռուսերենից Հ. Հարությունյանի թարգմանությամբ (Հայպետհրատ, 1954 և 1956 թթ.):

1959 թ. հրատարակվում է «Հազար ու մեկ գիշեր. ընտիր հեքիաթներ» ժողովածուն՝ ռուսերենից Էդ. Աղայանի և Վ. Տալյանի թարգմանությամբ (Հայպետհրատ, վերահրատ.՝ Հայաստան, 1990 թ.):

Հրատարակվում են Գրիմ եղբայրների մի քանի ժողովածու: 1958 թ. լույս են տեսնում Գրիմների հեքիաթները՝ Հովհ. Թումանյանի, Պ. Միքայելյանի, Ռ. Մուշեղյանի թարգմանությամբ (Հայպետհրատ), 1981 թ.՝ Գրիմների 200 հեքիաթ՝ ռուսերենից Ամալյա Ղուկասյանի թարգմանությամբ (Սովետական գրող, վերահրատ.՝ Արևիկ, 2007 թ.):

Հայաստանից դուրս Գրիմ եղբայրների հեքիաթներ են հրատարակվում Աթենքում՝ գերմաներենից Վահագն Գույումճյանի թարգմանությամբ (1927 թ.):

Խորհրդային տարիներին թարգմանվում են հեղինակային հեքիաթների բազմաթիվ հատորներ: Հայտնվում են Պերրոյի հեքիաթների ամբողջական ժողովածուներ. 1938 թ.՝ ինը հեքիաթ բնագրից Վեսպերի և Հ. Զրբաշյանի թարգմանությամբ (Պետհրատ), 1947 թ.՝ տաս հեքիաթ ֆրանսերենից Վ. Միքայելյանի թարգմանությամբ (Հայպետհրատ):

Չնայած բնագրից արված այս երկու թարգմանական ժողովածուների առկայությանը՝ 1980 թ. «Սովետական գրողը» հրատարակում է Ա. Ղուկասյանի ռուսերենով միջնորդավորված թարգմանությունը (Սովետական գրող). վերջինս էլ պարբերաբար վերահրատարակվում է մինչ այսօր:

1946 թ. հրատարակվում է Հ. Ք. Անդերսենի հեքիաթների հատընտիրը՝ «Հեքիաթներ և զրույցներ» ժողովածուն՝ ռուսերենից Հ. Հարությունյանի թարգմանությամբ (Հայպետհրատ, վերահրատ.՝ Հայպետհրատ, 1956 թ., Արևիկ, 2005 թ.):

1966 թ. լույս է տեսնում Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը»՝ ռուսերենից Ս. Հարությունյանի թարգմանությամբ (Հայաստան, վերահրատ. Լույս՝ 1985 թ., Զանգակ՝ 2001 թ.):

Խորհրդային շրջանի թարգմանական հեքիաթների ցանկում կարևոր տեղ է գրավում գերմանական հեղինակային հեքիաթը: Վիլհելմ Հաուֆի հեքիաթներց հրատարակվում են.

1946 թ.՝ «Թզուկ քիթը» Հ. Հարությունյանի թարգմանությամբ (Հայպետհրատ),

1954 թ.՝ «Փոքրիկ Մուքը» ռուսերենից Հ. Հարությունյանի թարգմանությամբ (Հայպետհրատ, վերահրատ.՝ Հայաստան, 1972 թ., Արևիկ, 1989 թ.):

1983 թ.՝ «Շպեսարտի պանդոկը» բնագրից Ռ. Մուշեղյանի և Վ. Մինասյանի թարգմանությամբ:

Թարգմանվում են նաև Է. Թ. Ա. Հոֆմանի երկերը.

1984 թ.՝ «Գաճաճ Ցախես՝ անվանյալ Ցիննոբեր» հեքիաթ վիպակը՝ գերմաներենից Հ. Հակոբյանի թարգմանությամբ (ԵՊՀ հրատ.),

1988 թ.՝ «Մարդուկ — Ջարդուկը և մկների թագավորը»՝ Է. Մակարյանի թարգմանությամբ (Արևիկ, վերահրատ. 2002 թ.):

Ռուսերենից թարգմանվում է Ադելբերտ ֆոն Շամիսոյի «Պետեր Շլեմիլի զարմանալի պատմությունը» հրաշապատում վիպակը՝ ռուսերենից Գ. Սիրունյանի թարգմանությամբ (Սովետական գրող, 1982): 1984 թ. վիպակը վերահրատարակվում է՝ բնագրից Հ. Հակոբյանի թարգմանությամբ (ԵՊՀ հրատ.):

Անգլիական հեղինակային հեքիաթներից թարգմանվում է Ռ. Քիփլինգի «Մաուգլի» հեքիաթ-վիպակը՝ ռուսերենից Գ. Սարյանի (Հայպետհրատ, 1962 թ.), «Արտասովոր հեքիաթները» բնագրից Ա. Բուդաղյանի (Հայպետհրատ, 1947 թ.), «Պատմվածքներ հենց այնպես» ժողովածուն՝ Ս. Սեֆերյանի մեկնությամբ (Հայաստան, 1974, վերահրատ.՝ Զանգակ, 2012 թ.):

1932 թ. Բոստոնում «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթի 15 համարում տպագրվում է Լ. Քերրոլի «Ալիս Հրաշալեաց երկրին մէջ» վիպակը՝ Վ. Վաղարշյանի մեկնությամբ:

1970 թ. լույս է տեսնում «Ալիս հրաշալիքներու աշխարհին մէջ»՝ Երվանդ Կոպելյանի թարգմանությամբ:

1971 թ. լույս է տեսնում «Ալիսը հրաշքների աշխարհում» և «Ալիսը հայելու աշխարհում»՝ բնագրից Ս. Սեֆերյանի թարգմանությամբ (Հայաստան), (վերահրատ.՝ Զանգակ, 2012 թ.):

1980 թ. հրատարակվում է Օսքար Ուայլդի հատընտիրը, ուր ընդգրկված էին հեղինակի ութ հեքիաթները անգլերենից Գ. Հախվերդյանի թարգմանությամբ (Սովետական գրող):

Խորհրդային հրատարակություններին զուգահեռ լույս են տեսնում Հալեպում՝ Օսքար Ուայլդի «Երիտասարդ թագավորը և պարշոմին կծիկը» (թարգմ. նշված չէ, 1944 թ.), Ստամբուլում՝ «Նուռերու տուն մը»՝ Զապել Մ. Շահպազի անզուգական թարգմանությամբ (1961 թ.):

Թարգմանաբար հրատարակվում են նաև իտալական գրական հեքիաթներ.

1956 թ.՝ Կարլո Կոլոդիի «Պինոքիոյի արկածները. մի Բուրատինոյի պատմություն» հեքիաթ վիպակը՝ բնագրից Գ. Վիրապյանի,

1957 թ.՝ Ջանի Ռոդարիի «Չիպոլինոյի արկածները»՝ ռուսերենից Ս. Հարությունյանի (Հայպետհրատ, վերահրատ.՝ Սովետական գրող, 1983 թ.),

1960 թ.՝ նույն հեղինակի «Երկնագույն նետի ճանապարհորդությունը»՝ ռուսերենից Ս. Հարությունյանի (Հայպետհրատ),

1973 թ.՝ «Հեքիաթներ հեռախոսով»՝ ռուսերենից Ա. Աղասյանի (Հայաստան),

1969 թ.՝ «Ջելսոմինոն խաբեբաների աշխարհում» հեքիաթ-վիպակը՝ ռուսերենից Ս. Հարությունյանի թարգմանությամբ (Հայաստան, վերահրատ.՝ Արևիկ, 1990 թ.):

Շվեդական հրաշապատում երկերից թարգմանվում են Սելմա Լագերլյոֆի «Տուարծիկի բոյնը (Բազմավէպ, 1930, մարտ, թիվ 3), «Բեթղեհեմեան աստղը» (Փարիզ, Յառաջ, 22. 05. 1932), «Նազարէթին մէջ (Արեւելք, 3. 02. 1933), «Ուրուականի ձագը (Պոլիս, Հայ խօսնակ մարդկանց, 1933, թ. 2), «Տօպլրիքսի մշակը, թարգմ.՝ Վերժին Էքսէրճեանի (Բոստոն, Հայաստանի կոչնակ, 5. 04. 1947):

1948 թ. լույս է տեսնում Սելմա Լագերլյոֆի «Նիլսի զարմանահրաշ ճանապարհորդությունը վայրի սագերի հետ հեքիաթ վիպակը՝ ռուսերենից Ս. Քաջազնունու թարգմանությամբ (Հայպետհրատ) (վերահրատ.՝ 1970 թ.):

Թարգմանվում են Աստրիդ Լինդգրենի մի շարք ստեղծագործություններ.

1959 թ.՝ «Պատիկն ու տանիքում ապրող Կառլսոնը»՝ ռուսերենից Օ. Սանահյանի (Հայպետհրատ),

1982՝ «Երեք վիպակ Մանչուկի և Կառլսոնի մասին»՝ ռուսերենից Օ. Սանահյանի, Գ. Մարտիկյանի, Գ. Ա. Կարապետյանի թարգմանությամբ (Սովետական գրող):

Ֆիննական հեղինակային հեքիաթներից թարգմանվում են Ցաքարիաս Տոպելիուսի «Հեքիաթները»՝ ռուսերենից Վ. Արամյանի թարգմանությամբ (բնագիրը շվեդերեն է) (Հայպետհրատ, 1956):

* * *

Հայ թարգմանական հեքիաթի արդի շրջանի սկիզբը պայմանականորեն կարելի է համարել 1990 թ.: Այս շրջանի վաղ տարիներին լույս տեսած հեքիաթների մեջ գերակշռում են վերահրատարակությունները: Ահա նոր հրատարակված ժողովրդական հեքիաթների մի ամփոփ ցանկ:

2006 թ. — «Լեհական ժողովրդական հեքիաթներ»՝ լեհերենից Ռ. Ղարաքյոզյանի թարգմանությամբ (Արևիկ):

2007 թ. — «Կարմիր շուշան» չինական ժողովրդական հեքիաթների ժողովածուն՝ Գ. Բարենցի փոխադրությամբ (Լուսակն):

2010 թ. — «Պարսկական ժողովրդական հեքիաթներ»՝ Գ. Ասատրյանի թարգմանությամբ և մշակմամբ (Էդիտ Պրինտ):

2012 թ. — «Զուլաշական լեգենդներ և հեքիաթներ»՝ ռուսերենից Հ. Այվազյանի թարգմանությամբ (Ծիծեռնակ):

1999 թ. Բեյրութում լույս է տեսնում Գրիմների «Սագ արածող աղջիկը» (թարգմ. նշված չէ):

Նկատելի է հետաքրքրության աճ անգլիական մանկապատանեկան գրականության հանդեպ: Հրատարակվում են

2003 թ.՝ Չարլզ Դիքենսի, «Սուրբ Ծննդյան երգը»՝ Ա. Ասրյանի (Վէմ),

2005 թ.՝ Պամելա Թրևրսի «Մերի Փոփինսը բացում է դուռը» հեքիաթ–վիպակը՝ Ա. Սիմոնյանի (Զանգակ–97):

2011 թ.՝ Օսկար Ուայլդի ինը հեքիաթները՝ Ռ. Առաքելյանի (Արևիկ),

2012 թ.՝ Քենեթ Գրեհեմի «Քամին ուռիների մեջ» վիպակը՝ Սոնա Սեֆերյանի (Զանգակ) թարգմանությամբ:

Թերևս ամենաշատ թարգմանվող հրաշապատում երկը մնում է Անտուան դը Սենտ Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը»: Թվարկենք մի քանի հրատարակություն. 2001 թ. (թարգմ.՝ Կ. Սուրենյանի, Սարգիս Խաչենց), 2006 թ. (թարգմ.՝ Թ. Ոսկերիչյանի, Կանադա), 2010 թ. (թարգմ.՝ Ս. Գասպարյանի, Արեգ), 2013 թ. (թարգմ.՝ Ն. Վարդանյանի, Անտարես):

Արդի շրջանում են հրատարակվում նաև Աստրիդ Լինդգրենի երկու երկերի թարգմանությունները.

1998 թ.՝ «Ավազակի դուստր Ռոնին» հեքիաթ–վիպակը՝ ռուսերենից Հ. Վարդանյանի թարգմանությամբ (Արևիկ):

2010 թ.՝ «Հազվագյուտ, անսովոր և զվարճալի պատմություն Պելլե Բոգմանի մասին, թե ինչպես նա շատ արկածներից հետո դարձավ Հայաստանի թագավոր»՝ բնագրից Արծվի Բախչինյանի թարգմանությամբ (Հովհ. Թումանյանի թանգարան, Ոսկե դիվան N 2):

2013 թ.՝ «Երկարագուլպա Պիպին»՝ բնագրից Աշխեն Բախչինյանի թարգմանությամբ (Զանգակ):

Ուշագրավ մի երևույթ է հեքիաթների արևելահայերեն–արևմտահայերեն թարգմանությունը: Նման մեկնությունները թեև փոքրաթիվ են, սակայն որպես լեզվական և մշակութային երևույթ՝ շատ կարևոր են՝ բնորոշ քիչ թվով լեզվամշակույթների: Նշենք մի հետաքրքիր հրատարակություն՝ «Մանկական հեքիաթներ» ժողովածուն, որն ընդգրկում է Գրիմ եղբայրների հեքիաթների՝ Արմեն Դարյանի արևմտահայերեն փոխադրությունները Հովհ. Թումանյանի թարգմանությունների հիման վրա: Գրքույկը լույս է տեսել Լոս Անջելեսում 1997 թ.:

Հայ թարգմանական հեքիաթի տիրույթն ընդգրկում է նաև հայկական հեքիաթի այլալեզու թարգմանությունները: Թվարկենք մի քանի՝ առավել կարևոր ժողովածուներ:

1905 թ. Ֆրեդերիկ Մակլերը ֆրանսերեն է թարգմանում և հրատարակում մի շարք հայկական ժողովրդական հեքիաթներ *(Frederic Macler. Contes Arméniens. Paris: Ernest Leroux):* 1905 թ.–ից ի վեր այս հրաշալի ժողովածուն բազմիցս վերահրատարակվել է:

1907 թ. լույս է տեսնում շոտլանդացի հանրահայտ բանագետ Էնդրյու Լենգի հեքիաթների մատենաշարի հերթական՝ «Ձիթագույն հատորյակը» (*The Olive Fairy Book. Harmondsworth: Kestrel Books):* Լենգի ժողովածուի հեքաթներն անգլերեն էին թարգմանված Մակլերի ֆրանսերեն տարբերակներից: Թեև Լենգն իր հատորում ընդգրկել էր ընդամենը մի քանի հայկական հեքիաթ, սակայն այս հրատարակությունը հարկավոր է կարևորել հեքիաթի տիրույթում Էնդրյու Լենգի բարձր հեղինակության և ժողովածուի հանրահայտության պատճառով:

1966 թ. հրատարակվում է Սյուզի Հուգասյան–Վիլլայի «100 հայկական հեքիաթ և դրանց բանագիտական փոխառնչությունները» ժողովածուն (*100 Armenian Tales and their Folkloristic Relevance. Wayne State University*), որն ի տարբերություն մեզ հայտնի մյուս ժողովածուների՝ ընդգրկում է նաև զուգահեռներ այլ մշակույթների համարժեք հեքիաթների հետ, տեղեկություններ ասացողների մասին, Հայաստանին վերաբերող պատմական ակնարկ:

1968 թ. լույս է տեսնում Լևոն Զավեն Սյուրմելյանի «Անմահության խնձորները» (*Apples of Immortality. Folktales of Armenia. Allen & Unwin) հեքիաթների գրքույկը:*

1972 թ.՝ Չարլզ Դաունինգի «Հայ ժողովրդական հեքիաթներ և առակներ» (*Armenian Folk–Tales and Fables. Oxford University Press)* ժողովածուն,

2012 թ.՝ «Հայկական հեքիաթներ. Զմրուխտ հավք» (*Contes Arméniens. L'Oiseau d'Emeraude*) հատորյակը՝ Լեոն Քեչեյանի թարգմանությամբ:

Ներկայացվածն ամենևին չի հավակնում սպառիչ պատկերը լինել հայ թարգմանական հեքիաթագրության: Ակնհայտ է, որ ավելի շատ թարգմանություններ, գոնե մինչև խորհրդային տարիները, հրատարակվել են Հա-

յաստանից դուրս, բազմաթիվ շնորհալի թարգմանություններ, ամփոփված լինելով անշապիկ ու փոքրածավալ գրքույկներում մնացել են աննկատ և դժվարահաս անգամ մասնագետների համար: Մինչխորհրդային շատ բարձրարժեք թարգմանություններ ուղղագրական նկատառումներով երբևէ չեն վերահրատարակվել:

Այս ոչ ծավալուն աշխատանքն ընդամենը փորձ է ամփոփելու հայ թարգմանական հեքիաթի պատմությունը, մեկտեղ ներկայացնելու թարգմանական հեքիաթների հրատարակությունները՝ անկախ հրատարակման վայրից, ժամանակից, արևելահայերեն–արևմտահայերեն շարադրված լինելուց, ուղղագրությունից և թարգմանության որակից:

Նման նախաձեռնության կարևորությունն ակնհայտ է մի քանի պատճառներով: Նախ՝ հայ թարգմանական հեքիաթի պատմությունն անհրաժեշտ է ուսումնասիրել որպես քիչ հետազոտված տիրույթ:

Թարգմանական հեքիաթի պատմությունը հայկական հեքիաթի պատմության կարևոր մասն է կազմում: Ազգային հրաշապատում մտածողությունն իր ձևավորման ընթացքում, որքան էլ հենվի ազգային արմատների վրա, անպատճառ սնվում է նաև այլ մշակույթներից: Հեքիաթի թարգմանությունը թիրախ մշակույթ է ներարկում թարմ շունչ, հրաշապատում դիպաշարերի նոր դրսևորումներ, զարգացնում է մայրենի բառապաշարի համապատասխան բաժինը:

Էլ ավելի կարևոր է թարգմանական հեքիաթի դերը հայ մանկական գրականության պատմության համատեքստում: Եթե ժողովրդական հեքիաթի հասցեատերը միշտ չէ, որ մանուկ ընթերցողն է, ապա թարգմանական հեքիաթը գրեթե միշտ է ուղղված երեխաներին: Նշենք, որ անգամ մեծ մշակույթներում մանկական գրականության ձևավորումը հաճախ ընթացել է այլ մշակույթներից վերցված թարգմանությունների և փոխադրությունների հաշվին: Մանկական գրականության ընթացքին որդեգրման սկզբունքն ամենևին էլ խորթ չէ: Շատ դեպքերում օտար աղբյուրը դառնում է ազգային ժանրի կայացման մաս, եթե ոչ՝ հիմք: Այսպես, իր ձևավորման շրջանում ռուս մանկական գրականության առաջին նմուշները գերմանական գրականության թարգմանական երկեր էին (Костюхина 2008), հանգամանք, որ չխոչընդոտեց ռուս մանկապատանեկան գրականության հետագա զարգացմանը ազգային հունով:

Հայ թարգմանական հեքիաթի պատմության ուսումնասիրությունն ունի կարևոր գործնական նշանակություն և կարող է լուրջ բարեփոխումներ բերել մանկական գրահրատարակչության և գրատպության ոլորտ: Այսօր թարգմանվում և հրատարակվում են հեքիաթներ, որոնք թարգմանվել էին դեռ տասնամյակներ առաջ, սակայն մատենագիտական տեղեկատուների աղության պատճառով դուրս են մնում թե՛ թարգմանիչների, թե՛ հրատարակիչների ուշադրությունից:

Պարբերաբար վերահրատարակվում են խորհրդային տարիներին ռուսերենով միջնորդավորված թարգմանական ժողովածուներ, մինչդեռ կան նույն հեքիաթների մինչխորհրդային բնագրային թարգմանություններ: Նույն սկզբունքով և դարձյալ թարգմանական հեքիաթի պատմության ու մատենագիտության թերի լինելու պատճառով՝ խորհրդային շրջանի շատ արժեքավոր ժողովածուների վերահրատարկման փոխարեն՝ երբեմն տպագրվում են նույն հեքիաթների մակերեսային, հեղինակային ոճից զուրկ, կրճատ վերապատումներ և փոխադրություններ՝ գունեղ շապիկների մեջ ամփոփված:

Վերջապես թարգմանական հեքիաթի պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է հեքիաթի կարևորությամբ ընդհանրապես, ժանր, որի տարաշխարհիկ փիլիսոփայության և մանուկ ընթերցողի դեռ անաղարտ երևակայության միջև չկա որևէ անհամաձայնություն, տեքստի եզակի ու թերգնահատված տեսակ, որը սակայն ազգային հրաշապատում մտածողության ձևավորման և էթնիկ երևակայության ամլությունը կանխելու առաջին պայմանն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աճառյան Հր. (1902), *Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենի մեջ*, ԷԱԺ, հ. Գ, Մոսկվա–Վաղարշապատ:

Աճառյան Հր. (1926), *Հայերեն արմատական բառարան*, Երևան, ԵՊՀ հրատ.:

Ավանեսյան Հ. (1981), *Մատենագիտություն «Հասկեր» ամսագրի*, Երևան, Խնկո Ապոր անվ. հանր. մանկ. գրադ.:

Ավետիքյան Գ., Սյուրմելյան Խ., Ավգերյան Մ., (1981), *Նոր բառգիրք հայկազյան լեզվի*, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ.:

Խաչատրյան Ֆ., (1987), *Մատենագիտություն «Աղբյուր» ամսագրի*, Երևան, Խնկո Ապոր անվ. հանր. մանկ. գրադ.:

Մկրտչյան Հ. (1986), Պղնձե քաղաքի պատմության արաբական և հայկական տարբերակները // *Պատմա-բանասիրական հանդես*, № 2, 130–138:

Ջիվանյան Ա. (2009), «Նուռերու տուն մը»: Օսքար Ուայլդի հեքիաթները // *Համանուն ցուցահանդեսի բուկլետ*, Հովհ. Թումանյանի թանգարան:

Ջիվանյան Ա. (2010), Ֆրանսիական մանկական գրականությունը ռուսերենով միջնորդավորված հայերեն թարգմանություններում //*Համանուն ցուցահանդեսի բուկլետ*, Հովհ. Թումանյանի թանգարան:

Սրապյան, Ա. (1969), *Հայ միջնադարյան զրույցներ*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Սրվանձտյանց Գ. (1978), Հայրենյաց վեպք ու զրույցք // *Մանանա*, Երկեր, հ. 1, Եր., ԳԱ հրատ.:

Croker, Thomas Crofton (1825). *Fairy Legends and Traditions of Southern Ireland.* Glastonbury: The Lost Library.

Haxthausen, A. (1856). *Transkaukasia: Reiseerinnerungen u. ges. Notizen.* 2 Teile in 1 Bd. Leipzig, Brockhaus.

Костюхина, М. (2008). *Золотое зеркало. Русская литература для детей XVIII–XIX веков.* Москва: Объединенное гум. изд.-во.

Alvard Jivanyan

THE ARMENIAN TRANSLATED FAIRY TALE

Summary

The article focuses on the periodization and historical evolution of Armenian translations of fairy tales, which begin roughly in the 10th century with one of the earliest renderings of *The Story of the Brass City* and continue to our days. Our understanding of the translated fairy tale is broad and includes direct translations from the source language, mediated translations, retellings and adapted versions. Both folk tales and literary tales are included. The distinctive aspect of Armenian translations of fairy tales is that numerous volumes and samples of translated tales have been published beyond Armenia in Vienna, Moscow, St Petersburgh, Aleppo, Constantinople, Tiflis and elsewhere. The translation of Armenian tales into other languages is another important point of our study. A number of major volumes are considered.

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ. ԱՆԱՎԱՐՏ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

(Տպագրվում է կրճատումներով)

1. ՔԱՉԱԼ ՆԱՋԻԿԻ ԵՎ ԱՅԼՈՑ ՄԱՍԻՆ

Մանկական բանահյուսությունը մեզանում շատ քիչ ուսումնասիրված բնագավառ է: Գրանցվել և քիչ թե շատ ուսումնասիրվել են հին, արխայիկ, հատկապես ազգագրական արժեք ունեցող նմուշները: Այս հոդվածում կբերվեն այլ, փաստորեն՝ շրջանցված, համեմատաբար ուշ շրջանների և մանավանդ՝ այլալեզու շերտ պարունակող օրինակներ, և փորձ կարվի դրանց վերլուծության հիման վրա եզրակացություններ անել: Եվ այսպես, հիշո՞ւմ եք՝

Քաչալը գնաց պանձի,
Վախեցավ գլուխը խանձի,
Գիշերը մրավ պեղերը,
Կարոն կերավ բեղերը:

Սա նախադպրոցական բանահյուսություն է, որը ռեչիտատիվով երգվում է բոլոր խուզած մանուկներին ծաղրելու համար: Անցնենք առաջ:

Աշխարհ-աշխարհ-աշխարհ ա,
Մեր դասարոն ոչխար ա:
Հենց որ զանգը պալիս ա
Արածելով գալիս ա:

Ահա դպրոցական բանահյուսության չքննարկված տիպիկ օրինակ: Այս քառատողը ծանոթ է հայկական դպրոցներում սովորող բոլոր աշակերտներին, ուստի մենք հույս ունենք, որ աշխարհագրության ուսուցիչներն այն չեն համարի մեր կողմից իրենց հեղինակության և իրավունքների ոտնահարման փորձ: Նույնատիպ հանրահայտ՝

Ռուսկի յազիկ՝ բաչալ Նազիկ:

Այս մանկական բանաստեղծության գոհարը, ինչպես և նախորդը, գոյատևում է տասնամյակներ: [...]

Իհարկե, հայոց լեզվի վարկի բարձրացման ջատագովները այստեղ կարող էին հայ երեխաների վերաբերմունքը տեսնել իրենց պարտադրվող ռուսերենի ուսուցման վերաբերյալ, բայց մենք անկողմնակալորեն լռում ենք և հիշում նաև հայոց լեզվի ուսուցիչների մասին եղածը՝

Հայոց–հայոց–հայոց ա,
Մեր դասատուն մի օձ ա:

Թվում է, թե նրան հակադրվում է ռուսերենի թանկագին ուսուցչուհին՝ որը թեև մի քիչ ճաղատ է, բայց ոսկի սիրտ ունի՝

Ռուսկի, ռուսկի, ռուսկի ա,
Մեր դասատուն ոսկի ա:

Բայց մեր բոլոր ինֆորմանտները այդ «ոսկին» արտասանում էին սարկաստիկ կերպով, մի տեսակ չակերտների մեջ: Պետք է ասել, որ այսօրվա դպրոցականները, եթե դատենք ըստ բանահյուսության, ի հակադրություն իրենց ուսումնատենչ պապերի, շատ էլ մեծ ձգտում չունեն դեպի ուսումը:

Ի՞նչ եմ անում դպրոցը, դպրոցը,
Քանի որ կա փողոցը, փողոցը:
Ի՞նչ եմ անում ֆիզիկա, ֆիզիկա,
Քանի որ կա մուզիկա, մուզիկա, մուզիկա:

Սա երգվում է Դվորժակի «Սլավոնական պարերից» մեկի երաժշտությամբ և ցույց տալիս, թե հայ դպրոցականը, եթե նույնիսկ շատ էլ չի սիրում իր հանրակրթական ուսումը և ռուսերենի պարտադիր ուսուցումը, ապա, այնուամենայնիվ, նա դեռևս կորած չէ հասարակության համար, քանի որ կարողանում է ըստ արժանվույն գնահատել եվրոպական երաժշտության դասականներին և հանդուրժողաբար է տրամադրված դեպի սլավոնական մյուս ազգերն ու նրանց մշակույթը: Իսկ ռուսական դպրոցի մասին, իրոք որ, կա վախեցնող ռուսերեն տեքստ, որը, թեև, կարծես՝ ռուսաստանյան ծագում ունի, բայց տարածված է հենց մեր ռուսական մանկապարտեզներում:

Дети в школу не ходите,
Эта школа не для вас.
Там учителя бандиты,
А директор — Фантомас.

Քառատողը զարգանում է բնիկ հայկական յամբ–անապեստով՝

Ֆանտոմաս–Ֆանտոմաս,
Գլխին ունի երեք մազ,
Մեկը առաջ, մեկը հետ,
Մեջտեղինը՝ պոլի փետ:
Պոլի փետը հանեցին,
Տեղը լոբի ցանեցին:
Լոբին անեց մեծացավ,
Ֆանտոմասը ծերացավ (կամ՝ մահացավ):

Ապագայի պատմաբանին ենք թողնում գրելու, թե ինչպես էին XX դարում հայ մանուկները տառապում դպրոցներում ՀԽՍՀ լուսավորության, կամ նույնն է թե՝ ժողկրթության մինիստրության դաժան լծի տակ։ Նշված օրինակում հիշատակվում է մի հերոս՝ Ֆանտոմասը, որը հայ մանուկներին ծանոթ է համանուն կինոնկարից։ Պետք է ասել, որ կինոնկարների ազդեցությունը մանկական բանահյուսության վրա նշանակալի է։ Ահա մի այլ շատ հետաքրքիր օրինակ՝

Չաղ, Ցանցառ, Նիկուլին,
Թռան, նստան «ժիգուլին»։
Չաղը ասաց՝ «բարև ձեզ»,
Նինան ասաց՝ «թաղեմ ձեզ»։

Այս քառատողում անհայտ հեղինակն անդրադարձել է մանուկների կողմից սիրված «Կովկասի գերուհին» կինոնկարի գլխավոր հերոսուհու՝ Նինայի տառապանքներին, որը հուսահատված իրեն կեղեքող՝ անաշխատ եկամուտների սիրահար Մորգունով–Վիցին–Նիկուլին եռյակի (որոնք բնագրում հանդես են գալիս իրենց քրեական մականուններով) ոտնձգություններից, անիծում է իր բախտը և իրեն չարախնդորեն բարևող չարագործներին։ Ինչպես տեսնում ենք, մանկական բանահյուսությունը նս հանդես է գալիս բարոյական արժեքների գնահատմամբ։ Այնտեղ ևս գովերգվում և գնահատվում են բարին, մարդկայինը, հավիտենականը, և նշավակվում՝ չարը, գազանայինը, բոպեականը։ […]

Հայտնի է, որ աշխարհի բոլոր մանուկներն իրենց ֆոլկլորում օգտագործում են ավելի բարձր դասարանցիներից լսած անհասկանալի, հատկապես օտարալեզու տեքստերի պատառիկներ։ Այսպես օրինակ, ռուսական *эники–беники ели вареники*–ի առաջին երկու բառը ծագումով գերմանական են, իսկ մի այլ տեքստի վերջին տողում՝ *эне–бене ряба, квинтер–финтер жаба*–ում արդեն դրանք զուգակցվում են գիմնազիական դասընթացի լատիներեն և գերմաներեն կվինտեր–ֆինտերի հետ։ Հայկական խորհրդային մանկական բանահյուսությունը լեզվական ազդեցությունների տեսակետից այդքան ճոխ չէ,

թեև հնագույն օրինակներում առկա են քրդական, թուրքական, վրացական բառեր և արտահայտություններ։ Ամենուրեք, ինչպես արդեն ասվեց՝ նկատվում է համարյա միայն ռուսական ազդեցություն, որը, կարծում եմ, մեր քաղաքագետներին պետք է հուշի այն արդյունավետ միտքը, թե ռուսական կողմնորոշումը հայ ժողովրդին ընդհանրապես և նրա ներկայացուցիչներին մասնավորապես հատուկ է վաղ մանկությունից։ Ամենավառ օրինակը հանրահայտ է.

Ալա, բալա, նիցա,
Դուզ կաբանիցա,
Հեյ գիրի, Վանչո,
Նաշ կապիտանչո,
Փալանչո։

Կարծիք կա, որ «ալա, բալա, նիցա, դուզ կաբանիցան» կապ չունեն թուրքերեն բալայի, ինչպես նաև բալնիցայի ու կաբանիցայի, որոնք ռուսերեն կարող են իմաստավորվել որպես «հիվանդանոց» և «էգ վայրի խոզ», այլ աղավաղումն են մի նույնատիպ ռուսական տեքստի՝ *Алла баловница Дуську боится,* որը նշանակում է՝ «չարաճճի Ալլան վախենում է Դուսկայից»։ Իսկ վերջին տողերում պատմվում է մի ինչ–որ Վանչոյի մասին, որը կարծես թե նախկինում կապիտան է եղել, բայց հետագայում անհայտ պատճառներով անցել փալանչիի, այսինքն՝ էշի թամբագործի համեստ և ծանր, բայց շնորհակալ և պատվավոր աշխատանքին։ Այդ Վանչոն իր Վանի տարբերակով հանդիպում է նախախորհրդային մանկական հաշվերգերում՝

Վանի, Վանի, Երևանի,
Կապիտանի, ձվածեղի, դեղձիկոնի,
Ով որ բռնի վեր քաշի։

Իրոք, կարելի է ենթադրել, որ այստեղ խոսվում է մեր նախահեղափոխական անցյալի մասին, որովհետև խորհրդային շրջանում կապիտաններն ավելի շատ հակված էին մայոր դառնալու, քան թամբագործ: […]

Իսկ հիշո՞ւմ եք, թե ինչ էինք ասում մենք մանուկ ժամանակ պահմտոցի խաղալիս՝ «թու զա փսեխ, կարմիր ասեղ, պամիդորով ձվածեղ», որը նշանակում էր ընդամենը ռուսերեն *тьфу за всех* «թու բոլորի փոխարեն» և հիշում կարմիր ասեղը, որով վատ արարքների համար պետք է ծակվեր չարաճճի երեխաների լեզուն՝ նախաճաշի լոլիկով ձվածեղի փոխարեն:

Ի դեպ՝ լոլիկների մասին: Այդ գնդաձև, կարմիր ասեղի գույնով բանջարեղենը, որը կարծես խորհրդանշում է համաշխարհային կոմունիստական հեղափոխության գաղափարը, հիշատակվում է նաև այլ տեքստերում, ինչ պես օրինակ՝

— *Սաա պամիդոր:*
— *Պոմիդոր:*
— *Տշեմ գնաս կալիդոր:*

Այսինքն, նույնիսկ անվան հիշատակությունը բացասական հետևանքների, կոնկրետ՝ աքացու կարող է հանգեցնել: Կամ՝

Տորեադոր է,
Աչքի մեկը քոռ է,
Քիթը պամիդոր է,
Ինքն էլ դիրեկտոր է:

Այստեղ ևս կարմիր լոլիկի հետ համեմատվում է բացասական հերոսի՝ դպրոցի հարբեցող դիրեկտորի քիթը, որը օղուց ու կատաղությունից կուրացած ուզում է տորեադորի նման սրախողխող անել պարտուսի անմեղ զոհերին՝ խեղճ ու կրակ աշակերտությանը: Քառատողն ունի նաև ճանաչողական կարևոր նշանակություն, քանի որ այն երգվում է Բիզեի անմահ օպերայի տորեադորի արիայի մեղեդիով, ինչպես նաև մանուկներին ծանոթացնում հեռավոր ու էկզոտիկ, կրքոտ ու տոթակեզ Իսպանիայի ազգային հանդիսանքին՝ ցլամարտին:

Հիշյալ բանջարեղենի մասին կա մի չքնաղ դպրոցական անեկդոտ. բուսաբանության ուսուցչուհին բացատրում է, թե ինչու է այն կարմիր և վերլուծում կենսաբանական նմանակման՝ միմիկրիայի երևույթը:

— *Ընկեր Պողոսյան, ի՞նչ գույնի են գերաձիու աչքերը:*
— *Կարմիր:*
— *Իսկ ինչո՞ւ են կարմիր:*
— *Որպեսզի նմանվեն կարմիր պոմիդորների:*
— *Իսկ ինչո՞ւ նրանք պետք է նմանվեն կարմիր պոմիդորների:*
— *Որովհետև գետաձիերը սիրում են թաքնվել կարմիր պոմիդորի թփերի հետևում:*
— *Բայց ինչո՞ւ մենք նրանց երբեք չենք տեսնում այնտեղ:*
— *Տեսնո՞ւմ եք, որքան լավ են թաքնվում:*

Ընդհանրապես պետք է ասել, որ պոմիդորը, որն իր կարմրությամբ չափազանց խորհրդային հավատարմահպատակային և արյունոտ ասոցիացիաներ է առաջացնում, բավական թթու բանջարեղեն է, վնասում է աղեստամոքսային տրակտի հիվանդություն ունեցողներին, և իզուր չէ, որ Ջաննի Ռոդարին «Չիպոլինոյի արկածներում» սինյոր Պոմիդորին ներկայացրել է մեր դասակարգային թշնամիների շարքում: Այստեղ մենք մոտենում ենք մեր թեմայի ամենակարևոր խնդիրներից մեկին՝ մանկական ֆոլկլորի դասակարգային էությանը: Այն ևս սպասում է իր բացահայտողին: Դասակարգային, հրատապ հարցերը միշտ արագորեն արտացոլվում են բանահյուսության մեջ: Օրինակ՝ թվում է, թե ի՞նչ քաղաքական իմաստ կարող է ունենալ մի այսպիսի երկխոսությունը:

— *Սաա որդ:*
— *Որդ:*
— *Ուրեմ փորթ:*

Կարելի է կարծել, որ այստեղ միայն նշավակվում է շատակերությունը: Բայց եկեք հիշենք, որ տորթը սինյոր Պոմիդորի սիրած ուտելիքն էր, որը նա կլանում էր՝ կտրելով խեղճ ու սոված, որբ ու անապաստան մանուկ բողկերի, լոբիների, սոխերի և սխտորների բերանից:

Մանկական բանահյուսության մեկ այլ բնութագրական հատկանիշ: Հայտնի է, որ ժամանակակից խորհրդային աֆորիզմն ասում է՝ «հոռետեսներն ուսումնասիրում են չինարեն, լավատեսները՝ անգլերեն, ռեալիստները՝ Կալաշնիկովի ավտոմատը»: Մանուկներն ամենուրեք լավատես են: Նրանք մերժում են չինարենն ու ավտոմատը: Ահա մի քառատող, որտեղ ակնհայտորեն լսվում է օպտիմիզմին հատուկ նոտաների մետաղյա զրնգոցը:

Բուդկա, բուդկա, բե, բե,
Աբես, ֆաբես, գումարե,
Ռիկի, չիկի, ամաչիկի,
Օֆ, լեն, գլեն:

Փորձենք վերլուծել: Բուդկա-բուդկան արդեն անխուսափելի դարձած ռուսերեն փայտե տնակն է, բե-բեն՝ աշխարհագրության ուսուցիչներին «խորհրդանշող» կենդանիների լեզվով սիրված բացականչություն: Աբես-ֆաբեսը շվեդական մանկական գրքի՝ «Նիլսի արկածների» հիման վրա նկարահանված մուլտֆիլմի թզուկի կախարդանքի բանաձևի սկիզբն է՝ «աբես, ֆաբես, կարտոֆլաբես», Ռիկի-չիկին անգլիական գրող Ռադյարդ Կիպլինգի քաջարի հերոս մանգուստ Ռիկի-Թիքի-Թավին է՝ ռուսական առոգանությամբ արտասանված և ամոթխած ամաչիկի-ով հանգավորված, իսկ օ-ֆլեն-գլեն ձայնակապակցությունը հատուկ է աշխարհում միայն մի լեզվի՝ անգլերենին: Գլեն անգլերեն նշանակում է «նեղ հովիտ», ֆլեն՝ «կարկանդակ», այսինքն, ամբողջ տողը կարող է իմաստավորվել որպես «օ, կարկանդակ, նեղ հովիտ»: Այսպիսով, այս քառատող հաշվերգում արտացոլվում է մանուկ հեղինակի հույս-երազանքը՝ ամառանոցային փայտե տնակ ունենալ աշխարհագրական այլ՝ ցանկալի է արևմտյան միջօրեականներում, լայն նեղահովիտներում, որտեղ արածում են ոչխարները, ինչում է անգլերեն խոսքը, բուրում է կարկանդակը և կենսամակարդակը հասնում է շվեդական ստանդարտին: Հեղինակն իր երազանքի մոտալուտ գալստյանը շատ չի հավատում, և այդ պատճառով օգնության է կանչվում կախարդանքի բանաձևը:

Բայց մանկական բանահյուսությունն արտացոլում է ոչ միայն քչերին մատչելի և համարյա անիրական ռեալությունները, այլ նաև առավել նյութական, ոչ օդեղեն երազանքները:Միևնույն քառատողը կարելի է մեկնաբանել նաև այլ կերպ: Այսպես՝ բուդ կա, բուդ կա, բե-բեն նշանակում է, որ խանութում ոչխարի բուդ՝ ազդր է հայտնվել, աբես-ֆաբես-գումարեն՝ հայրիկի մոտ մի հրաշքով համապատասխան գումար, ռիկի-չիկի-ամաչիկի՝ միևնույն հրաշքով վաճառողի մոտ ի հայտ է եկել ամոթ, խղճի զգացում, և օֆ, լեն, գլեն՝ այսպիսով մենք կհասնենք Ամերիկայի Միացյալ Նահանգներին:

Մանկական ֆոլկլորում հանդիպում ենք նաև քաղաքական, պետական, ռազմական գործիչների կերպարների: [...]

Ահա մի հանրահայտ օրինակ անցյալից:

Լենին պապին մեռել ա,
Մեզի ավանդ թողել ա,
Պարիկ բալիկ մեծացիր,
Կոմունիզմը կառուցիր:

Սա պաշտոնական տարբերակն է, որը կարելի էր արտասանել կոլտնտեսության նախագահի տղայի և կուսկոմիտեի քարտուղարի աղջկա հարսանիքի ժամանակ, իսկ ավելի դեմոկրատական շրջապատում քառատողի վերջին երկու տողերը փոխվում էին՝

Պարիկ բալեք մեծացեք,
Իրար կերեք, կշտացեք:

Դա այն ժամանակներն էին, երբ սոված հայ դպրոցականները դպրոցում հայհոյում էին քյոխվային ու ռեսին, որոնք ծանր հարկեր էին պահան-

ջել մինչև հեղափոխությունը և գովերգում իրենց ազատ ու երջանիկ ներկան և լուսավոր ապագան, իսկ նրանց խեղճ ու կրակ մայրերը բռնվելու սարսափը սրտում անիծում էին հարկերի կրկնապատկումը երկրում:

Սրտային ջան, Սրտային,
Ինձ պահեմ ես իմ քային,
Հավ հիմա կուգեն, հավ կային:

Ահա տիպիկ մի հաշվերգ, որտեղ ի հայտ է գալիս աշխարհի բոլոր փոքրիկ տղաների զինվոր դառնալու երազանքը:

Պարիկ պապան զնաց բանակ,
Հետը տարավ մի տոր դանակ,
Ո՞վ կրանես հետը բանակ
Քեզ ընկեր:

Անցնում են խորհրդային պետության կյանքի առաջին տասնամյակները: Բանակը և արդեն մեծացած պստիկ զինվորն այժմ ունեն ռեալ թշնամի, որի նկատմամբ հաղթանակի են սպասում սրանք, հենց ընթացիկ շաբաթվա վերջին կամ հաջորդ շաբաթվա սկզբին՝

Որբաթ, շաբաթ, կիրակի,
Հիտլերի փորը դրաքի:

Եվ այդ ժամանակ կգա երկար սպասված խաղաղությունը՝

Հիտլերն ընկավ ցեխը,
Աչքը մրավ մեխը,
Երկու աչքն էլ քոռացավ,
Պատերազմը տուացավ:

Եկավ բաղձալի խաղաղությունը: Անցավ մեկուկես տասնամյակ: Խորհրդային պետությունը կարողացավ կարճ ժամանակամիջոցում բուժել իր վերքերը և շուտով, աշխարհում առաջինը, ձեռնարկեց տիեզերքի նվաճման մեծ գործը: Երեխաների արձագանքը չուշացավ՝

Յուրի Գագարին,
Կերավ մարգարին (կամ՝ *մանդարին*),
Ժամը երկուսին
Թռավ լուսնային:

Սա հիշեցնում է «Ահա եկավ Նոր տարին, բերեց (կամ՝ առանց) խնձոր մանդարին» երկտողը: Այստեղ տիեզերքի յուրացման սկիզբը՝ տիեզերական դարի գալուստը շատ ճիշտ կերպով համեմատվում է Նոր տարվա գալստյան հետ, ընդ որում՝ նշվում է նաև, որ կենսամակարդակի անկումը զրանցող սերունդների նվազ ճոխությունը և բնական յուղի ու ցիտրուսային մրգերի անբավարար քանակը արդյունք են տիեզերական հետազոտությունների վրա կատարված ահռելի ծախսերի, թեև մանկական անմիջականությամբ մանդարինի բացակայության համար մեղադրվում է անձամբ առաջին տիեզերագնացը: Հատկանշական է, որ տիեզերքը ծառի՝ գուցե հենց՝ մանդարինի ծառի պես մի բան է պատկերացվում, որի վրա թռչում-նստում են: Բացի այդ, նշվում է երևույթի պատմականությունը և գրանցվում պատմական պահի՝ ժամը երկուսը (պետք է ասել, որ հեղինակի ժամացույցը ակներևաբար հետ ընկած է եղել, քանի որ Գագարինի թռիչքը տեղի է ունեցել ժամը տասին, կամ էլ՝ հեղինակն արձանագրել է ոչ թե թռիչքի, այլ նրա մասին ՏԱՍՍ-ի առաջին հաղորդագրության պահը):

Բայց ժամանակը թռչում է առաջ: Անցնում է ևս մեկուկես տասնամյակ: Արձանագրվում է հայկական ֆուտբոլի աստեղային ժամը: 1973–74 թվականներ, ԽՍՀՄ ֆուտբոլի առաջնություն և գավաթի եզրափակիչ: «Արարատը» ներ, ԽՍՀՄ ֆուտբոլի առաջնություն և գավաթի եզրափակիչ: «Արարատը» ռուսկե «դուբլ» է անում: Նա և՛ չեմպիոն է, և՛ կրկնակի գավաթակիր: Նոր հերոս է երևում հորիզոնում: Հաղթական գոլերի հեղինակն է Իշտոյանը: Հիշո՞ւմ եք «Միմինո» կինոնկարի հերոսի խոսքը՝ «օդանավի ուղեկցորդուհին

թռչում է մեծ-մեծ մարդկանց՝ ակադեմիկոսների, մինիստրների, Իշտոյանի հետ։ Նա քեզ վրա չի էլ նայի»։ Զահել աղջիկները տառապում են անքնությունից։ Նրանց հանգիստ չի տալիս 8 համարի համազգեստ կրող ֆուտբոլիստի հռոմեական կիսադեմը։ Մեծ քույրերի օրինակին են հետևում փոքրիկ աղջնակները։ Եթե բախտը չժպտաց ավագ քրոջը, գուցե իրե՞ն կժպտա, թեկուզ և՝ տաս տարի հետո։ Երազանքը մարմնավորվում է հետևյալ քառատողում՝

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10,
Գնդակն ընկավ դարպաս։
Մեկ-գրո հոգուդ քեզ՝
Իշտոյանի կնիկն եմ։

Անցնում է ևս մեկուկես տասնամյակ։ Փոքրիկ աղջիկն ամուսնացել է ոչ թե լեգենդար Իշտոյանի, այլ շարքային ինժեների հետ։ Այս անգամ ժողովուրդը կուտակված է ոչ թե մարզադաշտում, այլ օպերային թատրոնի շուրջը։ Օպերան, իհարկե, դուրս չէր մնացել մանկական հետաքրքրությունների շրջանակից։ Նրա մասին արդեն վաղուց կար հետևյալ քառատողը՝

Օ, օ, օպերա,
Թթոն դնեմ թող եփա,
Վայ, մամա ջան, ես մեռա,
Աղի-բուղի չկերա։

Պատկերացրեք խեղճ երեխայի տառապանքը, որը դպրոցական աբոնեմենտով գնացել է երկարաշունչ օպերայի դիտման և մոռացել է հետը վերցնել նման դեպքերում միակ սփոփանքի դեր կատարող աղի-բուղիի թղթե տոպրակը։ Օպերայի ավարտի տանջալից, անհամբեր սպասումից մարդ իրոք կարող է մեռնել։ Բայց հիմա դրությունն այլ է։ Հրապարակը եռում-փոթորկվում է։ Մի՞թե իրականալու է ժողովրդի երազանքը՝

Ղարաբաղը մերն է,
Բայց թուրքերի ձեռն է,
Հելնեմ սարի գագաթին,
Թքեմ թուրքի ճակատին։

Քառատողի հերոսը ցուցադրում է իր պատմական գիտելիքները, նա գիտե, որ Ղարաբաղը հայկական հող է, և պատրաստ է դրա համար բարձրանալ ամենաբարձր սարի գագաթը և այնտեղից իր արհամարհանքն արտահայտել պատմության կեղծարարների նկատմամբ։ Հերոսը մենակ չէ։ Նրա հետ է իր հայրը, որը թեև առաջացած տարիքի պատճառով չի կարող հասնել սարի գագաթին, բայց հնարավորության սահմաններում իր լուման է ներդնում արդար գործի հաջողության համար պայքարում։ Երիտասարդները պետք է պայքարեն, իսկ հայրիկները՝ ապացուցեն իրենց իրավունքների ճշմարտությունն ու արդարությունը՝

Ղարաբաղը մերն է,
Բայց թուրքերի ձեռն է,
Պապան գնաց ցույցի,
Որ ապացուցի։

Այժմ, կարելի է ասել, որ պապան ապացուցել-վերջացրել է։ Երեխաները պետք է ասեն՝ «պապա, պապա, հերիք է ապացուցես, անցիր գործի»։ Եվ որոշ պապաներ կարծես թե իրոք անցնում են գործի։ Ինչպես տեսանք, հայ մանուկների բանահյուսությունը վերջին ժամանակներս պատմության կարևոր դեպքերին անդրադառնում է մեկուկես տասնամյակը մեկ, և հերթական պատմական քառատողը կծնվի արդեն XXI դարի սկզբին։ Ինչպիսի՞ն կլինի այն։ Դա կախված է մեզանից։ Պապաներ, անցեք գործի։

Մայիս 1990

Տպագրվել է 1990 թ. օգոստոսին,
«Մունետրիկ» թերթի 9–10 և 11 համարներում։

2. ԱԼԱ–ԲԱԼԱ–ՆԻՑԱ ԵՎ ԱՅԼՆ

Այժմ, քսաներեք տարի հետո, հոդվածի ռուսերեն թարգմանությունը և թվայնացումը ինձ ստիպեց վերհիշել անցյալը և ես նորից վերադառնում եմ այս նյութին:

Առաջինը, ինչ նկատելի է, հոդվածի՝ խորհրդային իրականության հետ կապված իրողությունները, ներկայումս, կարելի է ասել, հրատապ չեն: Պարտուս՝ պարտադիր ուսուցում, կոլտնտեսության նախագահ, մթերքների դեֆիցիտ խանութներում, Ստալին...

Դրան հակառակ, մեր իրականության մեջ ռուսական ազդեցությունը շարունակում է մնալ ու մնալ: Ուրեմն, չկարողացանք անցնել անգլերենին, ինչպես արել ու անում են առաջ ռուսական ազդեցության ոլորտում գտնվող շատ երկրներ՝ Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական ճամբարը, նախկին խորհրդային Լիտվան, Լատվիան, Էստոնիան, Վրաստանը, այլ մնացինք, հատկապես միջինասիական հանրապետությունների հետ միասին, ռուսական լեզվոլորտի մեջ; Իհարկե, առանց անգլերենի յոլա չենք գնում, ոմանք կարծես թե բլբլում են այդ լեզվով, բայց դե նույնիսկ անգլերեն բառերը հաճախ զարմանալի ռուսական ձևերով են մեզանում օգտագործում՝ ծյունինգ, պի–առ (և ոչ՝ թյունինգ, փի–ար), նաև իրենց հարգող հեղինակները իրենց հարգող հրատարակություններում:

«Լավատեսներն ուսումնասիրում են անգլերեն, հոռետեսները՝ չինարեն, իսկ ռեալիստները՝ Կալաշնիկովի ավտոմատը» ասացվածքի հոռետեսական սցենարը չիրականացավ՝ չինարենը պետք չեկավ: Չինացիներն իրենք մեզանից առաջ են ընկել անգլերենին անցնելու համաշխարհային մրցավազքում: Իսկ մեզանում անգլերենից, ինչպես ասացինք, դեռևս Պողոս–Պետրոս դուրս չի եկել: Բայց Կալաշնիկովի ավտոմատը գործեց, և այն էլ ինչպես գործեց, ամենուրեք: Ուրեմն, ռեալիզմից, իրոք, չես կարող խուսափել: Պապաներն էլ, և ոչ միայն պապաները, իրոք որ անցան գործի, և Ղարաբաղը ներկայումս մերն է: Բայց ապացուցելու տեսակետից մի քիչ կաղում ենք՝ ադրբեջանական ագիտպրոպը (խորհրդային տերմինով ասած) մերինից ակտիվ է աշխատում:

Ինչևէ... Քանի որ հոդվածը, այսպես ասած, գիտա–երգիծական էր, «չարաճճի ուսումնասիրություն», մի ժանր, որ ես փորձում էի ստեղծել այս և մի քանի այլ գործերով, ուրեմն՝ հիմա էլ մի քիչ գիտություն, հետո՝ հումոր:

Նախ, որոշ ճշտումներ: Ալա–բալա–նիցայի առթիվ ռուսական *Алла баловница*–ն թեև շատ հավանական էր թվում, բայց ինձ այդպիսի տեքստ հայտնի չէր: Դիմեցի Ռուսաստանի լավագույն մասնագետներին՝ ռուսական ժողովրդական բանահյուսության մեջ նման բան չկա: Ուրեմն, սա տիպիկ մեծական «ժոբանահյուսության մեջ...

Ասա որտեղի՞ց է այս պարզորոշ սլավոնական տեքստը: Եվ միանգամից առաջ է գալիս «բուլղարական հետքը», որն ակնհայտ էր ի սկզբանե: Եվ իրոք, էլ որտե՞ղից պիտի լինի Վանչո–կապիտանչոն, եթե ոչ այնտեղից, ուր *–չոն* տարածված նվազական վերջածանց է, Իվանը՝ Վանչո, Դիմիտրը՝ Դիմչո, իսկ Յորդանը՝ Դանչո: Եվ համացանցում միանգամից գտնվեց նախատիպը՝

Ала–бала–ница,
турска паница.
Ой гиди Ванчо,
наш капитанчо!

Սա նշանակում է՝

Ալա–բալա–նիցա,
Թուրքական աման («խոր ափսե», մյուս իմաստով՝ «ճաշատեսակ»),
Հեյ գիդի փոքրիկ Իվան,
Մեր փոքրիկ կապիտան:

Այստեղ ալա–բալան, սլավոնական –նիցա վերջավորությամբ, ակնարկում է հաշվերգերում հաճախ հանդիպող այբուբենի առաջին տառերը՝ ա, բ (թեև հնարավոր է նաև այլալեզու ազդեցություն ենթադրել): Հեյ գիդի–ն, թեև

մեզանում գրվում և իմաստավորվում է որպես «հեյ գիտի», իբր գիտենալ բառից, իրականում թուրքական նոստալգիկ բացականչություն է, որը նույն իմաստով փոխառվել է հայերենում (սա ըստ Աճառյանի) ու բուլղարերենում: Բացի այդ, ակնարկվում են այբուբենի հաջորդ տառերը՝ գ, դ (իսկ Վանչոն՝ թերևս սլավոնական այբուբենի երրորդ՝ վ տառը): Իմ հարցումների արդյունքում պարզվեց, որ այս հաշվերգը Երևանում լայն տարածված է եղել արդեն 1920–ականների սկզբից (ինֆորմանտ՝ Մինասյան Մարգո, ծն. 1917, Երևան), և մինչ օրս մնում է հայ մանուկների մեջ ամենասիրված ու ամենատարածված հաշվերգը: Սկզբնապես տարածված է եղել տղաների միջավայրում, դե տղաներն են կապիտան դառնում: Այն հայտնի է Հայաստանի բոլոր շրջաններից և նույնիսկ Հայաստանից դուրս (Թբիլիսի, Ջավախք, Արցախ): Մնում է միայն գուշակել, թե ինչպես պիտի բուլղարական հաշվերգը Հայաստան հասներ թռչելով Ռուսաստանի ու Թուրքիայի վրայով, որտեղ այն չկա և չի եղել: Եվ այն էլ մինչև 1920–ական թվականների առաջին հայրենադարձությունը Բուլղարիայից և մյուս երկրներից:

Բուղկա–բուղկա–բե, բե,
Աբես–ֆաբես գումարե,
Ռիկի–չիկի ամաչիկի,
Օֆ, լեն, գլեն:

Սա ևս այնքան էլ ռուսական չէ, թեև մեզ է հասել, ակնհայտորեն, Ռուսաստանից:

Эники, беники, цока, тамэ,
абель, фабель, гуманэ …

Սրա մի տարբերակը վերջանում է այսպես՝

Ики, пики, драматики,
Флёнус вышел вон.

Այստեղից էլ պիտի լինեն հայկականի ամաչիկին և օֆ, լեն, գլենը: Սրա մի տարբերակն է արտասանում Անգետիկը Նիկոլայ Նոսովի հայտնի գրքում, փուչիկ–օդապարիկի պայթելուց վայրկյաններ առաջ: Այս հաշվերգի տարբերակները հայտնի են հատկապես Արևելյան Եվրոպայից՝ Ուկրաինա, Հունգարիա, Բուլղարիա, Լեհաստան և այլն: Երկրորդ տողում ռուսները կարող են ասել՝ դոմանե, դուրմանե և այլն, իսկ երրորդում՝ գրամատիկի, ռոմանտիկի և այլն: Այստեղ առկա է լատինական (կաթոլիկական, աստվածաշնչյան) ազդեցությունը, թերևս գերմանական միջնորդությամբ, հմմտ. գերմանական մի հաշվերգի սկիզբը՝

Eini, beini, dizife,
Abel, Fabel, domine...

Այս տեքստերի առաջին տողում լատինական այբուբենի առաջին տառերի աղավաղված ձևեր են (ա, բե ցե, դե, գերմանականում՝ ա–ն խառնված է ein «մեկի» հետ. ամեն վանկի վերջում ավելացված են «գաղտնալեզվային» վանկեր՝ -ինի կամ -կատա, հմմտ. և ռուսական հաշվերգերի հանրահայտ և անհասկանալի *эники–беники*–ն (ծագումով՝ գերմանական): Երկրորդում աստվածաշնչյան Աբել անունն է, հանգավորված գերմաներեն Fabel «առակ» բառով (լատինական fabula–ից), կամ՝ լատիներեն faber «հմուտ, ճարտար» բառն է, հանգավորված aber–ով (հիշենք Մաքս Ֆրիշի «Հոմո Ֆաբեր» վեպը, որտեղ այն հերոսի և՛ բնութագրիչն է, և՛ ազգանունը): Ապա գալիս է гуманэ՝ լատիներեն humanus «մարդկային», կամ domine՝ լատիներեն կոչական «տե՛ր (աստված, Քրիստոս, հոգևորական)» դիմելաձևը, տարածված ողջ արևմտաքրիստոնեական աշխարհում:

Թվում էր, թե հայ մանուկների բանահյուսության կողմից կանխադրված կարևոր դեպքերը մեզանում ի հայտ են գալիս մեկուկես տասնամյակը մեկ և հերթական պատմական քառատողը պիտի իմաստավորվեր XXI դարի սկզբին: Բայց պարզվեց, որ ես թերագնահատել էի մեր մանուկների ստեղծագործական ներուժը...

Կարելի է խոսել ընդհանրապես մանկական բանահյուսության մարգարեական բնույթի մասին: Բուդկա–բուդկան, ակիայտորեն, ակնարկում է անկախության տարիների մեծագույն նվաճումներից մեկի՝ «ազատ շուկայական հարաբերությունների» երկրորդ փուլը, քանզի այն մեզանում հետևյալ էվոլյուցիան ունեցավ՝ 1. սեղանիկ, 2. բուդկա, 3. (սուպեր) մարկետ: Այդ փուլի խորհրդանիշը, ռուսերեն բուդկան, սրընթաց առաջընթացի մի պահի վերանվանվեց համարյա նույնիմաստ և համարյա համահունչ բուտիկի (երկու բառերն էլ գալիս են Ռուսաստանից, մեկն ունի գերմանական, մյուսը՝ ֆրանսիական ծագում): Առաջ սովոր էինք ամեն ինչ թարգմանել, և բուդկան կրպակ էր, իսկ հիմա՝ վիրավորական կլիներ բուտիկը կրպակ անվանել՝ դա այնպիսի մի բուդկա է, որտեղ մոդայիկ ու ավելի թանկարժեք բաներ են վաճառվում: Այդ բուդկա–բուտիկները խռնվում, բազմապատկվում, գումարվում էին իրար Երևանի փողոցների ամենաանսպասելի մասերում կախարդի փայտիկի թափ տալու արագությամբ՝ ահա և «աբես, ֆաբես, գումարե»: […]

Ալա–բալա–նիցան ուներ իր շարունակությունը՝

Ալա–բալա–նիցա,
Դուս կաբանիցա,
Հեյ գիդի Վանչո,
Նաշ կապիրանչո,
Փա(յ)լանչո:
Մալականի պոպոնչո:
Պոպոնչոն (կամ՝ *փալանչոն*) *էլ մի բան չի,*
Գնա Վանոյին կանչի:

Հայկական հանճարը սկզբից միայն մեկ բառ էր ավելացրել բուլղարական տեքստին, հանգավորելով վերջին երկու տողերի հետ՝ փալանչո կամ փայլանչո: Վերջինս նշանակում է «ծաղրածու» և թերևս միջնորդավորված փոխառություն է իտալերեն պայյաչչո–ից (որը մեզանում, անխուսափելի ռուսերենից, գերմանական ազդեցությամբ, կոչվում է պայաց): Ռուջերո Լեոնկավալլոյի «Պայյաչչի» (Պայացներ) օպերան համաշխարհային օպերային

արվեստի ամենահայտնի գործերից է, ողբերգական մի պատմություն թափառաշրջիկ խեղկատակների կյանքից: Նրանք խաղում են մի ֆարս, որտեղ պայաչչո–պայացը, խաբված ամուսնու դերակատարը՝ ինքն էլ կյանքում խաբված մի ամուսին, բեմի վրա իրոք սպանում է իր կնոջը: […]

Իտալերեն պայյաչչոն (*pagliaccio*) հնում հնչել է պալյաչչո, որից թուրքե-
րեն նույնիմաստ փալյաչո, որը մի քիչ աղավաղվել է, թերևս «հիբրիդացվել»
լարախաղացի խեղկատակի թուրքերեն կոչման՝ յալանչիի («կեղծ, խաբեբա»)
հետ: Օ՛, անմոռանալի թուրքերեն... Առաջ ասում էին՝ «թուրքն անիծած, խոս-
քը՝ օրհնած»: Իսկ հիմա թուրքական կլկլոցը, բնիկ ռուս–հայկական, աշխա-
տավորական–սովետական–սոցիալիստական «ռաբիսի» (*работник искус-
ства*–ի հապավումն է) անվան տակ, դուրս է մղել ամեն հայկականը և ընդ-
հանրապես ամեն ոչ թուրքականը մեր երաժշտական մշակույթից: Բայց, այ,
թուրքերեն բառերը մեզանում հազվադեպ են և մնացել են «նորմալ» հոմա-
նիշ բառերի կողքին միայն բարբառներում, ժարգոնում և գրական լեզվի
«ժողովրդական ոճում», խոսքին ինչ–որ առանձնահատուկ, հաճախ հեգնա-
կան, պարոդիկ, ծաղրական իմաստ, ֆարսի երանգ հաղորդելու համար:
Կորցրել են իրենց «օրհնած» անցյալը ու այդ հատկանիշը փոխանցել երաժշ-
տությանը: Ասենք, լարախաղացը սովորական անկիրք ու չեզոք բառ է, իսկ
քյանդրբա՞զը... Դա ադրբեջանական թուրքերենում հենց նշանակում է «լա-
րախաղաց»՝ քյանդիր «լար, ճոպան», բազ «խաղացող» (ծագումով՝ իրանա-
կան): Բայց հայերենում քյանդրբազը հատուկ տեսակի լարախաղաց է, լա-
րախաղացի պարոդիան, ծաղրապատկերը, որն, օրինակ, սատանի մայլում
է քյանդրբազություն անում և ձախողվում: Ծաղրածուն էլ չեզոք է ու ան-
կիրք, իսկ յալանչին, քյանդրբազի ծաղրածուն, նույն տրամաբանությամբ,
սովորական ծաղրածուի ծաղրապատկերն է: Փայլանչոն, որն ավելի հազ-
վադեպ բառ է, յալանչիի բացառիկ տեսակն է...

Հաշվերգում փայլանչոն հնչում է փալանչո, այսինքն՝ այդ ծաղրապատկե-
րային ծաղրածուն խառնվել է համահունչ թուրքերեն փալանի՝ էշի համետի
ծածկոց–թամբի և փալանչիի՝ էշի ծածկոց ու թամբ սարքող վարպետի հետ:
Իրոք, մեր մանուկների հումորն անսահման է՝ պարոդիա՝ պարոդիայի վրա՝
ծաղրվում է ծաղրանմանակը: Մեր բազմահմուտ մանուկները տեղում թարգ-

մանել են փալանը ռուսերեն՝ պոպոնա, հանգավորել նախորդ տողերի հետ՝ պոպոնչո, և հավելել՝ մալականի պոպոնչո, այսինքն՝ ռուսերեն պոպոնչո: […]

Ինչևէ, մեր մանուկների ամենապայծառատեսական, ամենամարգարեական հաշվերգը հետևյալն է:

Փուչիկը ընկավ սեղանի տակ,
Մի օր, մի օր՝
Գլմփ:

Սա պատկանում է հաշվերգերի մի տարատեսակի, հմմտ. օրինակ, ռուսական՝

Катилось яблочко по огороду

И упало прямо в воду —

Бульк!..

Բայց որքան ավելի փիլիսոփական է մերը... Ես չգիտեմ նրա ստեղծման և տարածման ժամանակը: Հնարավոր է, որ բավական հին է, բայց ուշ է լայնորեն տարածվել և հանրահայտ դարձել: Ես էլ շատ ուշ եմ իմացել այն: Այստեղ հանճարեղ է և հանճարեղորեն պարզ է ամեն ինչ: Այն հիշեցնում է Անտոն Չեխովի հայտնի արտահայտությունը՝ «եթե պիեսի առաջին գործողությունում պատից հրացան է կախված, ապա վերջինում այն անպայման պիտի կրակի»: Իսկ հայ մանուկները ավելի պարզ են ձևակերպել՝ եթե կա փուչիկ, ապա ինչքան էլ ապահով տեղ ընկնի այն, միևնույն է, մի օր անպայման պիտի պայթի: Փուչիկ ասելով կարելի է հասկանալ, օրինակ, ամեն ինչ՝ և ընդհանրապես, կյանքը, չէ՞ որ հայտնի խոսք է՝ «կյանքը փուչ է»: Դե երեխաների փուչը փոքրիկ փուչ է՝ փուչիկ: Եվ անպայմանորեն պիտի պայթի ամեն մի դատարկ ու հիմար բան, ինչպես ամեն մի փուչիկ, ինչքան էլ լավ ու տաք տեղ ընկնի այն... Սա համընդհանուր, տիեզերական մարգարեություն է, տարածության և ժամանակի, կյանքի և իրականության մշտնջենական բանաձև:

Բայց շարունակենք՝

Օ, օ, օպերա,
Թթուն դնեմ թող երա...

Օպերայի հրապարակը, Ղարաբաղյան շարժման սկզբից և ԽՍՀՄ անկումից հետո էլ, ահա քառորդ դար դեռ շարունակում է եռալ ու փոթորկվել... […]

Փետրվար 2013

Armen Petrosyan

MODERN LORE OF ARMENIAN SCHOOLCHILDREN: AN INCOMPLETE HUMOROUS STUDY

Summary

This brief presentation deals with a series of relatively new Armenian counting rhymes. Although popular in the playground, in school environment and remarkably consistent from school to school, these jewels of nursery lore have hardly ever become objects of folkloristic study, which has mainly focused on traditional culture of child population.

ԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ԼՈՒՍԱԲԵՐ» ԴԱՍԱԳՐՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մանկավարժության պատմության մեջ իր ուրույն դերն ու տեղն ունի մանկավարժ, թարգմանիչ, գրական–հասարակական գործիչ Ստեփան Լիսիցյանը: Դեռևս 1890–ական թվականից Լիսիցյան ամուսինները փորձում էին հիմնել տարրական դպրոց, որը նրանց մեծ դժվարությամբ հաջողվեց միայն 1898 թ.: Տարրական դպրոցը գոյատևեց տասներեք տարի, այն հիմնականում աշակերտներին նախապատրաստում էր գիմնազիա ընդունվելու (Մարտիրոսյան 1989, 102): Տարիներ անց, աշակերտների քանակի ավելացմամբ, դպրոցը վերածվում է պրոգիմնազիայի: 1911 թ. նոյեմբերին Ստ. Լիսիցյանը որդուն՝ Լևոնին, գրում է, թե արդեն հարյուր աշակերտ ունեն, որոնցից երեքը՝ ձրի, «Հովհաննեսի որդին՝ Արեգը, Խնկոյանի աղջիկը և Թամուսիկը» (ԳԱԹ, Ստ. Լիսիցյան ֆոնդ, 79):

Տարիների մանկավարժական փորձը Լիսիցյանին մշտապես հուշում էր նոր դասագրքեր կազմելու անհրաժեշտության մասին՝ հատկապես տարրական դասարանների համար: Նույն խնդրով մտահոգված էր նաև հայ մեծ բանաստեղծը՝ Հովհ. Թումանյանը: Նա հաճախ էր մամուլում հանդես գալիս դասագրքերի կազմելու, իր երկերը դասագրքերում աղավաղելու, նաև այլ կարգի թերությունների հարցերով:

1907 թ. Անդրկովկասյան ուսումնական հոգաբարձությունը թույլատրում է Ստ. Լիսիցյանին Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի հետ միասին դասագիրք հրատարակել:

Թումանյանի համար, իհարկե, անբարենպաստ շրջան էր. նոր էր վերադարձել Բաթումից, որտեղ Հյուսիսային ընկերության շոգենավից ապրանք իջեցնելու ընթացքում ընդհարում էր տեղի ունեցել հայ և օտարազգի բան-

Հոդվածն առաջին անգամ հրապարակվել է «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագրում (հասարակական գիտություններ)», 1959, № 2, էջ 65–76: Վերահրապարակվում է հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1959 Общественные науки

Մ. Ն. Հակոբյան

«ԱՂԲՅՈՒՐ» ԱՄՍԱԳԻՐԸ

(Ընդհանուր ակնարկ)

Թեև հայ մամուլի պատմությունը սկզբնավորվում է 18-րդ դարի վերջերից, հայ մանկական մամուլի հիմքը դրվել է համեմատաբար ուշ՝ XIX դարի 80-ական թվականներին։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ հայ իրականությունը, այլ հարցերի հետ միասին, հրամայաբար առաջ էր քաշել նաև մանկական հատուկ մամուլ ստեղծելու կենսական պահանջը։ 1883 թ. Թիֆլիսում հիմնադրվեց և լույս ընծայվեց «Աղբյուր» մանկական ամսագիրը։

«Աղբյուր» մանկական ամսագրի լույս ընծայման մասին առաջին անգամ հայտարարություն է տպագրվել Տ. Նազարյանի հրատարակությամբ 1882 թ. լույս տեսած Կ. Մելիք-Շահնազարյանի «Ղըլցէ կնանոց պընը-փէշակը» գրքույկի հավելվածում։ Այդ հայտարարության մեջ ասված է, որ ամսագիրը կհրատարակվի որպես Տ. Նազարյանի հրատարակությունների երկրորդ սերիա, որ այն լույս կտեսնի պատկերազարդ և ամեն ամիս։ Ըստ հայտարարության նրա առաջին համարը նախատեսվում էր հրատարակել հունվարին (1883 թ.)։

«Աղբյուր»-ի առաջին համարը տպագրվել է Մովսես Վարդանյանի տպարանում[1]։ Այդ համարի բաժանորդների թիվը շատ փոքր էր՝ ընդամենը 28 մարդ (մի այլ վկայությամբ՝ 30). «Աղբյուր»-ն առաջին մանկական ամսագիրն էր ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլ նաև ամբողջ Անդրկովկասում։ Նրա կազմակերպման ու հրատարակման գործին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև այդ տարիներին Թիֆլիսում գտնվող ռուս գրող-մանկավարժ Սոլովյով-Նեսմելովը, ինչպես նաև վրացի և ադրբեջանցի մի շարք ընկերներ։ Կիևի և Կազանի համալսարանների նախկին ուսանող Գ. Միրզոյանի և ռուս գրող-մանկավարժի ակտիվ մասնակցությունն ու աշխատակցությունը «Աղբյուր»-ին, մանավանդ ամսագրի մի շարք նյութերը, իրավունք են տալիս ենթադրելու, որ ամսագրի ծրագիրը մշակելու ժամանակ հաշվի է առնըվել ռուսական մանկական ժուռնալիստիկայի երկարամյա և հարուստ փորձը[2]։

Ի՞նչ սկզբունքներով էր առաջնորդվում «Աղբյուր» մանկական ամսագիրը։

«Աղբյուր»-ի ծրագիրը շարադրվել է ամսագրի առաջին համարի հավելվածում՝ «Խմբագրության կողմից» հոդվածում և ուրիշ նյութերում, որոնք գերազանցապես պատկանում են Գաբրիել Միրզոյանի (Գարո) գրչին։ Այդ խմբագրականը, ինչպես նաև, այսպես ասած, ծրագրային մյուս նյութերը, գրե-

---

[1] Առաջին համարն անորակ տպագրված լինելու և շատ վրիպակներ պարունակելու պատճառով ամբողջությամբ նորից է տպագրվել, բայց արդեն Հովհ. Մարտիրոսյանի հարուստ տպարանում. «Երկրորդ անգամ միևնույն համարի տպագրելը մեր սրբազան պարտքը համարեցինք»,— այդ առթիվ գրում է Տ. Նազարյանը ամսագրի 3-րդ համարում։

[2] Ռուսերեն լեզվով առաջին մանկական ամսագիրը («Детское чтение») գրող Ն. Կարամզինի ակտիվ մասնակցությամբ հրատարակել է Ն. Ի. Նովիկովը՝ 1785 թ. սկսած։

թե առանց որևէ փոփոխության, արտատպվել են 25 տարի հետո՝ 1908 թ. ամսագրի № 2-ում՝ «Դեպի ու՞ր» վերնագրով։ Հենց միայն այս փաստը վկայում է այն մասին, որ «Աղբյուր»-ն ունեցել է հաստատուն, մեկընդմիշտ որոշված սկզբունքներ, որոնց նա չի դավաճանել իր բավականաչափ երկար կյանքի ընթացքում։

Անդրադառնանք այդ սկզբունքներից մի քանիսին։

Խոսելով մատաղ սերնդին կրթելու և դաստիարակելու անհրաժեշտության մասին, «Աղբյուր»-ը իր առաջին համարի հավելվածում մատնանշում է, որ օր-օրի վրա խիստ զգալի է դառնում այնպիսի մի հրատարակության անհրաժեշտությունը, որն իրեն նպատակ դնի «առաջնորդել մատաղ հասարակությունները. ցանել նրանց մեջ ազնիվ մարդ լինելու սերմեր, զարթեցնել և զարգացնել նրանց մեջ ազնիվ. բարի ձգտումներ և արմատախիլ անել չար ու վնասակար որոմը...»։ Տիգրան Նազարյանը և նրա համախոհները, ձեռնամուխ լինելով «Աղբյուր»-ի հրատարակմանը, նպատակ էին դրել ստեղծել մի այնպիսի պարբերական, որը սպասարկի միայն մանուկներին. ընթերցողների մեջ դաստիարակի բնավորության ազնիվ գծեր, նրանց դարձնի հասարակության օգտակար մարդիկ։ «Աղբյուր»-ի նպատակն է,— գրում է երիտասարդ հրատարակիչ-խմբագիրը նույն տեղում,— հայ սերնդի մեջ զարթեցնել պատվասիրության զգացմունքները, զարգացնել հայ երեխայի մեջ սեր դեպի իր շրջապատողները, բարի նախանձ դեպի ամեն վսեմը, ազնիվը և ատելություն դեպի ամեն վնասակարն ու չարը...»։

Այսպիսով, նորաստեղծ ամսագրի խմբագրությունն իր առջև դաստիարակչական խնդիրներ է դնում։

Աճող սերնդին դաստիարակելու համար մանկական ամսագիրը միայն մի միջոց ուներ՝ ընթերցանության լավ, նպատակահարմար նյութ տալ երեխաներին։ Մանկական ընթերցանությունը, ըստ «Աղբյուր»-ի, մանուկներին զարգացնելու ամենազորեղ միջոցներից մեկն է։ Ելնելով դրանից, «Աղբյուր»-ը խոստանում էր իր մանուկ ընթերցողներին տալ այնպիսի ստեղծագործություններ, որոնք «ողողելով մեր փոքրիկ և քաղցր ընթերցողների հոգին և սրտերը պարարտ հող պետք է պատրաստեն ապագայում պտղաբեր սերմեր աճեցնելու մարդկության...»[3]։

Բայց որտեղի՞ց պետք է սներ «Աղբյուր»-ը, ի՞նչ ստեղծագործություններ նա պետք է տպագրեր։ Այս հարցում ևս «Աղբյուր»-ն ունի իր որոշակի, հաստատուն տեսակետները։

«Աղբյուր»-ի ակները,— ասված է վերոհիշյալ խմբագրականում,— հոսում են ժողովրդական հեքիաթներից, զրույցներից, խաղերից, ավանդություններից...»։ Ուրեմն մանկական ամսագրի նպատակն է լինելու ամենից առաջ տեղ տալ ժողովրդական ստեղծագործություններին, դրանց օգնով դաստիարակել մանուկներին։ «Աղբյուր»-ը լավ է հասկացել, թե ինչ գանձեր են պարունակում ժողովրդական հեքիաթները։ «Բոլոր հեքիաթները,— գրում է «Աղբյուր»-ը իր 1908 թ. երկրորդ համարում,— մեր առջև բաց են անում երևակայության անհուն ծով. անվերջ հրաշքներ ու սքանչելիքներ և մարդկային խելքի անընդհատ ստեղծագործություններ... Հեքիաթների մեջ են հավաքված մի ժո-

---

[3] «Աղբյուր», 1883, հավելված № 1, էջ 1։

զովրդի, մի ազգի առասպելական-պատմական, բարոյական, կրոնական ու գիտական հայացքները»[4]։

Հեքիաթներին զուգահեռ, մանկական ամսագիրը նպատակ է դնում լայն տեղ տալ նաև առակներին։ Ժողովրդական զրույցներից ընտրվում են այնպիսիները, որոնք պարզ են, հասկանալի և նպաստում են այն բանին, որ «մանուկի զարգացումն ընթանա բնական ճանապարհով»։

Բայց ժողովրդական բանահյուսությամբ բավարարվելը քիչ էր։ Մանկական ամսագիրը պետք է նպաստեր մանկական գրականության զարգացմանը, ցույց տար այն ուղիները, որոնցով պետք է ընթանան մանկական գրողներն ու բանաստեղծները։ Եվ «Աղբյուր»-ն առաջադրում է իր պահանջները մանկական գրականության նկատմամբ, իր խոսքն ասում հրապարակում եղած ստեղծագործությունների մասին։ Մանկական գրականության նպատակը, ըստ «Աղբյուր»-ի, պետք է լինի ոչ թե երեխաներին բարոյականություն սովորեցնելը, այլ այն զարգացնելը։ Իսկ դրան կարելի է հասնել այն դեպքում, երբ «մանկական ընթերցանության նյութը գրած կլինի պարզ, մանուկներին մատչելի լեզվով, ...երբ հերոսները շինծու տիպեր չեն լինի։ ...Կեղծավորությունը և փարիսեցիությունը չպետք է տիրապետի մանկական գրականության մեջ»[5]։

Ի պատիվ «Աղբյուր»-ի, պետք է նշել նաև նրա որոշակի բացասական վերաբերմունքը մանկական գրականության մեջ կրոնական հայացքներ զարգացնելու նկատմամբ։ «Մեր կարծիքով,— գրում է «Աղբյուր»-ը «Մանուկները և նրանց ընթերցանությունը» հոդվածում,— մանկական գրքերը պետք է հեռու լինեն կ ր ո ն ա կ ա ն ձգտումներից, որովհետև այդպիսիները գրվում են նախագծված նպատակներով, որը արդեն գիրքը անպետք է դարձնում...»[6]։

Հակադրվելով երեխաներին շահամոլության ոգով դաստիարակելու փորձերին, «Աղբյուր»-ը կրքոտությամբ նկատում է. «Ո՛չ, մենք վերջապես պետք է սովորեցնենք մեր մանուկներին աշխատել, մենք պետք է զարթեցնենք նրանց մեջ սեր դեպի քրտինք, դեպի գործունեություն, թող նա սիրի իր շրջանը և չմոռանա անձնապատվությունը, թող նա ապագայում հույս դնի իր ս ե փ ա կ ա ն ուժերի վրա, թող նա ինքնավստահ լինի»[7]։ Երեխան պետք է ինքը հաղթահարի դժվարությունները։ Նա պետք է ոչ թե դայակի օգնությամբ ման գալ սովորի, ոչ թե մտածի «հենվել ուրիշի վրա», այլ նա պետք է սեփական ուժերի գործադրմամբ ոտքի կանգնի, որպեսզի մկանները շուտ զարգանան։ «Նույնը պետք է նկատել մտավոր և բարոյական զարգացման վերաբերմամբ»,— եզրակացնում է «Աղբյուր»-ը։

Հատուկ պետք է մատնանշել «Աղբյուր»-ի հայացքները երեխաների բարոյական դաստիարակության վերաբերյալ։ Այդ գաղափարները արտահայտված են ամսագրի 1884 թ. № 8—9 հավելվածի «Մեր բարոյական զարգացումը» խմբագրական հոդվածում։ Այստեղ խնդիր է դրվում պայքարել այն ամենի դեմ, ինչ առաջանում է խավար տգիտությունից մի կողմից և հիմնավոր բարոյական դաստիարակության բացակայությունից մյուս կողմից։

[4] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, 1908 թ., № 2, էջ 32։
[5] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, 1884, հավելված № 3, էջ 3—4։
[6] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, էջ 3։
[7] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, 1883, հավելված № 1, էջ 6։

Ամսագիրը բարոյական ճիշտ դաստիարակությունը կապում է գիտությունների ուսուցման, կրթության, զարգացման հետ և գտնում է, որ «այնտեղ, ուր տիրում է տգիտությունը, խոսք չկա, որ չեն կարող տեղի ունենալ նաև բարոյական սկզբունքները», քանի որ «բարոյական պրինցիպները զարգացած հասարակական կյանքի ծնունդն են»[8]։ Դնելով բարոյական կրթությունը մտավոր զարգացման հետ շաղկապելու խնդիրը, ամսագիրը խարազանում է «լավ մարդ» դառնալու իր ժամանակի հասկացողությունը և ընդգծում, որ իր նպատակն է «նպաստել բարոյական դաստիարակության գործին», անողոք պայքար մղել «նեղ ես»-ի դեմ և իրար միացնել «ես»-ի և «դու»-ի գաղափարները։

«Աղբյուր»-ը ցասումով է խոսում վնասակար գաղափարներ քարոզող առանձին մանկական վեպիկների մասին։ Իր առաջին համարներից մեկի հավելվածում վերլուծելով «Կառնուկ» և «Լուսատտիկ» թարգմանական վեպիկները, «Աղբյուր»-ը բացահայտ զայրույթով նկատում է. «Այդ վեպիկների մեջ շրջում են մի կողմից բուրժուաների անշունչ ստվերները, իսկ մյուս կողմից կղերական բարբարները—ոչ մի կենդանի պատկեր, ոչ մի կենդանի խոսք... բոլորը շինծու, փքած ֆրազներ, մոլեռանդ հոգեպաշտություն՝ գերբնական ուժի վրա հիմնված ակնկալություններ. ամեն մի երեսի վրա հրաշքների նման անսպասելի, անբնական դեպքեր, նյութական վարձատրություններ... Սա ինչ բուրժուազական գաղափարներ են. միթե այս տեսակ մտքեր ու խոսքեր կարելի է համբերությամբ կարդալ որևիցե մանկական գրվածքի մեջ...»[9]։

Հաջորդ համարներից մեկում «Աղբյուր»-ը այդ «տուրվականներին», «բուրժուազական գաղափարներին» հակադրում է Ղ. Աղայանի կերտած հերոսները, բարձր գնահատում նրա ստեղծագործությունը, մասնավորապես «Անահիտը»։ Նա գտնում է, որ Աղայանի ստեղծագործությունը պետք է դարձնել «հայ մանուկների գեղարվեստական ճաշակը զարգացնելու միջոցներից մեկը»։

Երեխաների մեջ աշխատասիրություն, ազնվություն դաստիարակելու հետ միասին «Աղբյուր»-ը խորհուրդ է տալիս միաժամանակ սեր արթնացնել դեպի բնական գիտությունը, դեպի կենդանի բնությունը, հաճախակի ճանապարհորդել, երեխաներին դաստիարակել «մեծ մարդկանց» օրինակով։ «Այսպես գրում է նա,— ծանոթացրեք մանուկներին ճշմարիտ, իսկական կյանքի հետ, ցույց տվեցեք նրանց, որտեղ է իսկական կյանքը... ծանոթացրեք մանուկներին անցյալի և ներկայի հետ կենդանի պատկերների մեջ, ծանոթացրեք զանազան ուժի և կամքի տեր մարդերի կյանքի հետ»[10]։

«Մանուկներին ցույց տալ «իսկական կյանքը», նրա «փշերը և վարդերը»,— այս նշանաբանն էր գրված «Աղբյուր»-ի դրոշի վրա, և կարելի է ասել, որ նա, ընդհանուր առմամբ, հավատարիմ է մնացել այդ նշանաբանին, ձգտել է ճիշտ ուղիով տանել մանուկների դաստիարակության գործը։ Ամսագրում տպագրված հեքիաթների, պատմվածքների, բանաստեղծությունների, զրույցների, գեղարվեստական մյուս գործերի, նշանավոր մարդկանց կյանքին նվիրված նյութերի միջով կարմիր թելի պես անցնում է հենց այն գաղափարը, թե հարկավոր է, որքան կարելի է, պարզ ու ճշմարտացի ցույց տալ կյանքը, երե-

[8] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, 1884, հավելված № 8—9, էջ 28։
[9] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, 1883, հավելված № 2 էջ 18, 19։
[10] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, 1884, հավելված № 3, էջ 3։

խաներին նախապատրաստել այդ կյանքի համար, նրա «փշերի և վարդերի» համար։

Առաջնորդվելով բավականին առողջ սկզբունքներով, «Աղբյուր»-ը բռնել է ժամանակի քննությունը։ Նա 35 տարի շարունակ «հայ մանկան ամենալավ ընկերը, բարեկամն ու դպրոցն» էր։

Երեսունհինգ տարի. դա հայ պարբերական մամուլի պատմության բացառիկ երևույթներից է[11]։ Այսօր էլ, երբ չորս տասնյակ տարուց ավելի ժամանակ է անցել այն օրից, ինչ լույս է տեսել «Աղբյուր»-ի վերջին համարը, մանկական այդ ամսագիրը ակնածանք է ներշնչում։ Նրա էջերում տեղ են գտել բազմաթիվ ու բազմազան մանկական վեպիկներ, զրույցներ, հեքիաթներ, ճամփորդական և կենսագրական նոթեր, բանաստեղծություններ, գիտության ու արվեստի, կենդանիների ու թռչունների մասին գրված հոդվածներ, հետաքրքրական տեղեկություններ, զվարճալիքներ, խնդիրներ, անեկդոտներ, երգեր։ Ամսագիրը պատկերազարդ էր, ձևավորվում էր պարզ և ճաշակով, տպագրվում խնամքով, բարձրորակ թղթի վրա, տեքստերը շարվում էին խոշոր, դյուրընթեռնելի տառերով։ Մի խոսքով, «Աղբյուր»-ը իսկական մանկական ամսագիր էր այդ արտահայտության բովանդակ իմաստով։

Վերցնենք ամսագրի առաջին համարը։ Նրա շապիկը՝ հայկական բնաշխարհի մի սքանչելի պատկերով[12], արդեն իսկ արթնացնում է ընթերցողի հետաքրքրությունը։ Առաջին համարը բացվում է Ղ. Աղայանի «Շնորհավոր Նոր տարի» բանաստեղծությամբ։ Նրանում տեղ են գտել «Ուրիշի բունը քեզ բուն չի դառնա» թարգմանական պատմվածքը, երկու հեքիաթներ, ապա Րաֆֆու կատարած փոխադրությունը Տուրգենևից[13], «Այլ և այլք» բաժնում տպագրված են մի շարք, այսպես ասած, թեթև ընթերցանության նյութեր, իսկ «Զվարճալիք» բաժինը կազմված է հանելուկներից, շուտասելուկներից, կատակներից, հետաքրքրական առաջադրանքներից, խնդիրներից, ռեբուսներից։ Ամսագրի վերջում տպագրված է «Սիրուն թիթեռ ինձ ասա» հանրահայտ երգը՝ եվրոպական սիստեմի ձայնանիշերով։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ամսագրի առաջին համարը բավականաչափ բազմազան է իր ընդգրկումով ու նյութի առատությամբ։ Նրանում երիտասարդ, ընթերցողներին դեռևս անհայտ հեղինակների կողքին տեղ են գտել նաև Աղայանն ու Րաֆֆին։ Այստեղ գեղարվեստական ընթերցանության նյութերից բացի, որոնք գրավում են ամսագրի երկու երրորդ մասը 30 էջը, կան նաև ժամանցի շատ նյութեր, որոնք, անշուշտ, խիստ անհրաժեշտ են մանկական ամսագրի համար։ Նյութերի սկզբնատառերը և վերջնա-

11 Գ. Լևոնյանի տվյալներով միայն 36 պարբերական է երեսուն տարուց ավելի հրատարակվել։

12 «Աղբյուր»-ի շապիկանկարը առաջին համարից մինչև վերջինը մնացել է անփոփոխ։ Այդ նկարը պատկանում է ռուսական „Родник" ամսագրի նկարիչ Կարազինի վրձինին։ Նկարիչն այդ կտավը ստեղծելիս հիմք է ընդունել Րաֆֆու Ղարաբաղում կատարած ճանապարհորդական նյութերի այն հատվածը, որը «Ջրաբերդ» վերնագրով տպագրվել է ամսագրի 1883 թվականի երկրորդ համարում։ «Աղբյուր»-ի հակառակորդները, հարձակումներ գործելով խմբագրության դեմ, մեծ գրողի այդ հոյակապ բնանկարը համարել են «անբարոյականացնող»։

13 Եթե չենք սխալվում, սա ռուս գրողի ստեղծագործություններից կատարված առաջին թարգմանությունն է հայերեն։

նկարները, որոնք աշխուժություն են հաղորդում ամսագրին, կատարված են բարձր ճաշակով։

Ընթերցանության առատ, խնամքով ընտրված և նպատակայաց նյութեր, անվանի բանաստեղծների և գրողների մասնակցություն, ժողովրդական բանահյուսության նմուշներ, ժամանցի նյութեր, ճաշակով տպագրություն և պատկերազարդում,—ահա ինչն է բնորոշ «Աղբյուր»-ի առաջին համարներին։ Այդ հատկանիշները բնորոշ են նաև «Աղբյուր»-ի հետագա գրեթե բոլոր տարիների համարներին՝ մասնավորապես ամսագրի գոյության առաջին կեսին։

Ահա մի քանի փաստեր «Աղբյուր»-ի առաջին տարվա մասին։ Լույս տեսած 12 համարներում տպագրվել են մոտ երկու տասնյակ բանաստեղծություններ և նույնքան էլ պատմվածքներ, ընթերցանության շատ այլ նյութեր։ Դրանց հեղինակներն են Ղ. Աղայանը, Րաֆֆին, Կ. Մելիք-Շահնազարյանը, Ա. Միհրաբյանը (Սրինգ), Վ. Փափազյանը, Դ. Բախուդարյանը, Մ. Փամփուխչյանը, Ս. Բամալյանը և ուրիշներ։ «Աղբյուր»-ի առաջին տարվա ինն համարներում շարունակաբար տպագրվել է «Փալտաշեն խրճիթից սպիտակ տունը» վիպակը, որն անգլերենից փոխադրել են Ն. Տեր-Ավետիքյանը և Լ. Մելիք-Ադամյանցը։ Վիպակի նպատակն է ընթերցողների մեջ աշխատասիրություն և նպատակասլացություն դաստիարակել։ Առաջին տարվա ընթացքում «Աղբյուր»-ի յոթը համարներում լույս են տեսել ժողովրդական հեքիաթներ, առասպելներ ու զրույցներ։

1883 թ. ընթացքում «Աղբյուր»-ը հրատարակել է ռուսական, վրացական և անգլիական ժողովրդական հեքիաթներ, այս լեզուներից արված մի շարք փոխադրություններ, ինչպես նաև Տուրգենևից, Սոլովյով-Նեսմելովից, Գարշինից[14] և Ալֆոնս Էսկիրոսից արված թարգմանություններ։ Ամսագիրն առաջին տարում, բացի գեղարվեստական ընթերցանության նյութերի բաժնից, ուներ նաև հետևյալ բաժինները «Այլ և այլք», «Զվարճալիքներ», «Գիտություն և արվեստ», «Հետաքրքիր տեղեկություններ», «Խառն լուրեր», «Աղբյուր»-ի պատասխանները», «Հայտարարություններ»։ Հետագա տարիներին «Աղբյուր»-ի բաժիններն ավելի բազմազան են դարձել։

«Աղբյուր»-ը միշտ հրատարակել և գլխավորապես խմբագրել է նրա ստեղծողը՝ Տիգրան Նազարյանը[15]։ Բայց առանձին ժամանակաշրջաններում և առանձին համարների խմբագիրները եղել են զանազան մարդիկ։ Առաջին երկուս ու կես տարում «Աղբյուր»-ի խմբագիրը և ամբողջ գործը կազմակերպողը փաստորեն եղել է Գաբրիել Միրզոյանը (Գարո)։ Ահա թե ինչ է ասվում այդ մասին Նար-Դոսի աշխատակցությամբ 1908 թ. լույս տեսած մի գրքույկում, որը նվիրված է ամսագրի 25-ամյա հոբելյանին. «Տիգրան Նազարյանը... խմբագրական գործը լիովին վստահացել էր Գարոյին։ Գարոն էր ընտրում տպագրվելիք նյութերը, նա էր վարում «Աղբյուր»-ի Ի. բաժինը, առհասարակ նա էր ուղղություն տալիս ամսագրին, և այդ գործում զարմանալի սեր, եռանդ և հոտառություն էր ցույց տալիս»[16]։

14 Վ. Գարշինի „Attalea princeps" պատմվածքը տպագրվել է «Աղբյուր»-ի 1883 թ. № 7-ում (էջ 243—254)։ Սա ռուս գրողի առաջին թարգմանությունն է հայերեն։

15 Տ. Նազարյանի հրատարակչական-ժուռնալիստական լայն գործունեությունը առանձին ուսումնասիրության թեմա է։

16 «25-ամյակ «Աղբյուր» մանկական ամսագրի», Թիֆլիս, 1908, էջ 48։

Գաբրիել Միրզոյանը, դատելով «Աղբյուր»-ում տպագրված նրա հոդ-
վածներից, բավականաչափ զարգացած, առաջադիմական հայացքներ ունեցող
անձնավորություն էր։ Նա տոգորված էր վաթսունական թվականների գաղա-
փարներով ու ձգտումներով, հենվում էր ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների
հայացքների վրա։ Այս բանի լավագույն ապացույցն է թեկուզ «Աղբյուր»-ի
1884 թ. № 3 հավելվածում տպագրված «Մանուկները և նրանց ընթերցանու-
թյունը» վերնագրով հոդվածը՝ Վ. Գ. Բելինսկուց բերված ընդարձակ բնաբա-
նով։ Այս անստորագիր հոդվածի համադրումը Գ. Միրզոյանի (Գաբո) հոդ-
վածների հետ բերում է այն եզրակացության, որ նրա հեղինակը նույն անձ-
նավորությունն է։

Տարբեր ժամանակներում «Աղբյուր»-ի խմբագրի պարտականությունները,
մերթ մեկ կամ երկու ամսով, մերթ համեմատաբար երկար ժամկետներով,
դրված են եղել Ղ. Աղայանի, Շիրվանզադեի, Ավ. Արասխանյանի, Կ. Մար-
տիրոսյանի, Գ. Տեր-Գրիգորյանի, Դ. Լիսիցյանի, Ա. Շիլյանի և ուրիշների վրա։

«Աղբյուր»-ի ժամանակավոր խմբագիրների շարքից պետք է առանձնաց-
նել Ղ. Աղայանին, որը լուրջ ավանդ ունի «Աղբյուր»-ի հրատարակման, տա-
րածման, նրա հեղինակության բարձրացման գործում։ «Աղբյուր»-ին մշտա-
պես աշխատակցելու հրավերը Ղ. Աղայանը առաջին անգամ ստացել է 1886 թ.։
Բայց մինչ այդ էլ նա պարբերաբար հանդես էր գալիս «Աղբյուր»-ում, տպա-
գրում բանաստեղծություններ, հեքիաթներ, զրույցներ, ռուսերենից կատար-
ված թարգմանություններ, փոխադրություններ, հոդվածներ։ Մշտապես
աշխատակցելու հրավեր ստանալուց հետո Աղայանը դառնում է «Աղ-
բյուր»-ի ոգին։ Նա ամսագրում տպագրված գեղարվեստական երկերում և
մանավանդ ամսագրի հավելվածներում[17] լույս ընծայած հոդվածներում ար-
տահայտում էր իր դեմոկրատական հայացքները։

«Աղբյուր»-ին աշխատակցելու ժամանակաշրջանում Աղայանը գրում է
իր մանկական ընտիր գրվածքներից մի քանիսը՝ «Արեգնազան»-ը, «Տորք Ան-
գեղը» և այլն, որոնք առաջին անգամ տպագրվում են «Աղբյուր»-ում։ Մատ-
նանշելով այն տարիները, երբ աշխատակցում էր «Աղբյուր»-ին, Ղ. Աղայանը
հետագայում գրել է. «Աղբյուր»-ի խմբագրատանն իմ գրիչն ավելի բեղմնա-
վոր եղավ»[18]։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրոք նա հաճախակի
է հանդես եկել «Աղբյուր»-ում, իր իսկ խոսքերով ասած, այնտեղ «անկախ և
ազատ ասպարեզ ունեի»[19]։ Ոչ լրիվ տվյալներով 1883 թ. մինչև 1890 թ.
«Աղբյուր»-ում և նրա հավելվածներում Աղայանը հանդես է եկել 40 անգամ։

«Աղբյուր»-ին աշխատակցած հեղինակների ցանկը բավականաչափ պատ-
կառելի է։ Դրանց թվումն են անվանի բանաստեղծներ ու գրողներ, բանահա-
վաքներ, թարգմանիչներ, բազմաթիվ մանկավարժներ ու գրասերներ։ «Աղ-
բյուր»-ին աշխատակցածների թվում իրենց պատվավոր տեղն են բռնում
Րաֆֆին ու Ղ. Աղայանը, Դ. Բարխուդարյանն ու Հ. Հովհաննիսյանը, Ալ. Ծա-
տուրյանն ու Պ. Պռոշյանը, Լեոն ու Փ. Վարդանյանը, Հովհաննես Թուման-
յանն ու Ավետիք Իսահակյանը։

[17] «Աղբյուր»-ին կից պարբերաբար հրատարակվում էր ծնողների և մանկավարժ-
ների համար նախատեսված հավելված։ Ամսագրի այդ երկրորդ բաժնի մասին այստեղ չի
խոսվում, որովհետև այդ հավելվածների ուսումնասիրությանը կնվիրվի առանձին հոդված։

[18] «Թումանյանը քննադատ», էջ 375։

[19] Ղ. Աղայան. Իմ կյանքից, 1955, էջ 159։

Հենց սկզբնավորման շրջանից սկսած Րաֆֆին պաշտպանել և աջակցել
է «Աղբյուր»-ին։ Րաֆֆին «Աղբյուր»-ում սկսել է հանդես գալ ամսագրի
առաջին իսկ համարից։ Հաջորդ համարում նա մանուկներին է ներկայացնում
անգլիական մի զրույցի ռուսերենից կատարված փոխադրությունը և «Զրա-
բերդ» հիանալի բնապատկերը։ Այդ նույն տարում էլ (1883) նա հանդես է
գալիս «Մշակ» ընդարձակ բանաստեղծությամբ, որի նյութը վերցված է Պարս-
կաստանի և Տաճկաստանի հայերի կյանքից, ապա նաև «Ջայն տուր ով ծո-
վակ» երգ-բանաստեղծությամբ։ Ավելի բեղմնավոր մասնակցություն նա ունե-
ցավ հաջորդ տարում, երբ համարյա բոլոր համարներում երևում էր նրա
անունը։ Նա շարունակաբար տպագրում է «Պարույր Հայկազն» պատմավիպակը
և Վ. Օվսյաննիկովի «Միրզուսի» վերնագրով պատմագրական պատմվածքի
թարգմանությունը։ Հետագայում նա, բանաստեղծություններից բացի, տպա-
գրում է մի գլուխ «Կայծեր»-ի 2-րդ հատորից (1885 թ., № 4), իսկ այնուհետև՝
Հայնեից և Հյուգոյից կատարած թարգմանությունները։

«Աղբյուր»-ին ակտիվորեն մասնակցել է նաև Պ. Պռոշյանը։ Ամսագրի
1888 թ. № 3-ում տպագրվել է նրա «Բարեկենդան» հեքիաթը, իսկ № 4-ում՝
«Ջատիկը»։ Հաջորդ երեք տարում նա հանդես է եկել միայն երկու անգամ,
բայց հետո խիստ ակտիվացել է։ Դա հատկապես վերաբերում է 1892 թ., երբ
համարյա բոլոր համարներում էլ նա հանդես է եկել, հրատարակելով տարվա
բոլոր ամիսներին նվիրված գեղարվեստական պատկերներ։

«Աղբյուր»-ին առավել երկարատև աշխատակցած հեղինակներից պետք է
թվարկել Վ. Մելիք-Շահնազարյանին, Տիգրան Հովհաննիսյանին, Ալեքսանդր
Արարատյանին, Թամարա Արամյան-Ներսիսյանին, Արամ Սարգսյան-Արև-
շատյանին, Եղիշե Մարությանին, Սարգիս Թամայլանցին, Դայանե Հովհան-
նիսյան-Մատակյանին, Հար. Թումանյանին, որոնք մանկական ամսագրում
հանդես էին գալիս նրա հիմնվելու օրից։

Ինչպես արդեն նշվեց, «Աղբյուր»-ի առաջին համարներին բնորոշ է ժո-
ղովուրդների բարեկամության գաղափարը։ Այդ արժեքավոր գիծը ամսագիրը
պահպանել է նաև հետագա տարիներին։ Դա արտահայտվել է այն բանում,
որ ամսագրում պարբերաբար տեղ են գրավել այլազգի հեղինակների գըր-
վածքներ, զանազան ժողովուրդների հեքիաթներ, զրույցներ, տարբեր ցեղե-
րի ներկայացուցիչների նկարներ, հետաքրքրական տեղեկություններ՝ շատ և
շատ երկրների բնակիչների կենցաղի ու սովորությունների մասին։ «Աղ-
բյուր»-ում նյութեր կարելի է գտնել աշխարհի հայտնի մի քանի տաղանդ
անձնավորությունների մասին։

«Աղբյուր»-ի աշխատակիցները հատուկ ուշադրությամբ էին վերաբերվում
ռուսական գրականության լավագույն նմուշների պրոպագանդման, ռուս նշա-
նավոր գրողների ստեղծագործությունների հիման վրա մանուկներին դաս-
տիարակելու հարցերին։ Դա, ինչպես որ պետք էր սպասել, արվում էր նպա-
տակասլաց, խնամքով։ Ռուս ժամանակակից մանկական գրողներից մեկը՝ Սո-
լովյով-Նեսմելովը, դարձել էր «Աղբյուր»-ի մշտական աշխատակիցը, գրում էր
հատուկ նրա համար, ակտիվորեն մասնակցում ամսագրի համարների ստեղ-
ծմանը, նույնիսկ անքուն գիշերներ անցկացնում տպարանում։ Իր արտակարգ
հոգատարության համար նա ստացել էր «Աղբյուր»-ի գալակ» անունը։ Ամսա-
գրի առաջին իսկ համարներից նա օգնեց խմբագրությանը կապ պահպանե-
լու ժամանակակից ռուսական մանկական ամսագրերի հետ, «Աղբյուր»-ի հա-

մար նկարներ, նյութեր էր որոնում։ Ռուս հայտնի գրողներից «Աղբյուր»-ը թարգմանել և տպագրել է Տուրգենևին, Կոլցովին, Լերմոնտովին, Պուշկինին, Տոլստոյին, Գորկուն, Գ. Ուսպենսկուն, Գարշինին, Չեխովին, Մամին Սիբիրյակին և ուրիշների։ Առանձին հեղինակների գործերի տպագրության հետ միասին, ամսագիրը հաճախակի իր էջերում տեղ էր տալիս նաև ռուս ժողովրդի նշանավոր ներկայացուցիչների կյանքի և գործունեության մասին նյութերի։ Ամսագրում տպագրվել են բազմաթիվ ռուսական ժողովրդական հեքիաթներ ու զրույցներ։ Դրանց գլխավոր նպատակը համահնչյուն է ամսագրի նպատակների հետ։

Ճիշտ ըմբռնելով մանուկներին ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակելու նշանակությունը, «Աղբյուր»-ը պարբերաբար տպագրում էր նաև մյուս ազգերի ճանաչված գրողների ստեղծագործությունները, իր ընթերցողներին պատմում նշանավոր մարդկանց մասին։ Ահա օտարազգի այն գրողների ոչ լրիվ ցանկը, որոնց ստեղծագործությունները թարգմանաբար տեղ են գտել «Աղբյուր»-ում. Անդերսեն, Էմիլ Զոլա, Հոֆման, Մոպասան, Վ. Հյուգո, Ալ. Դոդե, Հայնե, Շիլլեր, Չարլզ Դիկկենս, Գյոթե, Ժ. Սանդ։

«Աղբյուր»-ի ընդգրկած շրջանակների մասին լայն պատկերացում կարող է տալ նաև այն նշանավոր անձնավորությունների ցանկը, որոնց կյանքն ու գործունեությունը այս կամ այն առիթով լուսաբանվել է ամսագրի էջերում։ Ըստ որում նկատենք, որ այդ արվում էր վարպետությամբ։ Մի դեպքում տպագրվում էին նշանավոր անձնավորությունների կենսագրությունները, մյուս դեպքում նկարագրվում էր որևէ էպիզոդ նրանց կյանքից, երրորդ դեպքում նրանց մասին հրապարակվում էր հիշողություն կամ ակնարկ, չորրորդ դեպքում ընթերցողները պարզապես ծանոթանում էին նրանց ինքնակենսագրությանը։ «Աղբյուր»-ն իր մանուկ ընթերցողներին պատմել է Մոցարտի, Ժաննա դը Արկի, Ռուբինշտեյնի, Գյոթեի, Գուտենբերգի, Արիստոտելի, Գալիլեյի, Ժուկովսկու, Զոլայի, Բեթհովենի, Դիկկենսի, Ռուբենսի, Հայնեի, Շիլլերի, Լիստի, Ժյուլ Վեռնի, Ռաֆայելի և ուրիշների մասին։

Ի՞նչ նպատակ էր հետապնդում խմբագրությունը նշանավոր մարդկանց մասին նյութեր տպագրելիս։ Այս հարցի պատասխանը պարզությամբ տալիս է հենց ամսագիրը։ «Տես,—գրում է «Աղբյուր»-ի աշխատակից Գաբրիել Միրզոյանը «Իմ նամակները» հոդվածում, թե որպես են ներգործում մանուկների վրա մեծ մարդկանց կենսագրությունները, տե՛ս ինչպես են փայլում ունկնդիրներիդ փոքրիկ աչքերը, երբ այս կամ այն մեծ մարդու կյանքը պատմելիս, դու նրանց ակներև ցույց ես տալիս, որ հերոսը իր սեփական ուժերով է հաղթահարում բոլոր արգելքներին»[20]։

«Աղբյուր»-ն իր ընթերցողներին լայնորեն ծանոթացնում է նաև մյուս ժողովուրդների բանահյուսության նմուշների հետ։ Նրանում մասնավորապես տպագրվել են չինական, անգլիական, ճապոնական, պարսկական, գերմանական, շվեդական, լեհական, արաբական և այլ ժողովրդական հեքիաթներ ու զրույցներ։

Դժվար է գերագնահատել այդ ամենի նշանակությունը հայ մանուկների դաստիարակության, գեղարվեստական ճաշակի զարգացման, նրանց ժողովրդասիրության ոգով դաստիարակելու, դեպի մյուս ազգերը նրանց մեջ սեր

[20] «Աղբյուր», 1883, հավելված № 1, էջ 6։

պատվաստելու տեսակետից։ Այդ նյութերը միաժամանակ ընդլայնում էին մանուկների մտահորիզոնը։

«Աղբյուր»-ի հրատարակումը կապված էր լուրջ դժվարությունների հետ։ Մանկական ամսագիրն ունեցել է իր հակառակորդները, որոնք ձգտում էին խափանել նրա հրատարակումը, վատ լուրեր էին տարածում նրա մասին։ «Աղբյուր»-ի լույս ընծայմանը, նրա առանձին նյութերի տպագրությանը խոչընդոտում էր ցարական գրաքննությունը։

Հենց առաջին տարում առանձին բնակավայրերում «Աղբյուր»-ի շուրջը որոշ անառողջ մթնոլորտ էր ստեղծվել։ Մի շարք տեղերում, օրինակ, Նախիջևանում, լուրեր են տարածվել, թե ուր որ է ամսագիրը պետք է փակվի, ցամաքի։ Հետագա տարիներին այդպիսի տրամադրություններին տուրք են տվել նաև տպագիր առանձին օրգաններ, իսկ «Արձագանք» թերթը կանգ չի առել ամսագրի խմբագիր-հրատարակչին անձնական վիրավորանքներ հասցնելու առաջ՝ նրա մասին գրելով, թե «որևէ հոդված գրելու կարողություն չունի», թե նրա «միակ հատկանիշը ճարպկությունն է»։

«Աղբյուր»-ի հակառակորդները չեն բավարարվել անձնական մեղադրանքներ ներկայացնելով։ «Աղբյուր»-ի երկրորդ տարում նրա ուղղությունը դիտվել է իբրև «վնասակար»։ Հաջորդ տարում «Նոր-Դար»-ի խմբագիր Ս. Սպանդարյանը հատուկ ելույթ է ունեցել «Աղբյուր»-ի և նրա խմբագրի դեմ։ Անդրադառնալով այդ ելույթին, «Աղբյուր»-ը զայրույթով գրում է, թե «ուղղակի ասացեք էլի, որ «Աղբյուր»-ի խմբագրությունը կազմված է գ ա ղ տ ն ի գործիչներից...»։ «Աղբյուր»-ի հակառակորդները, ավելի կոնկրետացնելով իրենց մեղադրանքը, ակնարկել են այն մասին, թե իբր «Րաֆֆին անբարոյական մտքեր է քարոզում, Նեամելովը՝ նույնպես»։ Առանձին դեպքերում «Աղբյուր»-ի նկատմամբ ռեպրեսիաներ էին կիրառում կրոնական իշխանությունները։ 1889 թ. առաջին համարում Ղ. Աղայանի ստորագրությամբ տպագրված հոդվածի մի ակնարկի համար Մակար կաթողիկոսը առաջարկեց դպրոցներին և եկեղեցականներին չստանալ «Աղբյուր»-ը, արգելք լինել նրա տարածմանը։

Բայց մանկական ամսագիրը անվարան էր, չէր հրաժարվում իր ընտրած ուղղությունից։ «Շարունակեցե՛ք,—դիմելով իր հակառակորդներին, գրում է «Աղբյուր»-ը,—մենք մեր գործը ճանաչում ենք մեր հասկացածի չափով և ձեր վարմունքը «Աղբյուր»-ի վերաբերմամբ մեզ համար շատ հեշտ բացատրելի է...»[22]։

«Մեզ համար,—գրում է մի այլ տեղ «Աղբյուր»-ը,—բոլորովին միևնույն է, թե ինչպես են վերաբերվում դեպի մեզ կիսաշունչ դիակներ, մենք ապրում ենք և մեր կարողացածի չափ գործում՝ գլխավորապես նորաբողբոջ սերունդի համար»[23]։ Հակառակ ամեն տեսակ խոչընդոտների և հարուցված հալածանքների, ամսագիրը լայն տարածում էր գտնում։ Առաջին տարվա վերջում «Աղբյուր»-ն արդեն տարածվել էր 109 հայաբնակ վայրերում։ 1886 թ. նրա բաժանորդների թիվը հասավ 1060-ի, իսկ 1888 թ.՝ 1500-ի։ Այդ տարվա առանձին համարներ տարածվեցին ավելի քան 1700 օրինակ տպաքանակով։

«Աղբյուր»-ի հրատարակման դեմ հարուցված գրաքննական արգելքների

[21] Նույն տեղում, 1885, հավելված № 1։
[22] Նույն տեղում, 1884, հավելված № 3, էջ 22։
[23] Նույն տեղում, 1884, հավելված № 12, էջ 42։

մասին տողամեջ և բացահայտ ակնարկներ կան հենց «Աղբյուր»-ում։ Գրաքննիչի դեմ ուղղված ակնարկ է թվում, օրինակ, ամսագրի հենց առաջին համարի հավելվածում տպագրված նամակի հետգրությունը, ուր ասված է.

«Բայց գիտես, բարեկամս, թե ինչ դժբախտություն է եկել գլուխս. իմ բիձա Հակոբը վերադարձել է քաղաքից և այժմ ինձ մոտ է ապրում։ Անտանելի բնավորություն է ստացել այս պառավը. հենց տեսնում է, որ ես գրիչս ձեռքս եմ առնում, իսկույն գալիս է նստում կողքիս մինչև գրածս չկարդա, չի կարողանում հանգստանալ և գիտես այն օրը ինչ օյին խաղաց գլխիս. մի նամակ էի գրել քեզ, բայց հենց ես տանից դուրս էի գնացել, նա գտել էր այդ նամակը, ծայրե ի ծայր կարդացել էր ու... ու պատռել։ Ես ստիպվեցա նստել ու նորից գրել. շատ բան, ինչ առաջ էի գրել, էլ չկարողացա հիշել»[24]։

Ամենայն հավանականությամբ այս համարում տպագրված նամակը, որը խոսում է մանկական գրականության զարգացման ու նրա թերությունների մասին, գրաքննության կողմից արգելվել ու նորից է գրվել։

«Աղբյուր»-ում եղած մի շարք նյութերից որոշակիորեն պարզ է դառնում, որ ամսագիրը պարբերաբար հանդիպել է գրաքննական արգելքների։ 1917 № 5—6-ում տեղավորված փոքրիկ խմբագրականում Տ. Նազարյանը գրաքննական արգելքների դեմ մղված տարիների պայքարը բնորոշում է «կսկիծ ու քրքիջ» արտահայտությամբ, և ապա պատմում 1887 թ. ամսագրի գրաքննիչի հետ պատահած «մի փոքրիկ կուրյոզ». գրաքննիչը պնդել է, թե պետք է գրել ոչ թե «կալթի փոխարեն չոր խոտ են արածում», այլ «չորի» տեղ գրել «կանաչ»։ Խմբագրի առարկություններին ի պատասխան գրաքննիչը սպառնաց, թե ամբողջ հոդվածը կջնջի։ Կոնֆլիկտն ավարտվել է նրանով, որ ոչ «չոր» է գրվել, ոչ էլ «կանաչ»։ «Նման հազար անգամ հզոր կուրյոզներ ենք ունեցել այս 35 տարվա ընթացքում»,—եզրափակում է Տ. Նազարյանը։

«Աղբյուր»-ի դեմ քիչ արգելքներ չի հարուցել ցարական ժանդարմ Գոլիցինը, որը արգելել է ամսագրի երկրորդ բաժինը և կրճատել «Աղբյուր»-ի ծրագիրը։ 1914 թ. լույս ընծայած իր գրքույկում Տ. Նազարյանը, մատնանշելով «Գոլիցինյան էպոխան», ընդգծում է, որ «Ռուսական այն ժամանակվա կառավարությունը, ի դեմս իր գրաքննական ատյանի, համարյա քար ու երկաթ էր մաղում և մեր գլխին»[25]։ Գրաքննական ատյանի «քար ու երկաթ»-ի պատճառով «դառն ու արյուն արտասուք» տեսած խմբագիր-հրատարակիչը, դիմելով ընթերցողին, կոչ է անում. «Թերթել պետք է Թիֆլիսի գրաքննական ատյանի և Պետերբուրգում մամուլի գլխավոր վարչության արխիվները, որպեսզի ռելեֆ լինեն տասնյակ տարիներ մեր քաշած դաժան, համառ պայքարն ու վիշտը»[26]։

Արխիվային որոշ փաստաթղթեր իրոք վկայում են այդ պայքարի մասին։ Մենք նկատի ունենք այն փաստաթղթերը, որոնք պահպանվում են Տ. Նազարյանի հրատարակությունների ժամանակավոր խմբագիրներից մեկի Ստ. Լիսիցյանի արխիվում[27], «Աղբյուր»-ի, «Տարազ»-ի, ինչպես նաև „Анонсъ"-ի

24 Նույն տեղում, 1883, հավելված № 1, էջ 9։

25 Տ. Նազարյան, Խոսք և գործ, 1914, էջ 3։

26 Նույն տեղում, էջ 5։

27 Օգտագործելով առիթը, մենք շնորհակալության խոսք ենք հղում հանգուցյալի դստերը՝ Սրբուհի Լիսիցյանին, այն սիրահոժարության համար, որով նա մեզ տրամադրեց մի շարք փաստաթղթեր։

ժամանակավոր հրատարակիչները բավական մեծ ջանքեր են գործադրել, որպեսզի կարողանան ընդարձակել այդ հրատարակությունների ծրագիրը, բայց ապարդյուն։ Ներքին գործերի մինիստրության Կովկասյան գրաքննության կոմիտեն շարունակ մերժել է խմբագիր-հրատարակիչների խնդիրքները։ Կոմիտեն 1892 թ. դեկտեմբերի 12-ի գրությամբ կտրականապես առաջարկում է «Աղբյուր»-ի և «Տարազ»-ի ժամանակավոր խմբագիր Լիսիցյանին. „Принять надлежащие меры к безусловному прекращению на будущее время в редактируемом Вами журнале уклонений от утвержденной программы..."։ Կոմիտեն զգուշացնում է, որ ծրագրով չնախատեսված նյութերը «ոչ մի պայմանով չեն կարող գրաքննության կողմից թույլատրվել տպագրության»։

Հիշյալ արխիվի, և հատկապես Թբիլիսիի պետական արխիվի մի շարք փաստաթղթեր վկայում են այն մասին, որ գրաքննական կոմիտեն արգելել է բազմաթիվ հոդվածների տպագրությունը։

Ահա ինչ դժվարությունների գնով էր հրատարակվում մանկական ամսագիրը։

«Աղբյուր»-ի նշանակությունը, նախ և առաջ, մանկական գրականության զարգացման գործում նրա կատարած դերի մեջ է։ Այդ դերը, իրոք որ, խոշոր է։ Հանդես գալով մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ դեռևս որոշակի տարբերություն չկար ընդհանուր գրականության և մանկական գրականության միջև, «Աղբյուր»-ը մի տեսակ բաժանման գիծ անցկացրեց այն գործերի միջև, որոնք գրվում են մեծահասակների համար և այն գործերի միջև, որոնք գրվում են մանուկների համար։ Նա բավականաչափ երկար ժամանակ հանդիսացավ այն միակ ասպարեզը, ուր կարող էին հանդես գալ մանուկների համար գրող թե՛ ճանաչված, թե՛ դեռևս սկսնակ գրողներն ու բանաստեղծները։ «Աղբյուր»-ը դարձել էր մի յուրօրինակ գրական կենտրոն, որի շուրջն էին համախմբվում գրական ուժերը։

«Աղբյուր»-ին ընթերցողները անհամբերությամբ էին սպասում։ Նա դարձել էր մանուկների համար մի դպրոց, բարեկամ, խորհրդատու։ «Աղբյուր»-ը սիրով էին կարդում նաև մեծահասակները՝ «պապիկներն ու տատիկները»։ Երբեմն հայ ընտանիքները կազմակերպում էին ընթերցանության հատուկ երեկոներ և կոլեկտիվ կերպով ունկնդրում ամսագրում տպագրված որևէ պատմվածք, բանաստեղծություն կամ այլ նյութ։ «Աղբյուր»-ի վայելած ժողովրդականության մասին է վկայում ոչ միայն նրա տիրաժը (առանձին տարիներին մինչև 1500—1600), այլ նաև այն բազմաթիվ նամակները, որոնք խմբագրությանն էին ուղարկում ամսագրի բաժանորդները, ընթերցողները։ Այդ ժողովրդականության մասին պերճախոս վկայություն է հանդիսանում նաև այն ողջույններն ու համընդհանուր խանդավառությունը, որով նշվել է ամսագրի 25-ամյակը։

Մի ամբողջ պատմական ժամանակաշրջան է ընդգրկում «Աղբյուր»-ի գործունեությունը։ «Աղբյուր»-ը պատկերացում է տալիս 1883—1918 թթ. մանկական գրականության զարգացման ուղիների ու ելևէջների մասին։ Դրա համար էլ այդ ամսագիրը պետք է որ դառնա բազմակողմանի ուսումնասիրության առարկա, իսկ նրանում տպագրված շատ և շատ նյութեր այսօր էլ կարող են բավարարել մեր պատանի ընթերցողների բարձր պահանջները, նպաստել նրանց դաստիարակությանը։

ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Հոդվածն առաջին անգամ հրապարակվել է «Պատմա-բանասիրական հանդես»-ում, 2008, № 2, էջ 106–118: Վերահրապարակվում է հեղինակի և հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Արևմտահայ մանկապատանեկան գրականությունը հայ մանկապատանեկան գրականության անբաժանելի մասն է, բայց նրա ուսումնասիրման խնդիրները գրականագիտության տեսադաշտից դուրս են մնացել: Արևմտահայ գրականությանն ու արևմտահայ գրողներին նվիրված գրքերում, տարաբնույթ հոդվածներում երբևէ անդրադարձ չի կատարվել այդ գրականության «մանկական հատվածին»: Նույնիսկ հայ մանկապատանեկան գրականության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում, արևմտահայ մանկագրության անդրադարձներն ընդհանուր և հպանցիկ բնույթ են կրել[1]:

Այնինչ արևմտահայ մանկապատանեկան գրականության պատմությունը ներառում է նշանակալից շատ էջեր, որոնց անդրադարձը պատկերացում կտա նրա ծննդյան ու ձևավորման, ինչպես և զարգացման միտումների մասին:

Արևմտահայ գրողների ստեղծագործություններից շատերը հասցեագրված են նաև կրտսեր, միջին և բարձր տարիքի երեխաներին ու պատանիներին և, բնականորեն, ընդգրկվել են մանկապատանեկան գրականության շրջանակներում. նկատի ունենք Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Ղևոնդ Ալիշանի, Պետրոս Դուրյանի, Գրիգոր Զոհրապի, Հակոբ Պարոնյանի, Միսաք Մեծարենցի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի և ուրիշ մեծանուն գրողների չափածո ու արձակ ստեղծագործությունների զգալի մասը: Սակայն նրանցից քչերն են գրել հատկապես երեխաների համար, և եթե անգամ նրանց հասցեագրված տարածանր գործեր են ստեղծվել, ապա դրանք ավելի շատ սփռված են արևմտահայ մանկապատանեկան մամուլի էջերում և առավել հազվադեպ՝ ընթերցողներին «ներկայացել» որպես ամբողջական գիրք: Եվ առաջին հերթին այդ մամուլում հրապարակված գրական հունձքին ծանոթանալով՝ մենք կարող ենք որոշակի պատկերացում կազմել արևմտահայ մանկական գրականության և այն գրողների մասին, ովքեր ստեղծագործել են նաև երեխաների ու պատանիների համար:

Արևմտահայ մանկապատանեկան մամուլը ծնվեց XIX դարի 70-ական թվականներից հետզհետե ծավալվող ազգային-լուսավորական շարժման արդյունքում: Չնայած սոցիալ-քաղաքական ծանր պայմաններին, արգելապատնեշների հաղթահարումով՝ արևմտահայ իրականության մեջ հիմնվում են մշակութային-կրթական նոր օջախներ: Լուսավորության և գիտության առողջ սերմերը ժողովրդական զանգվածների, նոր սերնդի մեջ տարածելու նվիրական գործին են զինվորագրվում արևմտաեվրոպական

---

[1] Տե՛ս Խ. Գյուլնազարյան. Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Երևան, 1961, Ս. Լալախանյան. Մանկական գրականության պատմության ուրվագծեր, Երևան, 1973, Ս. Նազարյան. Հայ մանկական մամուլը. 1851–1917, Երևան, 1979:

երկրների բարձրագույն կրթարաններում մասնագիտական բազմակողմանի գիտելիքներով զինված անվանի մանկավարժները: «Ազգը լուսավորությամբ պիտի լուսավորենք,– քարոզում էին նրանք:– Ազգը պիտի լուսավորենք դպրոցները ծաղկեցնելով, նորանոր վարժարաններ հաստատելով, այլևայլ ազգօգուտ հաստատություններ ընելով…»: Սկսում են լույս տեսնել տարաբնույթ մի շարք պարբերականներ (մանկավարժական՝ «Լույս»՝ 1874, իրավաբանական՝ «Իրավունք»՝ 1868, գիտական՝ «Ժողովրդային գիտություն»՝ 1880, «Մեղեդիա»՝ 1880 և այլն):

50-ականներին հայոց վարժարաններում հրատարակված աշակերտական-պատանեկան պարբերականներին («Բուրաստան սբ. Սահակյան»՝ 1851–1853, Կ. Պոլիս, «Թութակ Հայկազյան»՝ 1854–1855, «Երկասեր»՝ 1855, «Բողբոջ»՝ 1860, Զմյուռնիա) հետագա տասնամյակներում հաջորդում է ընթերցողական ավելի լայն շրջանակներ ընդգրկող և թեմատիկ-գաղափարական լուրջ շեշտադրումներով պարբերականների ծնունդը: Առաջին քայլերն անում է 1870–1871-ին Կ. Պոլսի Նուպար-Շահնազարյան դպրոցում լույս տեսած «Երկրագունդ» ամսագիրը, որ իր էջերում շարունակաբար տպագրում է Ռափայել Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը և մի քանի բանաստեղծություններ, հայ ժողովրդի պատմությանը, ազգային-ազատագրական պայքարին վերաբերող բազմազան նյութեր, թարգմանաբար՝ Վիկտոր Հյուգոյի ստեղծագործություններից, Կռիլովի առակներից և այլն: Այս ամսագիրը վերահրատարակվում է 1883-ին՝ հայ ականավոր գրող, երգիծաբան Հակոբ Պարոնյանի ջանքերով: Իսկ մինչ այդ Պարոնյանը ձեռնարկել էր «Թատրոն բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթի հրատարակման գործը: Պարոնյանը հիմնադրել և խմբագրում էր նաև «Թատրոն» պարբերականը: «Թատրոն բարեկամ մանկանց«-ը լույս տեսավ մեկուկես տարի՝ 1876-ի հունվարից 1878-ի հունիսը: Մինչ արևմտահայ այս երկշաբաթաթերթի հրատարակությունը, վարժարանների սաների կողմից հրատարակվող նախորդ ամսագրերը չի կարելի լիարժեքորեն մանկական համարել՝ գործածության իրենց նեղ շրջանակների և նյութերի գեղարվեստական ոչ բարձր մակարդակի պատճառով:

«Թատրոն բարեկամ մանկանց»-ը հրատարակելով, Պարոնյանը ձգտում էր ըստ ամենայնի նպաստել հայոց մանուկ սերնդի ազնվաբարո, ճիշտ կրթության ու ճշմարիտ դաստիարակության գործին, արևմտահայ կյանքի ճահճից նրանց դուրս բերելու–լուսավորելու նվիրական նպատակի իրագործմանը: Դեռևս իր խմբագրած նախորդ - պարբերականի՝ «Թատրոնի» ծանուցագրում նա ընդգծել էր, որ «ազգային մանկտույն դաստիարակության և հմտության նպաստելու մտոք՝ որոշած ենք առաջիկա տարեգլխեն սկսյալ թերթ մը հրատարակել…, որ գեղեցիկ պատկերով զարդարյալ ըլլալեն ի զատ, պիտի պարունակե կրթական, բարոյական, պատմական, վիպական և այլ տղայոց միտքը սրելու հատուկ հոդվածներ… Պիտի ջանանք զիրենք ընթերցանության և ուսման ընտելացնել…«[2]: Իր սկսած գործը համարելով «ազգին մեջ եզական նորություն» և հայտարարելով, որ նոր պարբերականը հիմնականում «դեռահաս տղայոց դաստիարակության համար է», Պարոնյանը նրա առաջին իսկ համարում նշում է, որ այն երեխաների համար լինելու է «գրական ծաղկոց մը», և որ «աստ կրկնել հանապազ այն բարոյական և կրթական դասերը՝ որով միայն կարելի է պատվավոր մարդ և ներհուն քաղաքացի ըլլալ»[3]: «Թատրոն բարեկամ մանկանց» պարբերականի առաջին համարի «Իմ պզտիկ կարդացողներս» նախախոսքում նա ընդգծում է նաև գլխավոր մի ուրիշ խնդիր՝ մայրենի լեզվի իմացության կարևորությունը. «Ձեր մեջ կան շատերը, որ գիտուն տղու մը չվայելելիք բառեր կը գործածեն, անոնց հայերենը չգիտնալով… «Թատրոնին» մեջ ես ամեն մեկին առջև հայերենը պիտի դնեմ՝ որ դուք աշխատելով սորվիք և պետք եղած ատենը սխալ բառ չգործածեք…»[4]: Օտար բառերի գործածումը «հայ տղու մը համար մեծ ամոթ» համարելով՝ Պարոնյանը, հասկանալի է, պետք է անցներ գործնական քայլերի՝ ամսագրի էջերում հրապարակելով ոչ միայն մայրենի լեզվի, այլև հայ ժողովրդի պատմության իմացությանը նպատակաուղղված՝ գրականգեղարվեստական, ճանաչողական-ուսուցողական բազմազան նյութեր՝ ընդգծելով ընդհանրապես գիտելիքների, ուսման դերը, որովհետև «մարդ չի կրնար առանց անոր կատարյալ մարդ ըլլալ»: Իհարկե, պարբերականի նպատակը հայ մանկանը հայեցի ոգով կրթելն ու բազմակողմանի զարգացած մարդ դաստիարակելն էր: Ահա թե ինչու յուրաքանչյուր համարում նույն խոսքերով շեշտադրվում էր, որ նրա «պարունակությունն է թե՛ մանչ է և թե՛ աղջիկ տղայոց և պատանեկաց կրթության համար հորինված կարճառոտ պատմություններ, վարժության համար նամակներ, ճառեր, ուսումնական գիտելիքներ, պատմական տեղեկություններ, բարոյական խրատներ, հատընտիր առակներ և այլն, և, վերջապես, տղայոց ընթերցանությունը գրգռող զգալի հատվածներ և այս ամենը մանկանց հաճելի ընելու համար, զվարճալի ոճով ավանդված»[5]: Կարճ ասած՝ թերթը հայ երեխաներին մատուցում էր այնպիսի նյութեր, որոնք անհրաժեշտ էին նրան «կրթյալ և գովելի տղա ըլլալու համար»: Սակայն առաջնայինը մանկանը ազգային-հայրենասիրական գաղափարների ոգով կրթել-դաստիարակելու խնդիրն էր. «Որ ազգեն ալ որ ըլլաս, ինչ վիճակի մեջ ալ որ գտնվիս, դու պահապան զինվոր մըն ես հայրենիքիդ,– ընթերցողի հետ իր դաս-զրույցն է շարունակում Պարոնյանը,– նա կ՚իրավունք ունի քո գիտությանդ, առաքինությանդ, զգացմանդ, բոլոր գործերուդ արդյունքը վայելելու: Զինվոր ես, հայրենիքիդ ծառայել մտածե, արհեստավո՞ր՝ ճարտարությունդ բանեցուր հայրենիքիդ զարգացման համար, գիտո՞ւն՝ հայրենիքիդ օգուտը խորհե և ուրիշին սորվեցուր»[6]: Եվ հայրենասիրության այս դասը Պարոնյանը հիմնականում ավանդում էր թերթում զետեղված պատմական բնույթի նյութերով, փոքրիկ զրույցներով, պատմվածքներով, բանաստեղծություններով («Մեծ Ներսես Կաթողիկոս և Պապ Թագավոր», «Արամ Հայկազյան», «Առ հայրենիս», «Կեռասը», «Մասիս լեռը», «Ազգիս պաշտպան Վարդան Մամիկոնյան» և այլն): «Առ հայրենիս» բանաստեղծության մեջ հայ պանդուխտի կարոտի հորդացող զգացումները միահյուսված են մայր ժողովրդին արմատներից կտրող թշնամիների հանդեպ ատելության և վրիժառության զգացումներին: «Կեռասը» պատմվածքի փոքրիկ հերոսներն ապրելու և պայքարելու օրինակ են համարում հայրենիքի ազատության համար մարտնչող հերոսներին: Հայրենասիրության այս «դասերը» առանձին պատումներում ավարտվում են բռնության շղթաները փշրելու և պայքարով ազատություն ձեռք բերելու կոչնակներով:

[2] «Թատրոն», 1875, № 175, էջ 2:

[3] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 1, էջ 8:
[4] Նույն տեղում, էջ 3:
[5] Նույն տեղում, էջ 8:
[6] «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, № 4, էջ 28:

Դրանք համահունչ էին նրա հրապարակախոսության «մեծական» խիզախ բռնկումներին: Այսպես, պատումներից մեկում Վարդան Մամիկոնյանի զորավարությամբ Ավարայրում մղված մարտը ներկայացնելով՝ Պարոնյանը հայ մանուկներին դիմում է ահա այսպիսի կոչնակով. «Հերիք չէ՞, հայեր, հերիք չէ՞ մեր գերությունը, որուն մեջ կը հեծենք շղթայակապ… Ջախջախենք այս տգիտության շղթաները, ազատ թևերով թռինք դեպի գիտության, իմաստության և լուսավորության տաճարը»[7]:

Թեև շաբաթաթերթում գերակշռողը մանուկների մեջ ընթերցանության սեր պատվաստող գեղարվեստական նյութերն էին՝ պատմվածքներ, հեքիաթներ, բանաստեղծություններ, առակներ, հանելուկներ, բայց քիչ չէին նաև գիտահանրամատչելի տարաբնույթ ուսանելի զրույցները, ակնարկները, որոնք զանազան հետաքրքրաշարժ, գիտելիքները հարստացնող տեղեկություններ էին հաղորդում հայոց և այլոց պատմությունից, աշխարհագրությունից («Սեբաստիա», «Զմյուռնիա», «Վենետիկ»), բնությունից, կենդանական աշխարհից («Կապիկ», «Գայլ», «Առյուծ», «Ռնգեղջյուր» և այլն), այլ ոլորտներից: Ուսանելի բազմազան նյութեր էին հրապարակվում նաև շաբաթաթերթի «Մտավոր վարժություն», «Բարոյական դասեր», «Ձեռնածության խաղեր» և ուրիշ բաժիններում: Այս ամենի նպատակը հայ երեխաներին բազմակողմանի կրթելը, նրանց հայրենասիրության, մարդասիրության և այլ զգացումներով տոգորելն էր, արդարության, ճշմարտության, ժողովրդի ազատության ու բարօրության համար պայքարող մարդ-քաղաքացի դաստիարակելը:

Շաբաթաթերթում տպագրվող ինչպես ճանաչողական-ուսուցողական, այնպես էլ գեղարվեստական նյութերի զգալի մասի հեղինակն ինքը՝ Հակոբ Պարոնյանն էր, թեև մեծ էր նաև այլ հեղինակների մասնակցությունն այդ աշխատանքներին (Մատթեոս Մամուրյանը՝ «Մանր վեպ» խորագրով պատմվածքներով, Գ. Այվազյանը, Ա. Գալֆայանը՝ իրենց ինքնուրույն և Եզոպոսից, Լաֆոնտենից, Կռիլովից կատարած թարգմանական առակներով, Ռեթեոս Պերպերյանն իր բանաստեղծություններով և ուրիշներ):

Պարոնյանի մանկական պատմվածքներն ու զրույցները սեղմ են, զերծ ավելորդ նկարագրություններից, աչքի են ընկնում հետաքրքրաշարժ, պարզ ոճական հյուսվածքով, զվարճալի երանգներով, լեզուն սահուն է, մատչելի՝ մայրենիի ոգուն հարազատ տարբերքով: Եվ բովանդակությունն էլ հիմնականում ուսուցողական–ճանաչողական–դաստիարակչական շեշտադրումներ ունի՝ բարոյախրատական նրբանկատ, զգուշավոր եզրակացությունների ուղեկցությամբ և կամ ասելիքի իմաստ - «խրատը» թողնելով ընթերցողի հայեցողությանը: Ահա մի քանի «դաս», որ ավանդում է Պարոնյանը շաբաթաթերթի էջերից: Փոքր հասակից ծանոթանալ մայր ժողովրդի հերոսական անցյալին, նրա նվիրյալ զավակների քաջություններին, նրանց օրինակով «բարիք անել» ազգին («Աննիկ և Սաթենիկ»), անգամ կյանքի ամենածանր հանգամանքներում ճիշտ կողմնորոշվել, չշփոթվել և փրկության ելք գտնել («Անվախության ույժը». նրանում նկարագրված է 1870-ին Կ. Պոլսի Բերա թաղամասում բռնկված հրդեհը մարելիս երեխաների ցուցաբերած արիությունը), մեծախոսությամբ, դատարկամտությամբ չհայտնվել ծիծաղելի վիճակում («Մեծախոսիկը»), լինել հնարագետ և զգոն («Նկարչի ծառան»), ճշմարտախոս և ազնիվ, որ «իր պակասությունը ճանչնա և իր հանցանքը ու-

[7] Նույն տեղում, էջ 29:

րիշի վրա չձգե» («Տիրուհի և կոտրած հայելի»). այսպես էլի քանի՛-քանի՛ դաս՝ երեխայի բնավորության ու վարքի այս կամ այն պակասավոր կողմերը մեղմ հումորով երևակելու-շտկելու, իսկ լավ, բարի, գեղեցիկ արարքները՝ դրվատելու-խրախուսելու ուսուցողական-դաստիարակչական շեշտադրումներով: Երկխոսություն հիշեցնող որոշ կարճ առակախոս զրույցներում էլ ասելիքը երգիծական սուր շեշտերով է մատուցվում:

Ընդհանրապես, «Թատրոն բարեկամ մանկանց» շաբաթաթերթում տպագրված և առ այսօր նրա էջերում «փակված» Պարոնյանի մանկական ստեղծագործություններն ավելի համակողմանի ուսումնասիրության կարիք ունեն և, մեր կարծիքով, դրանցից լավագույնները մեկ գրքում ընդգրկելը, հրատարակելն ու մերօրյա սերունդների «հիշողության դաշտ» վերադարձնելն անհրաժեշտություն է: Միաժամանակ, այն արևմտահայ մանկագրության զարգացման 70-ականների ընթացքին մեծ գրողի ակտիվ մասնակցության վկայագիր կդառնա, խնդիր, որ մինչև այժմ, ըստ էության, չի լուսաբանվել:

Զգալի է նաև արևմտահայ հաջորդ պարբերականների՝ «Բուրաստան մանկանց» (1882–1888), «Ծաղիկ մանկանց» (1889–1893) հանդեսների դերը հայ մանուկների կրթության ու դաստիարակության և այդ շրջանակներում՝ նաև հայ մանկական գրականության զարգացման գործում:

«Բուրաստան մանկանց» կիսամյա պատկերազարդ հանդեսն սկսել է հրատարակվել 1882-ի հունվարից, Կ. Պոլսում, նկարիչ-փորագրիչներ Նշան Պերպերյանի (նա նաև գեղարվեստական երկերի հեղինակ է, թարգմանիչ ու հրատարակիչ) և Ստեփան Տեովլեթյանի խմբագրությամբ: «Բուրաստան մանկանցը»,– հանդեսի նպատակների մասին ասված էր խմբագրականում,– կաշխատի միշտ այնպես ուղղություն մը դառնալ և նյութոց ընտրություն մը ընել, որ թե գիտական և թե գրական նախնական ճաշակ տա իր ընթերցող նորաբողբոջ պատանյաց»[8]: Սակայն երբ ծանոթանում ենք հանդեսի համարներին, նկատելի է, որ մեծ մասամբ նյութերը գիտական, ուսուցողական–ճանաչողական բնույթ ունեն և մանուկ ու պատանի ընթերցողներին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում բնագիտությունից, աշխարհագրությունից, պատմությունից, աստղագիտությունից և այլ ոլորտներից: Իսկ ահա «գրական նախնական ճաշակ մը» տալուն միտված գեղարվեստական ստեղծագործությունների (բանաստեղծություններ, զրույցներ, հեքիաթներ, պատմվածքներ, մանկական պիեսներ) մեծ մասը ընդգծված բարոյախրատական շեշտադրումներ ունեն՝ միակողմանի և ուղղագիծ՝ միայն բացասական կամ միայն դրական վարքագիծ ունեցող հերոսներով («Անձնվեր - քաջ նավաստի մը», «Բարեսիրտ Գոհարիկը», «Անձնազոհության օրինակ մը» և կամ՝ «Չարասիրտ տղա մը», «Պողոսի առաջին և վերջին ծխախոտը», «Փայտահատի մի երազ» և այլն): Ավելին, առանձին ստեղծագործություններում իշխում է կրոնական-քրիստոնեական բարոյախոսությունը, աշխարհն ստեղծող ամենազոր արարչի՝ Աստծո փառաբանությունը: Աչքի են զարնում լեզվական անփութություններն ու աղավաղումները, գրաբարի ու բարբառների խառնահյուսվածքը: Այս և այլ թերությունները, իհարկե, չէին կարող դրական ազդեցություն ունենալ «նորաբողբոջ պատանյաց» ընթերցողական ճաշակի ձևավորման վրա…

[8] «Բուրաստան մանկանց», 1882, տետր 1, էջ 15:

Բայց հանդեսի արժանիքներն էլ քիչ չէին. շատ արժակ և չափածո ստեղծագործութ-
յուններ բավական լայն արձագանք էին գտնում ընթերցողների շրջանում, ինչպես
«Աղբյուրի» աշխատակից Արշակ Մեհրաբյանի՝ «Սրինգի»՝ արևմտահայ այս մանկա-
կան պարբերականի էջերում պարբերաբար հրատարակվող հրաշալի բանաստեղ-
ծությունները ու պատմվածքները, Ռեթեոս Պերպերյանի, Ալեքսանդր Փանոսյանի՝ Ալ-
փայանի, Միհրան Վարպետյանի մի շարք բանաստեղծություններ, ժողովրդական
առածներն ու ասացվածքները, համաշխարհային ճանաչում գտած գրողների՝ Վիկ-
տոր Հյուգոյի, Չարլզ Դիկենսի, Հանս Անդերսենի և այլոց ստեղծագործությունների
թարգմանությունները և այլն: Հանդեսն առաջիններից է, որ հրապարակել է մանկա-
կան պիեսներ («Վարժուհին», «Դեպիկը», «Կորսված տետրակը», «Պապուն գավաթը» և
այլն), ու թեև դրանք գեղարվեստական տեսակետից բավական թույլ են, բայց երևույթն
ինքնին ուշագրավ է մանկական գրականության ժանրային «տեսականու» ընդլայն-
ման առումով: «Բուրաստան մանկանց»-ի էջերում պարբերաբար տպագրվող բանահ-
յուսական նյութերը՝ առածների, ասացվածքների, հեքիաթների, զրույցների մեծ մասը
նույնպես թե՛ ուսուցողական-դաստիարակչական, թե՛ ճանաչողական արժեք ունեն և,
ինչպես նշում է Խ. Գյուլնազարյանը, դրանք, հատկապես առածներն ու ասացվածքնե-
րը, ի մի հավաքելու դեպքում «հնարավոր կլիներ կազմել մի բավական խոշոր ժողո-
վածու, որ որոշակի պատկերացում կտար արևմտահայ իրականության մեջ անցյալ
դարի վերջերին տարածված… այդ բանահյուսական-ժողովրդական ստեղծագործութ-
յունների հիմնական ուղղության և գեղարվեստական առանձնահատկությունների
մասին»[9]: Ժամանակակիցների վկայությունները ևս փաստում են, թե հանդեսը որքան
կարևոր դեր է խաղացել ընթերցասեր հայ երեխաների կյանքում: Այդ առումով հե-
տաքրքիր է նշանավոր գրող Տիրան Չրաքյանի (Ինտրա) վերհուշը՝ պատանեկության
տարիների իր սիրելի պարբերականի մասին. «Ինչեր կային այն գրքերուն կամ հետզ-
հետե եկող պրակներուն մեջ, որքան բաներ՝ զիս հետաքրքրող, զիս զվարճացնող, զիս
խանդաղատեցնող ու հուզող, զիս վերին աստիճանի ախորժելի կերպով՝ այսինքն
լրջորեն, կատարելապես, ճշմարտապես մշակող: Այն էջերուն հանդեպ կզորանային
ու կհաստատվեին բնութենապաշտ ճաշակներս, աշխարհագրական, բնապատմական
ու բնագիտական բազմազան հատվածներուն շնորհիվ, որոնցմով հանդեսը լի էր»[10]:
Այո, թեև «Բուրաստան մանկանց»-ը իր նախորդի՝ Հակոբ Պարոնյանի «Թատրոն
բարեկամ մանկանց» պարբերականի բարձունքին չհասավ, բայց և իր էջերում հրա-
պարակած առանձին գեղարվեստական արժեքներով հարստացրեց ժամանակի ման-
կապատանեկան գրականությունը: Այդպես նաև նրա փակումից հետո՝ 1889–1893-ին
հրատարակված «Ծաղիկ մանկանց» հանդեսը (տպագրիչ-հրատարակիչ՝ Նշան Պեր-
պերյան, խմբագիր՝ Միհրան Ասքանազ), որ վերջին երկու տարում լույս էր տեսնում
որպես շաբաթաթերթ, թեև որոշ դեր խաղաց արևմտահայ մանկապատանեկան գրա-
կանության ընթացիկ զարգացումներում, բայց առավելապես աչքի ընկավ գիտահան-
րամատչելի, ուսուցողական-ճանաչողական տարաբնույթ նյութերի հրապարակու-
մով, նյութեր, որոնք «իրարու քով գալով՝ պիտի կազմեն ընտանեկան մատենադարան

[9] Խ. Գ յ ո ւ լ ն ա զ ա ր յ ա ն. Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, էջ 75:
[10] «Բյուզանդիոն», 1907, № 3154, էջ 1:

մը մանուկներու և երիտասարդաց ընթերցման արժանի»,– ինչպես ծանուցում էր խմբագրությունը[11]: Հանդեսի գեղարվեստական որոշ արժեք ներկայացնող գործերի շարքում էին «Բուրաստան մանկանց»-ին նախկինում աշխատակցող Ալեքսանդր Փանոսյանի, Ռեթեոս Պերպերյանի և այլոց արձակ ու չափածո մի քանի գործերը, թարգմանական գրականության լավագույն նմուշները՝ Ալֆոնս Դոդեի «Թուզն ու ծույլը», Հանս Անդերսենի «Լուցկի վաճառող աղջիկը» պատմվածքները, Լաֆոնտենի առակները, Լամարթինի «Մանկան օրհներգ», Վիկտոր Հյուգոյի «Մահամերձ ծերունին», «Նապոլեոն» բանաստեղծությունները և եվրոպական ուրիշ հանրահայտ գրողների ստեղծագործություններ:

Այդ ամսագրերում հրապարակված գրական-գեղարվեստական նյութերին զուգահեռ, արևմտահայ մանկագրության «սրտում» թեև թույլ, բայց բաբախում էր մի ուրիշ զարկերակ՝ մերթընդմերթ հրատարակվող՝ մանկական ստեղծագործությունների ժողովածուներն ու փոքրածավալ գրքույկները (որոնց հեղինակները հիմնականում մանկավարժներ էին, մանկական պարբերականների աշխատակիցներ), վարժարանների տարբեր դասարանների սաներին հասցեագրվող ընթերցարաններն ու դասագրքերը: Դրանց էջերում գրողների երկերի հետ տեղ են գտել նաև մանուկների համար ստեղծագործած, բայց առանձին մանկական գրքեր չհրապարակած արևմտահայ նշանավոր գրողի՝ Զաբել Ասատուրի (Սիպիլի) բանաստեղծությունները, որոնք մնացել են դպրոցական դասագրքերի էջերում: Ավարտելով Կ. Պոլսի Սկյուտարի ճեմարանը և ապա երկար տարիներ դասավանդելով տարբեր վարժարաններում՝ նա գրել է մի շարք մանկավարժական հոդվածներ, դեռևս 1879-ին կազմել է «Գործնական քեր ականություն արդի աշխարհաբարի» դասագիրքը, 80-ական թվականներին չափածո և արձակ գործեր է հրապարակել «Մասիս» և «Հայրենիք» պարբերականներում, ապա հայտնի է դարձել «Աղջկա մը սիրտը» վեպով (1891), բանաստեղծությունների «Յոլքեր» ժողովածուով (1902): 80–90-ական թվականների ծնունդ են նաև նրա մանկական բանաստեղծությունները, որոնցից մի քանիսը հետագայում տեղ են գտել իր և ամուսնու՝ Հակոբ Ասատուրի կազմած «Թանգարան հատընտիր հատվածներու» ընթերցարանում: Այդ բանաստեղծությունները հիմնականում հյուսված են մանկան հոգեբանության ու մտածողության հարազատ նրբերանգներով և ճշմարիտ ներշնչանքից ծնված բնաբուխ պատկերներով, երբեմն ճանաչողական-դաստիարակչական անթաքույց բարոյախոսությամբ՝ նույն այդ մանկանը տոգորելով աշխատանքի ու արարող մարդու, բնության, կենդանական աշխարհի հանդեպ սիրո, հարգանքի զգացումներով, նրա բնավորության, արարքների մեջ դրվատելով գեղեցիկը, բարին, ազնիվը և դրանք հակադրելով չարի, արատավորի դրսևորումներին: Աշխատանքով է արարվում ամեն լավ բան մարդու կյանքում և բնության մեջ, աշխատանքով միայն դու կարող ես հարգանք ու պատիվ վաստակել. ներհուն պատկերների մեջ «թաքնված» այս խոհերը Սիպիլի «Աշխատանք» բանաստեղծությունում «բացվում» են վերջին խորհուրդ-տողերում.

Ով որ չաշխատիր, խույս կուտա պարտքե,

[11] «Ծաղիկ մանկանց», 1890, № 23, էջ 360:

Թող չսպասե, որ աշխարի զինքն հարգե [12]:

Աշխատասիրության տպավորիչ այլ «դասեր» են ավանդում նաև «Դպրոցականը և շերամը», «Ակնոցը», հայրենի բնության և կենդանական աշխարհի հանդեպ մանկան մեջ հոգատարություն են սերմանում «Մանուշակի փունջը», «Գառնուկը», «Նապաստակը», «Փիսիկը», «Բարի շունը», «Արևուն ճառագայթը», «Էմման և թռչունները» և այլ բանաստեղծություններ: Գեղեցիկ պատկերներով է մանկան հետ խոսում «Արևու ճառագայթը»: Փոքրիկը ափերով «բռնում» է արևի շողիկը, այն թղթով «փաթաթում» ու «դնում» է անոթի մեջ, որ ձմռան ցուրտ օրերին նրանով տաքանա ու հիանա փայլով: Բայց շատ է տխրում, երբ բացելով անոթը՝ իր փայփայած շողիկն այնտեղ չի գտնում:

Բանաստեղծուհու հայրենախոս «դասերն» էլ մանկան մեջ հայրենիքի հանդեպ սեր և նվիրում պատվաստելու, ազգի միասնությանը «յուր փոքրիկ ուժով» նպաստելու նպատակ են հետապնդում: Ինչպես ահա այս տողերը.

Ինչ տարբեր կրոնք ալ որ դավանիք,
Հայե՛ր, գործեցեք դուք միշտ քով քովի,
Նույն պատմությունը, նույն անցյալն ունիք,
Իրարու եղեք նեցուկ կորովի [13]:

Արևմտահայ մանկապատանեկան գրականությանը զգալի նպաստ բերեց նաև դեռևս «Բուրաստան մանկանցի» էջերից ընթերցողներին հայտնի գրող, հրապարակախոս, մանկավարժ, թարգմանիչ, «Արևելյան մամուլ» պարբերականի երկարամյա խմբագիր Մատթեոս Մամուրյանը: «Մև լեռին մարդը» հայրենասիրական-ազատասիրական զգացումներով հյուսված վեպի, մանկավարժական և այլ երկերով արդեն ճանաչում ձեռք բերած հեղինակը Զմյուռնիայում լույս ընծայելով մանկական «Մանր վեպեր ու դասեր՝ քաղված մանր տղոց համար» գիրքը՝ դրանով իսկ փորձեց ոչ միայն իր, այլև առաջավոր այլ մանկավարժների ու գրողների ուշադրությունը սևեռել նաև արևմտահայ գրականության «ամենեն ավելի զուրկ ու անխնամ մնացած» ճյուղի վրա: «Մանր տղոց» հասցեագրված պատմվածքների ու զրույցների սույն ժողովածուի նախաբանում իր նպատակը մեկնաբանելով՝ նա մտահոգությամբ գրում է, որ Եվրոպայում «երևելի գիտուններն են, որ իրենց բարձունքեն վար իջնելու չեն դժկամիր մանկանց խոսելու և անոնց սիրտն ու միտքը մշակելու համար», և նաև այդ երևույթով է պայմանավորված, որ «ուսումն չէ թե փշալից ու մշուշապատ դաշտ մը, ալ հրապուրելի պարտեզ մը կը դառնա աշակերտին առջև» [14]: Այդ նպատակի իրագործման ճանապարհին Մամուրյանը կազմում է նաև դասագիրք-ընթերցարաններ երեխաների ուսուցման առաջին չորս տարիների համար, դրանցում նույնպես զետեղում է մանկական ստեղծագործություններ, որոնք աչքի են ընկնում իրական կյանքի գեղարվեստական հետաքրքիր անդրադարձներով, պարզ ոճական հյուսվածքով, ճանաչողական-ուսուցողական նպատակալացությամբ: Այդ տեսակետից ուշագրավ են մանուկներին հասցեագրված գրականության բնույթի վերաբերյալ նրա տեսական դիտարկում-

[12] Մ ի պ ի լ, Հ. Ա ս ա տ ո ւ ր. Թանգարան հատընտիր հատվածներու, Կ. Պոլիս, 1908, էջ 45:

[13] Նույն տեղում, էջ 48:

[14] Մ. Մ ա մ ո ւ ր յ ա ն. Մանր վեպեր ու դասեր՝ քաղված մանր տղոց համար, Զմյուռնիա, 1876, էջ 8:

ները: Նա գտնում է, որ երեխաների համար ստեղծագործող գրողը պետք է «քննի, զննի մանկան բնությունը», գրելիս անպայման հաշվի առնի նրանց տարիքային յուրահատկությունները, և որպեսզի մանկական իսկական ստեղծագործություն «դուրս գա նրա գրչի տակեն», անհրաժեշտ է «շատ գիտնալ», «պարզ ու լավ ոճով բացատրել»... [15]:

Այո՛, իր իսկ առաջադրած չափանիշներով են ծնվել և՛ «Բուրաստան մանկանց» երկշաբաթաթերթում պարբերաբար հրապարակված, և՛ իր կազմած դասագրքերում ու ընթերցարաններում, և՛ հեղինակած մանկական ժողովածուներում տեղ գտած Մամուրյանի բազմաթիվ պատմվածքներն ու զրույցները: Դրանցում մանկական երկին առաջադրած գեղարվեստականության պահանջները հիմնականում բնականորեն ներհյուսվում են մանկավարժական-ուսուցողական շեշտադրումներին, որ առանձին դեպքերում ընդգծված խրատական-խորհրդատվական բնույթ են կրում: Այդպիսի դեպքերում, թվում է, թե գրողի շուրթերով ավելի շուտ «խոսում» է մանկավարժը: Մանուկ սերնդի ճշմարիտ կրթության ու դաստիարակության ջահակիր գրողի լավագույն պատմվածքներում այդ երկու շերտերը միահյուսված են, և երեխայի բնավորությունը, վարքուբարքը, շրջապատող աշխարհի ճանաչողության նրա ձգտումները, արժանավոր մարդուն և հայրենասեր քաղաքացուն բնորոշ հատկությունները բացասականի և դրականի հակադրապատկերներում երևակելը, անշուշտ, հետք է թողնում ընթերցողի հոգում: Առանձին պատմվածքների խոսուն վերնագրերն իսկ արդեն այդ են հուշում՝ «Ծնողասիրություն», «Ցորնի հասկերը», «Աշխատասեր տղա», «Արև», ապա և՝ «Անպիտան կատակ», «Բարկություն» և այլն:

Չգտելով մարդու կատարելության, երազանքի սերմեր ցանել հայ մանկանց հոգում, նրան տոգորել մարդկային մնայուն արժեքներով կյանքում ապրելու-առաջնորդվելու ոգով, դաստիարակել մայր ժողովրդի իդեալներին նվիրված սերունդ, ինչը յուրաքանչյուր, նաև իսկական մանկական գրողի նպատակն է ու դավանանքը, Մ. Մամուրյանն իր լավագույն ստեղծագործություններով մնայուն հետքեր թողեց արևմտահայ մանկական գրականության, իր խոսքերով՝ «ամենեն ավելի զուրկ ու անխնամ մնացած» ճյուղում, որոշակիորեն առաջ մղելով նրա զարգացման ընթացքը: Նրա հետ միաժամանակ՝ «Բուրաստան մանկանցի» էջերից մանկագիր «կնքված» Ալեքսանդր Փանոյանի առանձին ստեղծագործությունները նույնպես այդպիսի առաքելություն ունեցան, տեղ գտան նաև դասագրքերում և 1885-ին լույս տեսան առանձին՝ «Շողեր և ցողեր» գրքով: Երեխային հոգեհարազատ նոր ու թարմ թեմաների անդրադարձներով՝ գեղարվեստական արժեքավոր երկեր ստեղծելուն նպատակաուղղված նրա ջանքերը, ըստ էության, նկատելի պտուղներ չտվեցին, և նա չկարողացավ «հաղթել» մանկական իսկական գրականության «թշնամիներին»՝ մերկապարանոց խրատաբանությունը, պարզունակությունը, լեզվաոճական անհարթությունները, ասելիքը անհույզ, ձանձրալի նկարագրություններով ներկայացնելը և այլն: Եվ, այնուամենայնիվ, նրա մի շարք բանաստեղծություններ ժամանակին ջերմորեն են ընդունվել փոքրիկ ընթերցողների կողմից, թեև այսօր ընդամենը ճանաչողական արժեք ունեն՝ իբրև ժամանակի մանկագրության թեմատիկ-գաղափարական ինչ-ինչ շերտերի վկայագրեր:

XIX դ. 90-ական թվականներին Կ. Պոլսում Արփիար Արփիարյանի խմբագրությամբ լույս տեսնող «Հայրենիք» պարբերականում տպագրված «Աստված պապան»,

[15] Նույն տեղում, էջ 56:

«Բարի սամարացին» և այլ պատմվածքներով հանդես եկավ Արշակ Չոպանյանը՝ ապագա նշանավոր գրողը, հրապարակախոսը, թարգմանիչն ու գրաքննադատը: 1923-ին նա Փարիզում հրատարակեց «Տղու հոգիներ» խորագրով՝ իր խոսքերով «մանկական պատկերներ համախմբող« ժողովածուն, որ, նշված գործերից զատ, ընդգրկում էր նաև «Որբուկը», «Առաջին նամակը», «Անուրջը« և այլ պատմվածքներ ու բանաստեղծություններ: Դրանք արևմտահայ «դառն իրականության մեջ ապրող «հեզ մանկիկների» կյանքից ու առօրյայից «քաղած» հոգեցունց պատկերներ են՝ հյուսված «ճշմարիտ դիպվածներով»[16]:

Ահա «Որբուկը». փոքրիկ հերոսը գլխահակ «քայլում է փողոցով՝ արտասուքն աչքերին, մինչդեռ հասակակից շատ տղայք» ցնծագին նշում են Կաղանդի տոնը: Երկնքից իջած հրեշտակը, իմանալով, որ նրա վշտի պատճառը մահացած մայրն է, դիմում է տղային.

Ըսե ինձ, ով հեք մանկիկ,
Որ դառնորեն կարտասվես.
Ինչ կը բաղձա քո սրտիկ,
Ըսե, կարող եմ տալ քեզ [17]:

Իսկ տղան միայն մի բան է ուզում՝ «Մորըս համբույրն ինծի տուր…»:

Այնուամենայնիվ, 90-ական թվականների արևմտահայ մանկական գրականությունը էական առաջընթաց չունեցավ, թեև Միպիլի հետ նրա զարգացման գործում որոշակի ջանքեր ներդրեցին այլ հեղինակներ՝ Սմբատ Դավթյանը, Մարզպետը և ուրիշներ: Եթե Մարզպետը հիմնականում հայտնի է ժողովրդական-բանահյուսական թեմաների մշակումներով, նշանավոր գրողների (Գրիմ եղբայրներ, Ալեքսանդր Պուշկին, նաև՝ Ղազարոս Աղայան) ստեղծագործությունների, հատկապես հեքիաթների վերապատմումներով, որ ընդգրկել է իր «Մանկական աշխարհ» ժողովածուում, ապա Սմբատ Դավթյանը միայն ինքնուրույն ստեղծագործություններով է «մտել» այդ շրջանի մանկական գրականության մեջ: Եվ ինչպես իր նշանավոր ժամանակակիցը՝ Մատթեոս Մամուրյանը, նա էլ մանուկներին հասցեագրված ստեղծագործությունները գրել է նույն մտահոգությամբ, որ այն «գրգիռ մը ըլլա և կարող գրիչները հորդորվին մշակելու այս անտես առնված սեռը, որը թեև անփառունակ ու համեստ, սակայն ոչ նվազ օգտակար ու շահեկան է»[18]: Եվ իր նպատակն է եղել «մանուկների հասողությանը համապատասխանող ոտանավորներով ճոխացնել մեր դպրոցական մատենագրությունը»[19]: Ու եթե «դպրոցական մատենագրությունը ճոխացնելու» իր բարի ցանկությունը թեկուզ մասամբ է հաջողվել իրականացնել (առանձին գործեր «տառապում» են շատերին բնորոշ նույն թերություններով՝ խրատամոլություն, պարզունակություն, ժամանակով պարտադրված կրոնաբարոյախոսական շեշտեր և այլն), մանկական ժողովածուում ընդգրկված բանաստեղծությունների միայն մի մասն է «մանուկների հասողությանը» համապատասխանում, բայց դա էլ բավական է ժամանակի մանկագրության մայրուղում իր սեփական կածանը ունենալու համար: Ու թեև այլ հեղինակների ստեղծագործությունների հիմնաթեմաներն են դրանցում արտացոլված (հայրենիք, աշխատանք, բնություն, կենդանական աշխարհ և այլն), բայց Դավթյանը փորձել է որքան հնարավոր է աւելիքը երեխային մատուցել պարզ, դյուրին ու մատչելի հյուսվածքով, պատկերների «լեզվով»: Այս տեսակետից հատկապես հաճելի տպավորություն են թողնում բնաշխարհին ու նրա «բնակիչներին» նվիրված բանաստեղծությունները, ինչպես, ասենք, «Սարեկը».

16 Ա. Չ ո պ ա ն յ ա ն. Տղու հոգիներ, Փարիզ, 1923, էջ 4:
17 Նույն տեղում, էջ 17:
18 Ս. Դ ա վ թ յ ա ն. Փունջ, Կ. Պոլիս, 1897, էջ 3:
19 Նույն տեղում:

Սարեկը եկավ
Ու մեզի բերավ
Պայծառ արեգակ,
Ու ջերմ եղանակ:
Դաշտ ու ծառաստան
Ծաղկիլ սկսան,
Անուշ բուրմունքով
Սրտեր լցվեցան [20]:

Մի շարք բանաստեղծությունների «հերոսը» աշխատանքն է, որի հանդեպ սեր դաստիարակելը մանկագրի համար շատ կարևոր նպատակ է: Հենց «Աշխատանք» խորագրով բանաստեղծությունում, աշխատավոր մարդկանց՝ երկրագործի, դարբնի, հյուսնի, ջուլհակի «կերպարները» ներկայացնելով՝ Դավթյանը մանուկներին հորդորում է օրինակ վերցնել նրանցից՝ «միշտ աշխատեցեք սրտով գոհունակ»:

Դարասկզբին արևմտահայ տարբեր գաղթօջախներում սկսում են հրատարակվել մանկական և պատանեկան նոր պարբերականներ, որոնք այս կամ այն չափով ուշադրություն են նվիրում նաև սերնդի գրական-գեղարվեստական դաստիարակության հարցերին՝ իրենց էջերում հրապարակելով ոչ միայն ճանաչողական-ուսուցողական նյութեր, այլև՝ հայ նշանավոր գրողների առանձին ստեղծագործություններ: Այդպիսի նպատակադրումով էին առաջնորդվում Թուրքիայում լույս տեսնող «Հայկունի» (1910-1912), «Բողբոջ» (Մարզվան, 1911–1914), լոնդոնահայ պատանիների միության կողմից հրատարակվող «Պատանի» (1902–1907) և մանկապատանեկան այլ պարբերականներ: Ուշագրավ էին «Պատանի» ամսագրի էջերում պարբերաբար տպագրվող այն նյութերը, որոնց նպատակը հայ նշանավոր գրողների և ազգանվեր գործիչների կյանքի ու գործունեության օրինակով սերունդներին դաստիարակելն էր: Այդ առումով հետաքրքիր էին Գրիգոր Նարեկացուն, Ղևոնդ Ալիշանին, Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին և այլոց նվիրված զրույցները: Տպավորիչ էին նաև հայրենիքի սերը հատկապես պանդխտության մոտիվներով արտահայտող ստեղծագործությունները («Հայ որբը», «Միտքես չի ելլեր» և այլն): Ավելի ընդգրկուն շրջանակներ ուներ Մարզվանի «Հայկունի» գրական-գեղարվեստական հանդեսը, որի ճակատին գրված էին Գյոթեի «Լույս, ավելի լույս» խորհրդանշական բառերը: Այդ նշանաբանով գործող հանդեսը, այլ նյութերի հետ, հաճախ էր հրապարակում հայրենասիրական, ազգային-ազատագրական

20 Նույն տեղում, էջ 24:

գաղափարներով տոգորված ստեղծագործություններ՝ «հայ ժողովրդի դարավոր ստրկության դեմ պայքարող՝ անոր խոպան սրտերուն մեջ առաջին անգամ ազատության սերմերը ցանողներեն մին բանաստեղծ» Միքայել Նալբանդյանից[21], ապա և՝ Միսաք Մեծարենցից մինչև մարզվանցի պատանի ստեղծագործող Արշակ Թոթոնճյանի՝ ազգի հանդեպ հպարտության զգացումներով հյուսված ձոներգ.

Հայորդին եմ, Հայկա զարմին,
Զավակը քաջ հավատարիմ,
Ազգիս համար արյան գետեն
Անցնիլ կ'ըղձամ անվախորեն ...[22]:

Մարզվանում լույս տեսնող և Թուրքիայի հայաբնակ բոլոր վայրերում տարածվող «Բողբոջ» մանկապատանեկան ամսագիրը, որ հրատարակվեց Հայոց ցեղասպանությանը նախորդող երեք տարիներին, ավելի շատ իր էջերում տեղ էր տալիս սկսնակ շնորհալի ստեղծագործողներին, հատկապես «քաջալերելով գավառի պզտիկները», այն հավատով, որ նրանք «վաղը հայ գրականության փառքը պիտի կազմեն»[23]: «Հայկունի» ամսագիրը, խրախուսելով «հայ արհեստավոր պատանի դասակարգին առջև ասպարեզ մը բանալուն» և «զարգացած երիտասարդներ ըլլալուն» նպատակաուղղված նոր պարբերականի ծնունդը, նշում է. «Ինքնին գնահատելի ձեռնարկ մը անշուշտ, որ կոչված է որոշ դեր մը կատարել դպրոցականներու կյանքին մեջ: Կհուսանք, թե դպրոցականներ և սկսնակներ պիտի բոլորվին անոր շուրջը»[24]: Իրական կյանքի ճշմարիտ արտացոլման գաղափարներով ներշնչված «գործել՝ երազելէ ավելի», «գործ՝ ոչ թե խոսք» նշանաբաններով առաջնորդվող «բողբոջականները» պատանի ընթերցողներից և ստեղծագործողներից պահանջում էին արցունքի, տրտունջի փոխարեն «ժպիտի երգը թրթռացնել», որովհետև դա է «կյանքի հրամայական պահանջը» և որ «գրել, ճշմարիտ գրականության հետնիլ՝ այս է ամեն դպրոցականի, ամեն զարգացականի պարտքը, վասնզի գրիչը՝ հրաշագործ ձեռքի մոգական այդ ամենաճարտար գավազանն է, որ կարող պիտի ըլլա հին կարգերու և հին ունակություններու ժանգոտ շղթաները խորտակել, և այդպես բանալ վաղվան պայծառ արշալույսը»[25]:

Հիշենք, թե ինչ ծանր ժամանակներ էին Արևմտահայաստանում, երբ ժողովուրդը դեռևս պայքարով ազատություն ձեռք բերելու՝ «վաղվան պայծառ արշալույսի» հույսը չկորցրած, ավա՜ղ, շուտով սրտում խրված պիտի տեսներ Մեծ եղեռնի մահաբեր սուրը... Եվ այդ ժամանակներում այս փոքրիկ, բայց խիզախ «Բողբոջը» անկումային խոհերով հյուսված մի բանաստեղծության հեղինակին այսպիսի պատգամ է հղում.

Թե ես ըլլայի երիտասարդ քեզ նման,
Փոխան լացի, կը գոռայի՝ «Մայր, երգե,

21 *«Հայկունի», 1912, № 13, էջ 214:*
22 *«Հայկունի», 1912, № 7, էջ 101:*
23 *«Բողբոջ», 1911, № 4, էջ 60:*
24 *«Հայկունի», 1911, № 6, էջ 95:*
25 *«Բողբոջ», 1911, № 1, էջ 7:*

Հայ քաջ տղուն ռազմի երգը աննման,
Ես չեմ վախնար մարտե, մահե ու վերքե...»[26]:

Ամսագրի էջերում տպագրված շատ բանաստեղծությունների ոգեղեն տարերքը հայրենասիրական-ազատասիրական գաղափարներն էին («Սասուն», «Ազատորդի...» քայլերգ, «Հայունիի աղոթքը» և այլն): Սակայն այդպես էլ «Բողբոջը» չհասցրեց ավելի հասուն տնկի դառնալ, տեսնել «վաղվան պայծառ արշալույսը»:

Օդի մեջ արդեն զգացվում էր Հայոց մեծ եղեռնի չարագուշակ շունչը...

ОЧЕРК ИСТОРИИ ЗАПАДНО-АРМЯНСКОЙ ДЕТСКО-ЮНОШЕСКОЙ ЛИТЕРАТУРЫ

ЛЮДВИГ КАРАПЕТЯН

Резюме

Западно-армянская детско-юношеская литература является неотъемлемой частью армянской детско-юношеской литературы. Она развивалась в двух

взаимопереплетающихся направлениях: исконно детской литературы и вовлеченных в орбиту детско-юношеской литературы прозаических и стихотворных сочинений. Произведения Мкртыча Пешикташляна, Гевонда Алишана, Арпиара Арпиаряна, Петроса Дуряна, Григора Зограба, Акопа Пароняна, Мисака Мецаренца и других выдающихся западно-армянских писателей адресованы также детям младшего и старшего возраста и, естественно, уже давно и прочно вошли в рамки детско-юношеской литературы. Особенно значительный след в развитии исконно детской литературы оставил Акоп Паронян, который опубликовал в редактируемых им журналах "Театр" и "Театр — друг детей" целый ряд интересных бесед и рассказов. В дело образования и национально-патриотического воспитания армянских детей и юношества значительный вклад своими произведениями для детей внесли также Сипил (Забел Асатур), Матевос Мамурян, Аршак Чопанян, Смбат Давтян и другие.

SKETCHES OF THE HISTORY OF WESTERN ARMENIAN LITERATURE FOR CHILDREN AND YOUTH

LYUDVIG KARAPETYAN

Summary

Western Armenian literature for children and youth is the inseparable part of Armenian literature for children and youth. It developed in two joint ways: mere children's works, and poetic and prose works in the frame of literature for children and youth. Many works of Western Armenian famous writers Mkrtich Peshiktashlyan, Ghevond Alishan, Arpiar Arpiaryan, Petros Douryan, Grigor Zohrab, Hakob Paronyan, Misak Metsarents and others are addressed to junior and senior children, too and have naturally been included into the frame of literature for children and youth for a long time. Hakob Paronyan particularly left significant track in the sphere of literature mainly for children. He published a lot of interesting stories and tales in "Tatron" ("Theatre") and "Tatron Barekam Mankants" ("Theatre is Children's Friend") magazines edited by him. Sipil (Zabel Asatur), Matteos Mamouryan, Arshak Chopanyan, Smbat Davtyan and others also had their contribution to the education of Armenian children and youth and in their national-patriotic upbringing with their works.

26 *«Բողբոջ», 1911, № 8, էջ 128:*

ԴԱՍԱԿԱՆ ԽՈՀԵՐ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Սա մի առանձնահատուկ խնդիր և գործ է միաժամանակ: Գրքի ձևավորումը մեծահասակների համար, եթե ունի խոշոր նշանակություն, ապա մանկան համար դա վճռական է: Ամենավաղ հասակի մանկան համար գիրքը նրա խաղալիքներից մեկն է և հատուկ խաղալիք է: Նայած ի՞նչ գիրք է, ի՞նչպես ձևավորված, նայած ի՞նչ արտաքին և ներքին ունի, ի՞նչ պատկերներ կան մեջը: Ախր ամենավաղ հասակում երեխան գիրքը չի կարդում. նրա համար կարդում են: Եթե պատկերազարդ չէ, ապա ուրեմն կողմնակիորեն լրացուցիչ նկարագրություններ և բացատրություններ են տալիս մանկանը, որ բռնում է պատկերի տեղ: Իսկ եթե պատկերներ կան, ապա ցույց են տալիս կարդացածի հերոսները, նրանց գործերի հետաքրքրական մոմենտները և մանուկը ծանոթանալով դրանց հետ, սկսում է մասնակցել նրանց կյանքին, ապրել նրանց հետ: Այստեղ, ուրեմն, «ընթերցողը» կապված է առավելապես գրքի պատկերների հետ: Պատկերները մանկան գրքի տեքստն են ամենից առաջ և գերազանցապես: Ձևական տեքստը նրա համար կողմնակի և օժանդակ նյութ է. դա համարժեք է մանկան զբաղեցնող մեծահասակի կամ մեծ երեխայի բացատրական խոսքերին: Դուք կարող եք գրքի տեքստը ամեն տեսակ փոխել, հարմարեցնել, լցնել ամեն տեսակ նոր լրացումներով: Մանուկը գործ չունի այդ տեքստի հետ. նրա ուշքն ու միտքը պատկերի հետ է:

Եվ ահա որքան մեզ համար մեծ կարևորություն ունեն մանկական գրքի տեքստը, նրա իդեոլոգիական-դաստիարակչական խնդիրները, մենք չենք կարող գրքի այդ տեքստի նպատակահարմար կազմելուց բացի, չմտահոգվել նրա ձևավորման խնդրով: Հենց այդ ձևավորումն է, որ

«Լուր-դա-լուրը»: Հովիվը շրջանակի մեջ է՝ արտը, ոչխարների հոտը չկա: Տված է սանդուղքը՝ վրան մի այծ և մի ոչխարի կեսը: «Շունն ու կատուն»: Ֆիգուրաները այնպես են իրար մոտ դրված, որ դժվար է ջոկել նրանց իրարից: Շունը գնում է պատվեր տալու՝ պարզ է: Պատվեր տալը՝ ոչինչ: Սակայն կատուների աչքերը, գլուխները նման են ուրիշ առարկաների, կռիվը չի արտահայտվում:

«Անբախտ վաճառականների» (ձևավորումը Երիցյանի) փուշը պարզ է, բայց մնացածը պետք է ջանք թափես հասկանալու: Չղջիկը շան է նման: Չի երևում ճայի նավը, ղեկը վարող ճայը շրջապատված է ինչ-որ առարկաներով, որ իբրև տակառներ են և ապրանք: Մինարեներ ու քաղաք կան նկարված նույն էջի այլ բաժնում, որ ավելորդ են: Մի խոսքով ոչ բնորոշ մոմենտները, ոչ պարզ ձևով: Ալիքները ստիլիզացված են:

Ընդհանրապես ժպիտն է պակասում, օդը, ծիծաղը, շրջապատը, միջավայրը մեր նկարներում: Կարելի՞ է եզրակացնել, որ այս առաջ է գալիս անձեռնհասությունից: Ամենևին ոչ: Ե՛վ Երիցյանը և՛ Շավարշը, և՛ մյուսներն ունեն հնարավորություն՝ ստեղծելու ավելի լավորակ գործեր: Բայց երբեմն գործի վրա նայվում է սխալ տեսանկյունից: Նկարազարդումը համարվում է երկրորդական, «մի թեթև զարդարող», տեքստը քիչ-միչ լրացնող գործ: Այդ պատճառով նկարիչը «մի կերպ վրայից անցնում է»: Երբեմն էլ, թերևս, շատ է «չարչարվում» նկարիչը, բայց այդ եռանդը կորչում է երկրորդական, ոչ բնորոշ, ոչ նպատակահարմար ձեռնարկման մեջ: Լավ է բոլորովին պատկեր չունենա գիրքը, քան ունենա սահմանափակ, անթռիչք, պարզունակ և սխալ պատկեր, որ սպանում է մանկան երևակայությունը:

Ինչ խոսք, որ միայն նկարազարդման հանգամանքով չի վերջանում գրքի ձևավորման խնդիրը: Գրքի մնացած մասերի ձևավորումը նույնպես կարևոր է: Գիրքն իր արտաքինով պիտի ժպտա մանկանն ու կանչի դեպի իրեն: Լավ թուղթն ու մաքուր տպագրությունը պիտի տան մաքրության և գեղեցկության ճաշակ: Մանուկը պետք է իսկույն ընկերանա գրքի հետ, որովհետև դա նրա իրային դաստիարակն է, որ իսկույն ընտելացնում է մանկանը և կրթում:

Մեծապես կշահեին մեր նկարիչները՝ հետևելով Մոսկվայում տպագրվող մանկական գրքի ձևավորմանը: Սոցիալիստական ռեալիզմի նկարների պարզության, մանկականացման կողմից շատ մեծ գործ է կատարվում այնտեղ:

ՀՈՒՇԻԿՔ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

ՉԱՐԼՍ ԴԻԿԿԵՆՍ

ՕԼԻՎԵՐ ՏՎԻՍՏ

1894 թ. Ալեքսանդրապոլում (Գևորգ Սանոյանցի տպարան), բնագրի հրապարակումից (1838 թ.) ավելի քան հինգ տասնամյակ անց, լույս է տեսնում «Օլիվեր Թվիստ» վեպի հայերեն թարգմանությունը: Դիքենսին վերաբերող հայերեն ուսումնասիրություններում այս հրապարակությունը սովորաբար չի հիշատակվում: Մինչդեռ պետք է կարևորվեր առնվազն երկու պատճառով: Թարգմանությունն արժեքավոր է իր վաղեմիությամբ, քանի որ Դիքենսի վեպի մեզ հայտնի ամենավաղ հայերեն թարգմանական մեկնությունն է (բնագրային թարգմանություն այն դժվար է համարել. աղբյուր տեքստ է ծառայել Լ. Շելգունովայի ռուսերեն սեղմավեպը) և հրապարակվել է ավելի վաղ, քան Փ. Վարդանյանի (Թիֆլիս, Կովկասի հայոց հրատ. ընկ., 1912), Ա. Բազարյանի (Հայպետհրատ, 1958) և ռուսերենից Հ. Հարությունյանի թարգմանությունները (Արևիկ, 1988): Երկրորդ, այն մանուկներին հասցեագրված հայ թարգմանական գրականության ամենավաղ նմուշներից է: Ստորև բերում ենք վերափոխված ուղղագրությամբ մի հատված վեպի հայերեն պարբերակից, ցավով հաշտվելով այն մտքի հետ, որ թարգմանչի խորհրդավոր անձը՝ Ս. մնում է չբացահայտված ...

Խմբագրի կողմից

ՕԼԻՎԵՐԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Լոնդոնից ոչ հեռու, մի փոքրիկ քաղաքի փողոցում գտան մի երիտասարդ կին անզգա դրության մեջ: Նրան տարան բանվորական տունը, որտեղ ծնավ մի երեխա: Անբախտ ջահել մայրը մեռավ՝ հազիվ կարողանալով համբուրել իր նորածին մանկանը: Հանգուցյալի ազգանունը ոչ ոք չգիտեր, և բանվորական տան վարչությունը, մկրտելով նրան Օլիվեր Տվիստ անունով, ուղարկեց դաստիարակության մի ագարակ, ուր և նա, ուրիշ երեխաների հետ միասին, կես քաղցած, կես կուշտ պահվեցավ մինչև ինը տարեկան հասակը:

Երբ լրացավ նրա ինը տարին, ագարակ եկավ բանվորական տան սպասավոր միստր Բամբլը և նրան հետը տարավ: Բանվորական տան վարչությունը, անդադար աշխատելով երեխաներին շատակերության չսովորեցնել, այնքան քչացրեց նրանց բաժինը, որ երեխաները քաղցածությունից պատրաստ էին ամենավճռական քայլեր անելու: Եվ ահա, մի անգամ Օլիվերը վճռեց խնդրել սուպի երկրորդ բաժին: Դրա համար նրան իսկույն փակեցին մութ սենյակում, իսկ տան դռներին մի հայտարարություն կպցրին, թե ով ցանկանա Օլիվեր Տվիստ մանուկին վերցնել մի որևէ արհեստանոց, վարձատրություն կստանա հինգ ֆունտ ստեռլինգ:

Շուտով բանվորական տունն եկավ դագաղագործ միստր Սոուերբերին և հայտնեց, որ իրեն հարկավոր է մի երեխա: Պայմանը շուտով կապվեցավ և փոքրիկ, խղճուկ Օլիվերը գնաց իր նոր տիրոջ հետ:

— Օհ, ինչ փոքր ու վտիտ է. ոսկորները համարվում են, — կռչեց դագաղագործի կինը Օլիվերին տեսնելիս: — Դե, կորի՛ր խոհանոց. ցա՛ծ, ցա՛ծ իջիր սանդուղքներից:

Նա ցած իջեց երեխային դիք սանդուղքով դեպի քարաշեն ներքնատունը, որ խոհանոցի տեղ էր ծառայում:

— Շարլո՛տա, ձայն տվեց միստրիս Սոուերբերին կեղտոտ խոհարարուհուն, — տո՛ւր այդ տղային մսի մնացորդները: Անշուշտ նա այնքան երես առած չի լինի, որ մերժե այդ ուտելիքը:

Միս բառը լսելիս Օլիվերի աչքերը փայլեցին ուրախությունից, և սիրտը սկսեց բաբախել հաճույքից: Տանտիկինը զարմացած դիտում էր, թե ինչպիսի ագահությամբ կլանում էր նա իր առաջ ձգած փշրանքները:

— Թե վերջացրիր, ե՛կ գնանք, — ասաց նա՝ վերցնելով ճարպոտած ու աղտոտ լապտերը, և Օլիվերին վեր տարավ:

— Ահա՛ քո մահճակալը՝ գրասեղանի հետևում: Կարծեմ՝ չես վախենում դագաղների մեջ քնելուց. ասենք՝ վախենաս-չվախենաս, այդ միևնույն է. մենք ուրիշ տեղ չունինք:

Տանտիկնոջ դուրս գնալուց հետո Օլիվերը լապտերը դրեց սեղանի վրա և սարսափով նայեց չորս կողմը: Կիսաշեն դագաղը, որ կանգնած էր խանութի մեջտեղը՝ պատվանդանի վրա, այնպես մռայլ տեսք ուներ, որ Օլիվերի սիրտը ճաքեց երկյուղից: Նա շտապով պառկեց իր նեղլիկ ներքնակի վրա և զարթնեց միայն առավոտյան, երբ դուռը ուժով բախեցին: Երբ Օլիվերը սկսեց ցած թողնել շղթան, որ դուռը բաց անե, դրսից մի անծանոթ ձայն գոռաց նրա վրա:

— Պետք է բանա՞ս, թե՞ ոչ. երևի դու նորեկ ես:

— Այո, տե՛ր, — պատասխանեց Օլիվերը՝ պտտեցնելով բանալին:

— Քանի՞ տարեկան ես:

— Տասը:

— Կաց, մի ներս մտնեմ, քո հոգին կհանեմ, ա՛յ կոտեմսես, բանվորական տան լակոտ, — ասաց ձայնը և ապա սկսեց շվացնել:

Օլիվերն այնքան հաճախ էր ենթարկվում այս տեսակ փորձանքների, որ ամենևին չէր կասկածում, թե կծեծեն իրեն, և դողդոջուն ձեռներով բացեց դուռը:

Դռան հանդեպ, թմբի վրա նստել էր մի տղա, համարյա պատանի և ուտում էր մի կտոր հաց՝ վրան յուղ քսած:

— Դո՞ւք էիք դուռը բախողը: Երևի ձեզ դագաղ է հարկավոր, տե՛ր, միամտությամբ հարցրեց Օլիվերը:

— Դու մի՞թե չես իմանում, լակո՛տ, թե ով եմ ես, — շարունակեց պատանին:

— Չեմ իմանում, տե՛ր, — պատասխանեց Օլիվերը:

— Ես վարպետ Նոյ Քլեյփոլն եմ, և դու այժմ իմ իշխանության տակն ես: Վերցրո՛ւ փեղկերը, ծո՛յլ անպիտան:

Եվ այս ասելով՝ Նոյը մի հարված տվեց Օլիվերին ու հպարտ մտավ խանութ: Նա մի տգեղ պատանի էր՝ կարմիր քթով ու պեպենոտ երեսով:

Օլիվերը ուզեց բարձրացնել փեղկերը, բայց նրանք այնքան ծանր էին, որ չկարողացավ տեղից վերցնել և կոտրեց մի ապակի, որի համար հետո տանտիկինը մի լավ քոթակեց նրան: Նոյը մի փոքր խղճի եկավ և օգնեց նրան փեղկերը բաց տանելու:

Տանտիկնոջից քոթակ ուտելուց հետո Օլիվերը Նոյի հետևից գնաց խոհանոց նախաճաշելու: Շարլոտան ձգեց նրա առաջ չոր հացի կտորտանք և մի բաժակ թեյ և հրամայեց նստել արկղի վրա՝ խոհանոցի սառն անկյունում: Օլիվերը, ցրտից դողալով, նստեց արկղի վրա ամբողջ ժամանակը ծաղրի առարկա լինելով Շարլոտայի և Նոյի համար:

Օլիվերը դագաղագործի մոտ մնաց մոտ երեք շաբաթ: Տերը, տեսնելով նրա հեզ և տխրատես դեմքը, մտածեց, որ նա կարող է լավ օգնականի դեր կատարել մանուկների թաղման արարողության ծիսակատարության ժամանակ: Այսպես վճռելով՝ դագաղագործը սկսեց նրան իր հետ տանել, երբ գնում էր ննջեցյալի չափը վերցնելու, որպեսզի այսպիսով վարժեցնի երեխային տխուր տեսարանների: Նա սիրեց իր նոր աշակերտին, բայց դրա հակառակ, նրան տանել չէին կարողանում տանտիկինը և խոհարարուհին, իսկ Նոյը նախանձից դրդված՝ օր չէր տալիս նրան և շարունակ մեծարում էր հարվածներով:

Մեկ անգամ Նոյն ու Օլիվերը ցած իջան ճաշելու: Շարլոտան մի ինչ-որ բանի համար գնաց վերև՝ տանտիկնոջ մոտ, իսկ Նոյը սկսեց զայրացնել Օլիվերին՝ ուզենալով լացացնել նրան: Երկար ժամանակ Նոյը զանազան «քաղցր խոսքեր» էր ասում, բայց նա բավական համդարտությամբ ականջ էր դնում ու շարունակում էր ուտել ոչխարենու մնացորդները:

— Բանվորական տան լակո՛տ, — մայրդ կենդանի՞ է:

— Նա մեռած է, — պատասխանեց Օլիվերը, — ինձ հետ մի խոսեք նրա մասին:



Ժան-Շարլ Լևասյոր (1734–1816), Դաս սովորող պատանին, ՀԱՊ

Օլիվերը լցվեց, նրա շրթունքները սկսեցին ուռչել և շնչառությունը ծանրացավ: Այս բանից ուրախացած՝ Նոյը շարունակեց:

— Իսկ ինչի՞ց մեռավ նա, լակո՛տ:

— Սրտի պայթումից, ինչպես պատմել են ինձ պառավ հիվանդապահները: Բայց բավական է, ավելի լավ կլինի՝ չխոսենք նրա մասին:

— Չխոսե՞նք, — կրկնեց Նոյը: — Իսկ իմ կարծիքով՝ շատ լավ է խոսելը: Մեծարտություն մի անի, ա՛յ լակոտ: Մի՞թե չգիտես, որ քո մայրը էր իսկական ... դե, ամենաետին կինը:

— Ի՞նչ ասացիր, — հարցրեց Օլիվերը՝ արագ դարձնելով աչքերը նրա վրա:

— Ամենավատ, ինչքան ասես վատ կին, լակոտ, — կրկնեց Նոյը, — ու դեռ լավ է, որ մեռավ, եթե ոչ աքսոր կուղարկվեր կամ կախաղան կբարձրանար:

Կատաղությունից կարմրած Օլիվերը վեր ցատկեց, դեն շպրտեց սեղանը և աթոռը և, բռնելով Նոյի կոկորդից, անասելի ուժով ցնցեց նրան ու փռեց հատակի վրա:

Երեխան ուղղվեց: Նրա աչքերը վառվեցին: Նա բոլորովին փոխվեց: Նա չկարողացավ տանել իր մոր հիշատակին եղած անարգանքները:

Նոյի աղաղակին վրա հասան Շարլոտան և տանտիկինը. նրանք սկսեցին ծեծել անբախտ երեխային և այնքան ծեծեցին, որ ուժից ընկան: Որովհետև տանտերը տանը չէր, վճռվեցավ Նոյին ուղարկել բանվորական տունը և այնտեղից բերել սպասավոր միստր Բամբլին:

— Խելքը կորցրած չլինի սա, — զարմացմամբ հարցրեց տանտիկինը սպասավորին:

— Ո՛չ, նա խելքը չի կորցրել, — ասաց խորիմաստ եղանակով միստր Բամբլը, այլ դուք կերակրեցիք նրան մսով և նրա մեջ բնավորություն ստեղծեցիք: Եթե նրան շարունակ չլպուր ուտեցնեիք՝ այդպիսի բան երբեք չէր պատահի: Հիմա փակեցե՛ք նրան ամբողջ օրերով նկուղի մեջ և հետո կերակրեցեք չլպուրով:

Թարգմանեց՝ Ս.

ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ

ՄԻՆԻՈՆ՝ ԵՐԱԺՇՏԻ ԱՂՋԻԿԸ

Պատմվածք Ֆոն Ռոդենից

Աթաբեկ Խնկոյանի «Մինիոն՝ երաժշտի աղջիկը» թարգմանական վիպակը հրատարակվել է Թիֆլիսում 1916 թ.: Թեև շապիկին գրված է՝ թարգմանություն Ֆոն Ռոդենից, սակայն Խնկոյանի գրքույկը ենթադրաբար Սոֆյա Մակարովայի «Миньона, дочь музыканта» (1884) երկի թարգմանությունն է, որն էլ իր հերթին գերմանացի մանկագիր Էմմի ֆոն Ռոդենի Das Musikantenkind (1883 թ.) արեղծագործության մոտիվներով շարադրված մի գեղեցիկ վիպակ է: Սոֆյա Մակարովան (Վեպրիցկայա) սանկտպետերբուրգյան դպրոցների ռուսուցչուհի էր՝ ցարական բանակի գեներալի կին: Մանուկներին հասցեագրված ավելի քան երեք տասնյակ ժողովածուների հեղինակ է, որոնց զգալի մասը հիմնված են այլ՝ գլխավորապես գերմանական գրականությունից վերցված արեղծագործությունների վրա: Տպագրվել է «Семейные вечера» և այլ մանկական պարբերականներում, եղել «Задушевное слово» մանկական հանդեսի խմբագիրը: Խնկոյանի շնորհալի թարգմանությունը չի ընդգրկված հեղինակի՝ մեզ հայտնի ժողովածուներից և ոչ մեկում: Տպագրում ենք վիպակից մի սեղմ հատված՝ վերափոխված ուղղագրությամբ՝ հուսալով փոքր ինչ ուղղել այս չարդարացված բաց թողումը:

Խմբագրի կողմից

I

ՉԱՐ ԿԻՆԸ

Նոյեմբերի ցուրտ օրերից մեկն էր: Փչում էր սաստիկ քամին: Ինչե՞ր չէր անում այդ չարաճճին: Մեկի հովանոցն էր խլում ձեռքից, մյուսի գլխարկն էր թռցնում: Գլխարկը գլորվում էր, տերն էլ հետևից վազում էր: Հրապարակի վրա, քաթանի ծածկույթի տակ, կուչ էր եկել խնձոր ծախող կինը: Հանկարծ քամին մի ուժեղ թափով քշեց ծածկույթը: Կինը խնձորի զամբյուղը ձեռքին վազեց ծածկույթի հետևից, սայթաքեց, վայր ընկավ, խնձորները շուռ եկան, գլորվեցին սառած ճամփի վրա: Երեխաները դեսից դենից վրա թափվեցին և հավի նման վեր քաղեցին խնձորները: Այդտեղ նրանք վիճեցին, իրար հրհրեցին, բոթբոթեցին և իրենք էլ սայթաքեցին, գլորվեցին գետնին:

Լուսամուտում նստած հացթուխը, չիբուխը բերնին տեսնելով այդ պատկերը, բարձր քրքջում էր: Այդ ժամանակ մի մարդ լուսամուտը բախեց:

— Ա՛յ կին, լուսամուտը բաց արա, տես՝ ով է:

Լուսամուտի առաջ կանգնած էր մի փոքրիկ լղարիկ մարդուկ, որ ողորմելի տեսք ուներ: Դա ջութակահար էր, որ ապրում էր նրանց տան հետևի ֆլիգելում: Նա երկու բուլկի էր ուզում, նա դողում էր ցրտից, իսկ երբ ձեռները մեկնեց բուլկիներին, խեղճին բռնեց մի այնպիսի սաստիկ հազ, որ ստիպված էր հենվել պատին:

Հացթուխի կինը, կատարելապես անտարբեր, նայում էր թշվառին: Նա արդեն հինգ տարի էր, որ ապրում էր նրանց տանը, և կինը ընտելացել էր նրա ողորմելի տեսքին, որ այս անգամ ավելի թշվառ երևաց: Ինչպես երևում էր, խեղճի մահը մոտեցել էր: Կինը բուլկիները լուսամուտից դուրս դրեց և շտապով լուսամուտը շխկալեն վրա դրեց:

Հացթուխը, լսելով երաժշտի հազը, դուրս եկավ, մոտեցավ հիվանդին, ձեռքը դրեց նրա ուսին և քաղցրությամբ ասաց.

— Նե՛րս մտեք սենյակ, տաքացե՛ք: Այդպես հազ ունեցողը չպետք է այդպես բարակ հագած դուրս գա: Դուք ամրակազմ մարդ չեք:

Երաժիշտը հլու, ինչպես մի մանուկ, հետևեց տան տիրոջը: Այդ այցելությունը իսկի էլ չուրախացրեց տանտիրուհուն: Նրա ինչ գործն էր, թե մի ուրիշը վիշտ ու ցավ ունի: Նա իր կյանքում իսկի մեկին բարիք չէր արել. նա մտածում էր միմիայն իր և իր երեխաների մասին, նամանավանդ իր սիրելի, իր մեծ որդի Բրունոյի մասին, որին պաշտում էր և երես էր տալիս: Բոլոր աղքատներին նա մուրացկաններ էր անվանում: «Այսօր եթե մեկին մի բան տաս, վաղը հարյուրներով կթափվեն», — ասում էր նա:

— Մի բաժակ գինի խմեցեք, — սիրով առաջարկեց հացթուխը, — դա ձեզ կկազդուրի:

Ի՞նչ ես անում, — բարձր ձայնով ասավ կինը, — դա Բրունոյի գինին է: Երբ որ երեխի դասերը շատ են լինում, մի բաժակ տալիս եմ, որ ուժերը կազդուրվեն. — ասավ ու մոտեցավ մարդուն, որ նրա ձեռքից խլի:

— Ես այդ շատ լավ եմ հասկանում, բայց մի՞թե դա պակաս օգտավետ կլինի հիվանդ մարդու համար: Մնացած գինին տարե՛ք ձեզ հետ, տանը կխմեք: Երբ որ այս գինին վերջանա, ես նորը կուղարկեմ:

Հացթուխը զոռով շիշը հանձնեց երաժշտին, որ երկչոտ հայացքով նայում էր բարկացած տանտիրուհու վրա: Այդ բոլորը չէր: Վերցրեց մի թղթե տոպրակ, մեջը մի քանի հաց դրեց և վրեն էլ չամչով մի բլիթ ու ասաց.

Սա էլ տարե՛ք ձեր աղջկան: Նա էլ հիվանդոտ տեսք ունի:

— Իհա՛րկե, զարմանալի չէ, որ նա այդպես է, — ծաղրելով ասավ կինը: — Երաժշտությունից դեռ ոչ ոք չի հարստացել: Ձեր տանը առավոտից մինչև երեկո երգ ու խաղ է: Դուք իմացե՛ք, որ ձեր վերևի հարկում կոշկակարը գանգատավոր է ձեզանից: Նա ասում է, որ Նոր տարուց հետո կթողնի իր բնակարանը, եթե շարունակվի այդ երաժշտությունը:

— Մի քի՛չ էլ համբերեցեք տիկին, — աղաչում էր երաժիշտը, — մնացած վարձը կվճարեմ: Հենց որ մի քիչ ուղղվել եմ, շատ կաշխատեմ: Մյուս շաբաթ արդեն ես նվագախմբի մեջ պետք է մտնեմ: Տեսուչը արդեն ինձ առաջուց երեք մարկ փող է վճարել:

Եվ նա գրպանից փողը հանեց:

— Դրանք դատարկ-դատարկ խոսքեր են, — խստությամբ պատասխանեց տանտիրուհին:

— Ո՛չ, ո՛չ, ճիշտ եմ ասում, միայն ի սեր Աստծու, բնակարանից ինձ դուրս մի՛ անեք: Եթե կոշկակարը չի ուզում լսել իմ աղջկա վարժությունները, լավ իմ աղջիկը չի էլ նվագի: Իմ փոքրիկ Մինիոնը ... ո՛չ: Բայց նա կվշտանա ... ջութակը նրա միակ ուրախությունն է:

— Լա՛վ, լա՛վ, հանգստացե՛ք, կինս այդ չէր ուզում ասել: Ձեզ դուրս անելու համար խոսք չի կարող լինել: Աստված ձեզ հետ, հանգիստ տո՛ւն գնացեք:

Հացթուխը առաջնորդեց թշվառին մինչև դուռը: Ջութակահարը շնորհակալ եղավ և գնաց: Դուրսը դարձյալ ոռնում էր մրրիկը: Հացթուխի կինը կատաղությամբ նայում էր նրա հետևից և կատվին, որ ընկել էր ոտների տակը, ոտի մի հարվածով շպրտեց դեպի դուռը: Չար կինը մեկի վրա պիտի թափեր իր բարկությունը:

II
ԵՐԱԺԻՇՏՆ ՈՒ ԻՐ ԱՂՋԻԿԸ

Կամաց բարձրանում էր ջութակահարը իր բնակարանի սանդուղքներով: Նրա շունչը կտրվում էր. քանի անգամ կանգնեց շունչ քաշելու: Նա սաստիկ ծակոցներ էր զգում կողքում: Բայց երբ նրա ականջին հասավ ջութակի ձայնը, նա մոռացավ իր ցավերը, կանգ առավ և սկսեց լսել:

— Ինչպե՜ս լավ է նվագում, հրաշք. ի՜նչ սիրտ ու հոգի: Իմ թանկագի՛ն Մինիոն, դու մեծ երաժշտուհի կդառնաս, — փսփսաց նա, և նրա դժգույն այտերը կարմրին տվեցին, իսկ աչքերը ուրախությունից փայլեցին:

Նա կամաց բաց արեց դուռը և հենց որ տեսավ աղջկան նվագելիս, սիրտը թրթռաց:

Շատ լավ նվագեցիր այս կտորը, — ընդհատեց հայրը նվագածությունը և նստեց անկողնու ծայրին:



Հ. Ի. Սեմիրադսկի, Լեհ երեխաներ, ՀԱՊ

— Ախ հայրի՛կ, դո՞ւ ես, — բացականչեց փոքրիկը: Էր նվագով այնպես էր տարվել, որ չէր նկատել հոր գալը: — Դու լսեցիր, հա՞: Է, ի՞նչ, հիմա ավելի լա՞վ դուրս եկավ, քան թե առավոտյան:

Հայրը լուռ, գլխով հավանություն տվեց, գրկեց աղջկան և տխուր նայում էր նրան և մտքումը ափսոսում էր, որ շուտով այևս բոլորովին նվագելու չէ:

— Ապա նայի՛ր, տես՝ ինչ եմ բերել քեզ համար, — ասավ հայրն ու հանեց բլիթը:

— Ի՞նչ հրաշալի բլիթ է, և ինչքա՜ն չամիչ կա վրան: Գիտե՞ս, հայրիկ, կեսը քեզ կհասնի: Ե՛կ, սուրճ պատրաստենք:

— Այսօր դու պետք է մենակ տանտիկնություն անես, ես շատ հոգնել եմ:

— Խե՜ղճ հայրիկ, — ասում էր նա տխրությամբ՝ նայելով հոր նիհար այտերին, — հանգիստ նստի՛ր, ես սուրճը կեփեմ: Դու, ինչպես երևում է, էլի սաստիկ հազացել ես: Սպասի՛ր, երբ որ ես մեծանամ, շատ փող կաշխատեմ,

և այն ժամանակ մեծ տան մեջ կապրենք, ոսկե կառքով ման կգանք, ամեն օր լավ ճաշ կուտենանք: Ինչ լավ կլինի, չէ՞, հայրիկ:

— Աղջիկը գնաց կրակ անելու, հայրը պառկեց անկողնու վրա և աչքերը ծածկեց:

— Ինձ վատ եմ զգում ... գինի՛ տուր ... Այ այնտեղ է ... հացթուխը տվեց ... Բաժակը բե՛ր:

Մինիոնը բաժակով գինին տվեց հորը: Խեղճի ձեռքն այնպես սաստիկ էր դողում, որ չկարողացավ բաժակը պահել: Աղջիկը վախեցած նայում էր նրա վրա:

— Հայրի՛կ, ի՞նչ պատահեց: Դու այնպես գունատ ես, ինչպես մայրիկը մեռնելիս: Հայրի՛կ, ի սեր Աստծու, միայն թե մի՛ մեռնիր:

— Հանգստացի՛ր աղջիկս, լաց մի՛ լինի, — ասում էր նա դժվարությամբ: — Մոտեցրո՛ւ գինին շրթունքներիս ... այ, այդպես ...

Նա մի երկու անգամ կում արավ, բայց հազիվ կարողացավ կուլ տալ:

— Հիմա, այ կլավանամ: Նստի՛ր ինձ մոտ, իմ թանկագի՛ն Մինիոն: Միշտ խոնարհ և խելոք աղջիկ եղիր:

Աղջիկը սեղմվեց հոր կրծքին և քնքշորեն նայում էր նրա վրա:

— Խոստանում եմ քեզ, հայրի՛կ, որ սրանից հետո միշտ խոնարհ ու հնազանդ կլինեմ, — ասում էր Մինիոնը՝ հեկեկալով, գրկած հորը: — Եվ կաշխատեմ լավ նվագել և իմ առաջադիմությունով կուրախացնեմ քեզ:

— Ոչ ... երբ ես գնացած կլինեմ մայրիկիդ մոտ ... այն ժամանակ էլ լավ եղիր ... առանց ինձ: Մենք միշտ քեզ հետ կլինենք, թեև դու մեզ չես տեսնի:

Նա ձեռքը դրեց աղջկա գլխին, ասես թե օրհնում էր նրան: Աչքերը հառած էին դեպի երկինք, իսկ շրթունքները աղոթում էին թանկագին մանկան համար, որին անտեր–անտիրական էր թողնելու:

— Ոչ, դու ինձանից չես հեռանա, հայրի՛կ, իմ անգի՛ն հայրիկ, — կանչում էր աղջիկը դողդոջուն ձայնով:

Հոր դեմքը գունատվել էր և մի տեսակ կերպարանափոխվել էր:

— Նվագի՛ր իմ սիրած տաղը, Մինիո՛ն, շո՛ւտ, քանի ուշ չէ, — հազիվ լսելի ձայնով շշնջաց երաժիշտը, բայց Մինիոնը լսեց:

Նա վերցրեց ջութակը և հոր սիրած երգի հրաշալի ձայները հոսում էին իրար հետևից: Երբ որ վերջին ձայնը կտրվեց, հայրը խփեց աչքերը. լիակատար հանգստի և խաղաղության արտահայտությունը հանգչում էր նրա գունատ դեմքի վրա: Աղջիկը կամաց տեղը դրեց ջութակը, որ հորը չզարթնեցնի, և ոտների պճեղների վրա մոտեցավ մահճակալին: Ձեռքերը խաչած, աչքերը հոր վրա գցած, նստել էր փոքրիկ անկողնու ծայրին:

— Հիմա, երբ որ զարթնի, առողջացած կլինի, — մտածում էր աղջիկը:

Բայց ավաղ: Նա էլ չզարթնեց: Աշխարհի հոգսերից, դառն ցավերից ազատված, փոխվեց մի ավելի լավ աշխարհ՝ թողնելով իր թանկագին աղջկան բոլորովին մենակ այս լայն աշխարհում:

ԱՅԲԲԵՆԱՐԱՆՆԵՐ

Եվ առանց տատանվելու նա գնեց մի այբբենարան և մի օրվա մեջ մետաքսյա կտորից կարեց մի գեղեցիկ «հաբքյա» (երկբերան տոպրակ), որի մեջ պիտի պահեի դպրոցական պիտույքներս:

Շիրվանզադե «Կյանքի բովից»

Հայոց այբբենարանների և ընթերցարանների պատկառելի ցանկում առանձնանում են աշխատասիրությունները՝ ստեղծված հայ երևելի մտավորականների կողմից: Այդպիսին են Խաչատուր Աբովյանի «Նախաշավիղը», Հովհաննես Թումանյանի և Ստեփան Լիսիցյանի «Լուսաբերը», Ղազարոս Աղայանի «Ոստանն մայրենի լեզվի»: Այբբենարանը, երբ արդեն չի գործածվում որպես ուսումնական նյութ, ենթարկվում է հետաքրքիր փոխակերպման՝ դասագրքից վերածվելով լեզվամշակութային ուրույն արժեքի: Հարյուրավոր հայկական այբբենարաններ այսօր այդ կարգավիճակում են: «Հասկերի» այս համարում ներկայացնում ենք Ռափայել Պատկանյանի «Այբբենարան հնչական ձևով» դասագիրքը, որ հրատարակվել է 1884 թ., Վիեննայում: Բնական է՝ այն այլևս որպես այբբենարան կամ ընթերցարան չի կարող ծառայել. այլ է այսօրվա աշակերտը, այլ է արդի գրական հայերենը: Պատկանյանի այբբենարանը բացառիկ հուշարձան է հայոց լեզվի պատմության, աշակերտի հանդեպ Ուսուցչի խնամոտ սիրո: Ցրելով ժամանակի մշուշը՝ «Այբբենարանը» պարզում է հեռավոր տարիների աշակերտի դիմանկարը, հայ պատանի, որին ավելի հասկանալի է «քոմուրը» քան «ծուխը», «կառանդաշը» քան «մատիտը», «կռիֆելը» քան «կավիճը»… «Հասկերի» այս համարով սկսում ենք հայերեն այբբենարանների ու ընթերցարանների ամբողջական կամ հատվածաբար հրատարակումը՝ հրավիրելով ընթերցողի, առաջին հերթին՝ բանասեր ընթերցողի, ուշադրությունն այս հետաքրքիր լեզվամշակութային երևույթի վրա: Սկորև բերում ենք նաև հայոց այբբե-

նարանների մատենագիտական սեղմ ցանկ՝ ենթադրելով ժամանակի ընթացքում լրացնել այն: Մատենագիտությունն ընդգրկում է հայկական առաջին այբբենարանից մինչև նախորդ դարի 40-ական թթ. ընկած ժամանակահատվածը:

Խմբագրի կողմից

ԱՅԲԲԵՆԱՐԲԱՆ

ՀՆՉԱԿԱՆ ՈՃՈՎ

ՅՕՐԻՆԵՑ

Ն· ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԵՍՈՒՉ

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՎԻԵՆՆԱ

1884

Дозволено Цензурой. СПБургъ. 23. Октября 1881 г.

Druck von W. Heinrich in Wien. — Selbstverlag des Verfassers.

ԳԻՏԵԼԻՔ

Առաջիկայ այբբենարանս բաժանուած է 12 դաս, որն վարժապետը, նայելով իւր աշակերտներու զարգացմանը, կարող է բաժանել որքան եւ բարի համարէ:

Իւրաքանչիւր դասին վարժապետը պիտի սովորեցնէ աշակերտներուն 4 կամ 5 տառի (գրի) ոչ անունը կամ ձայնը, այլ նորա հնչիւնը*, եւ ապա պիտի տպաւորէ նոցա յիշողութեան մէջ նորա ձեւը:

Մանկավարժական ամենօրեայ փորձով մենք նկատել ենք, որ հայկական ընթերցանութեան ասպարում յառաջ գնալու պատճառները մեծաւորապէս այս պարագայքն են, նախ՝

Գրերի իրար հետ ունեցած արտաքին նմանութիւնը, ինչպէս՝ ա եւ ս, ո եւ ս, ղ եւ դ, ջ եւ չ եւայլն:

Երկրորդ՝ ւ եւ յ տառերի ներկայութիւնը մեր ուղղագրութեան մէջ, որոնք բառերի մէջ զանազան տեղ գրուած, բոլորովին զանազան ձայն եւ հնչիւն ունին. եւ

Երրորդ՝ շատ բառերի մէջ գտնուած 3, 4 մինչեւ անգամ 5 եւ 6** միմեանց մօտ բաղաձայնները, որոնք չափազանց կը դժուարացնեն աշակերտաց վարժ եւ պարզ ընթերցանութիւնը, մենք ըստ կարելւոյն դիւրացուցինք:

* Հայոց տառերի կամ գրերի անունները այսպէս են՝ այբ, բեն, գիմ, դա, եչ, եւայլն. տառերի ձայներն են՝ բէ, գէ, դէ, չէ, ղէ, եւայլն. իսկ հնչիւն կ'ունենան միայն բաղաձայն տառերը, ուր մինչեւ անգամ ը՛ը հազիւ կը լսուի. զոր օր. բը, գը, դը, թը, վը, եւայլն:

** Զոր օրինակ՝ արտաքութիւն, սկզբնական, քաղքենի, քրթմնջիւն եւայլն:

4

Առաջին դասերի մէջ տեղ տեղ դրած են ոչ բառեր, այլ աննշանակ վանկեր. ամեն փորձառու հմուտ հայ մանկավարժ կը հասկանայ, որ մենք ակամայ այդպէս վարուեցանք. նախ որ՝ հայ ժողովրդի գիտցած եւ գործածած շատ հայկական անաղճատ բառերը հազար հատէն աւելի չեն, թէեւ բառարանների մէջ ունեցածները եօթանասուն հազարէն աւելի է եւ այդ չնչին քանակէն (հազարէն) անհնար էր մեզ հեղնելու եւ կարդալու համար ընտրել հարկաւոր բառերը. եւ երկրորդ՝ տղայոց համար անհասկանալի բ–ն–փ–ֆ––ը–ն–ք–ները, հ–ա––ջ–ները, ջ–լ–ֆ–ները, եւայլն, ինչո՞վ աւելի օգուտ պիտի բերեն գործին, քանթէ մեր ակամայ ինկեր առկած տը տը, տը տը, -- -- վանկերը: Այստեղ գլխաւոր բանը գիրերն եւ շատ կարդալ սովորելուն է։

Ոյժս հասածի չափ աշխատեցայ այս դժուարութիւններն հեռացնելու, եւ յուսամ որ բաւականին թեթեւութիւն տուի թէ վարժապետին եւ թէ աշակերտին, երբ միայն առաջինը ինչպէս որ հարկն է, բերանէ ձեռնարկիս ոճը եւ հասկացնէ աշակերտին։

Ռ. Պ.

5

Երկաթագիր:

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ
Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ
